Universitäts- und Landesbibliothek Bonn

Kġerikosac', Sarkaiagac' ew Kahanayic' ew Orhnut'ean Abeġayic' ew Taloy Zgaiazan

Eǰmiacin, 1876

urn:nbn:de:hbz:5:1-61712

Visual Library

Goussen
4°
2919

4°- ~~Goussen 2919~~
~~40~~

Goussen 4° 2919

ՄԱՇՏՈՑ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԿՂԵՐԻԿՈՍԱՑ, ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ

ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱԲԵՂԱՅԻՑ,

ԵՒ ՏԱԼՈՅ ԶԳԱՒԱՌՔԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

1876 – ՌՅԻԵ։

2919

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ Տ ԳԷՈՐԳԵԱՅ Դ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ԿԵՐՈՒԳԼԱՒՈՐԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ·

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ կարգք եւ կանոնք աստուածպաշտութեան, մանաւանդ որք ի կատարումն եւ ի մատակարարութիւն շնորհապարգեւ խորհրդոց են սահմանեալք, սքանչելի իմն ունին վայելչութիւն՝ ցանկալի առ հասարակ ամենայն որդւոց հարազատից սրբոյ Լուսաւորչին մերոյ, եւ յաչս օտարաց անգամ պատկառելիք եւ յաւէտ պանծալիք. շատ է զի ըստ կարգացն կանոնելոյ՝ մեծաւ խնամով եւ ճշգրտութեամբ առնուցուն զկատարումն: Եւ թէպէտ չիք երկբայութիւն՝ զի կարգաղրութիւնքն այնոքիկ եւ որք ի նոցին սակի, յանցանել բազմադարեան ժամանակաց ոչ սակաւ առեալ են փոփոխութիւն յանհմտութենէ գրչաց, որք ի փոխագրել անդ զեկեղեցական մատեանսն զայնոսիկ՝ ոչ միայն տառից ինչ եւ մասնկանց դառնին արարեալ փոփոխումն, այլեւ բառից եւ իմաստից բանիցն յաճախակի գործեալ այլայլութիւն, այսու ամենայնիւ հանդերձ՝ գոհանալ պարտիմք ապաքէն զմերոցն քաջարթուն հովուաց եւ հովուապետաց, որք ոչ միայն ի բարգաւաճ ժամանակս մերոյ աշխարհին, այլ եւ յետ ցրուելոյ ազգիս ի զանազան ծագս տիեզերաց, փութոյ պնդութեամբ ճգնեցան եւ ճգնին ըստ կարի ի վայելչականումն պահպանել բարեզարդութեան զծէսսն աւանդեալս մեզ ի նախնի Հայրապետացն մերոց եւ ի բազմահմուտ վարդապետաց, ցանդ ծեռնպահ լինելով յորպիսեաց եւ իցէ նորածեւութեանց:

Այսմ ամենայնի քաջիկ խելամուտ դոլով աստուածարեալ Հայրապետս մեր Գէորգ Դ, Վեհափառ Կաթուղիկոս, ներհուն իբնէ եւ սիրող եւ նախանձայոյզ բարեկարգութեան եւ պայծառութեան եկեղեցական կարգաց եւ արարողութեանց, ցանկանալով ցանկայր անդստին ի սկզբանէ՝ յակն արկեալ վերստին զբազմաթիւ զրչագիրս Մատենադարանի Մայր Աթոռոյս, եւ զընտրելագոյնս ի Մաշտոցացն ընդ միմեանս համեմատեալ, ուղղագոյն եւս ինչ հրատարակել Մաշտոց կամ Գիրս ծեռնադրութեան՝ յստակագոյն տպագրութեամբ քան զերեւեալսն մինչեւ ցայժմ յազգիս մերում: Քանզի կրկին լեալ են տպագրութիւնք այսր մատենի. մին առանձինն փոքրագիր՝ մակագրեալ, «Գիրք աստիճան տալոյ դպրաց եւ սարկաւագաց եւ քահանայից, եւ զաւազան տալոյ վարդապետացն» տպագրեալ ի մերում Թուականիս ՌՄԱ. որ է ամ Տեառն 1752, հրամանաւ Գէորգայ Արքեպիսկոպոսի պատրիարքին Կոստանդնուպօլսոյ, եւ միւսն ի ծիսարանի անդ Մեծ Մաշտոց կոչեցելոյ, յորում բովանդակին զոգցես ամենայն կանոնք եւ կարգք արարողութեանց Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ, յամի Փրկչին 1807 (ՌՄԾԶ) հրամանաւ պատրիարքին Յովհաննու Արքեպիսկոպոսի, երկոքին եւս ի նմին մայրաքաղաքի հրատարակեալք. առաջինն ոչ սակաւ թերութիւնս ունելով, թերեւս առ նուազութեան զրչագիր օրինակաց ի ծեռս տպագրողացն, իսկ երկրորդն յստակագոյն, բայց եւ այն ոչ զերծ ի պէսպէս թերութեանց, զորոց չէ տեղւոյս յերկարել: Սակայն երկոցունցն եւս սպառեալ էին տպագիր օրինակք, եւ խնդրողացն մեծաւ դժուարութեամբ յաջողէր ի ծեռս բերել զնոսին:

Եւ ահա յետ զփոքր Մաշտոցն յառաջեան պէտս քահանայից հրատարակելոյ հրամանաւ մերոյ Հայրապետիս ի Մայր Աթոռոյ աստի յամին 1872, յաջողեցաւ ի Տեառնէ Նորին Վեհափառութեանն եւ յայս եւս բուռն հարկանել վաստակ մեծ եւ ցանկալի, յորում ամփոփեցան ոչ միայն կարգքն եւ կանոնք ժեռնադրութեան Կղերիկոսաց եւ Սարկաւագաց եւ Քահանայից, եւ օրհնութեան Աբեղայից, այլ եւ կանոնք տալոյ զՎարդապետականն զաւազան մասնաւոր եւ Ծայրագոյն Իշխանութեանց: Ա. այս ի մի վայր ժողովեալ Վեհափառ Հայրապետի աւելի քան զեօթանասուն եւ հինգ գրչագիր Մաշտոցս ժեռնադրութեան, եւ կոչեալ առ ինքն Եպիսկոպոսունս եւ Վարդապետս եւ զպիրս ի միաբանից սրբոյ Աթոռոյս, եւ ինքնին անձամբ ի զլուխ կացեալ նոցին աշխատասիրութեանցն, իւրով իսկ ժեռամբ եւ անխոնջ մտադրութեամբ նշանակեալ յարդարեաց զուղղագոյն թուեցեալսն ի բանից անտի եւ ի բառից բազմաթիւ գրչագրացն, եւ պատրաստեալ զառաջիկայս ընտիր օրինակ՝ հրամայեաց մատուցանել ի տպագրութիւն:

Սոյն իրի արժան եւ իրաւ է ապաքէն մանկանց Հայաստանեայցս Եկեղեցւոյ այժմուս եւ ապագայից՝ շնորհապարտս եւ յայսմ ճանաչել զանձինս Մեծի Հայրապետիս, եւ միանգամայն յիւրեանց կողմանէն նախանձաւորս լինել անստերիւր եւ անթերի պահպանութեան կարգացն որ ի սմա, ակն ածելով եւ օրինակ բարի առնլով առ այս եւ յայնմանէ, զի եթէ ինքն իսկ Հայրապետս մեր ոչ ի դէպ՝ ոչ պատշաճ վարկաւ զառ ի նախնեաց կարգեալսն փոփոխել իւրովն իշխանութեամբ՝ մինչեւ ազգայնոյ ընդհանուր եկեղեցական իրիք հանդերձեալ ժողովոյ մանրակրկիտ քննութեամբ սահմանեալ իցէ փոխել կամ զեղչել ինչ ինչ նկատելիս ի բանս նզովից, այլ շատ համարեցաւ դուն ուրեք աննշանս ինչ եւեթ յաւելուլ յիւրմէն ի խրատսն պարզաբանութիւնս հիմնեալս ի լաւագոյն օրինակս գրչագրաց, եւ ի հաստատուն աւանդութիւնս, ո՛րչափ եւս առաւել չէ օրէն իշխել ուժեր ի մեծացն կամ ի փոքունց՝ ժեռնամուխ լինել յայնպիսի ինչ փոփոխումն կամաւոր: Քանզի յայտ իսկ է երկիւղածացն Աստուծոյ եւ սիրողաց եկեղեցական բարեկարգութեան, զի արարողութիւնքն եւ ծէսք ցանկ իմն եւ պատուար են ոգւոյ ճշմարիտ աստուածպաշտութեան, եւ անսուտ է հոգեշունչ բարբառ Խմաստնոյն՝ թէ Որ քակէ զցանկ այսպիսեաց զեղեցիկ եւ չքնաղ աւանդութեանց, հարցէ զնա մոլորութեանն օձ դարանակալ, եւ մահացուսցէ զայնպիսի թշնամին Եկեղեցւոյ սրբոյ: Իսկ որ արտաքնոցս կարգաց անսայթաք կատարման իցէ նախանձախնդիր, դիտասցէ աներկմիտ յուսով՝ զի յահեղ ատենի Գլխոյն Եկեղեցւոյ՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընկալցի զանթառամ փառացն պսակ՝ երանաւէտ բարբառոյ նորին արժանաւորելով, թէ «Ընդ՝ Ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն Տեառն քո»: Նմա փառք եւ զոհութիւն ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԿԻԶԲՆ ԱՌՏԻՃԱՆԱՑ

ԿՂԵՐԻԿՈՍԱՑ

ՈՐՔ ԵՆ

ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒՔ ԵՒ ԱՒԵԼԱԾՈՒՔ.

Օ՜գենո՜ Եպիսկոպոսն, և ամենեքեան քոյ ի՜ւրաքանչիւր կարգի և ասպիճանի և Դասիրդն ասեն Շարական ԴՁ, Այսօր ուրախացեալ ցնծան երկնից բազմութիւնքն։ Եպիսկոպոսն նախ ինչ ասէ՝ Սեղանոյն, և երգելով զշարականն ելանէն արքատոյ դռանն եկեղեցւոյն. ապէ Եպիսկոպոսն յաջոյ, և ամենայն ահիպ եկեղեցւոյն կանգնին յայսկոյս և յայնկոյս։

Եր՜ասէն Սաղմոս ՃԻԱ։

Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս խտուն։

Եր՜ասցեն զ՚նոսա՜նչիւնն սա՜ Եպիսկոպոսն, և Սարկաւագն փարողէ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ՚ կեցո՚ եւ ողորմեա։

Ո՜հիպ եկեղեցւոյն ասէն. Տէր ողորմեա։

Սարկաւագն փարողէ։

Միաբան ամենեքեան աղաչեսցուք զմարդասէրն Աստուած զՏէր մեր Յիսուս Քրիստոս վասն ծառայիս իւրոյ (այս անուն), որ փութացաւ սիրով հատանել զՀերս գագաթան իւրոյ, որպէս զի տացէ սմա զՀոգին սուրբ, եւ բացցէ զաչս սորա ամենայն հոգեւոր իմաստութեամբ անցանելով ընդ երկրաւորս, եւ հասանել ի լոյս քաղցրութեան երկնային ողորմութեանն։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ եւ ողորմեսցի։ (Ի յոյն) Օրհնեա՜ Տէր։

Եր՜ Եպիսկոպոսն ասէ զաղօթս։

Տէր Աստուած մեր, նայեա՛ յերկրպագութիւնս մեր, և պահպանեա զծառայս քո (այս անուն), և զամենեսեան որք են ի կարգ պաշտամանս՝ հաստատեա ի նոյն քոյին օգնականութեամբդ. որպէս զի անարատ սպասաւորեսցեն ի քո սուրբ եկեղեցի, և հասանիցեն հանդերձեալ բարեացդ։ Շնորհօք Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

(Եր՜ Սարկ. Աստուծոյ երկրպագեսցուք)։

Ո՛վ Տէր, որ միայն սուրբ ես, և ոչ գոյ քեզ չափ, մի՛ հայիր ի մեղս մեր, այլ անցո զցասումն ի ծառայէս քումմէ, և թափեա՛ ի սմանէ զախտս մեղաց, և հանգո՛ ի վերայ սորա զշնորհս քո, և պահեա յամենայն՚ փորձանաց. քանզի յընդարձակ քա-

զաքավարութենէն յոր մինչև ցայժմ շրջէր՝ եմուտ ընդ լծով ծառայութեան քո, և էառ ըզ շնորհս քո։ Արդ որպէս և մեք տամք սմա զնմանութիւն քոյին պսակիդ, այսպէս և դու յառաջեցո զսա՝ առ ի լինել արժանի պսակի քո յերկնային յարկսդ, և ծագեա ի հոգի սորա զհոգի իմաստութեան ի ձեռըն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ որում վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ։

Ապա ասէն Սաղմոս ԺԵ, ղեկեն ի լման։

Տէր բաժին ժառանգութեան իմոյ։

Պահեա զիս Աստուած իմ զի ես ի քեզ։

Դարձեալ Սաղմոս ԻԳ։

Տեառն է երկիր լրիւ իւրով՝ աշխարհ։

Նա ինքն է՝ ի վերայ ծովու հիմունս։

Ի՛ յասել դպրոց զՍաղմոս՝ Եպիսկոպոսն հապանէ զՀէրս գագաղեան նո-էրբելոյն խաղանման և ասէ։

Ի հատանել հերացդ՝ հատցի ի քէն երկրաւոր ցանկութիւն աշխարհիս, ամէն։

Ապա պայ զՍաղմոսարան ի յեռն և ասէ։

Ունկն դիր և տես։ զոր եղանակես բերանով, հաւատասցես և սրտիւ, և որոց հաւատաս սրտիւ՝ զնոսին և գործով ցուցցես։

Ի՛ ասէն Շարական Դկ։

Որ կոչեցեր զհեռացեալսն ի հարսա։

Որ գերագոյն քան զբնութիւն չար։

Որ ի վիրապն անդնդային ջաղեր։

Ապա ասէն Սաղմոս ՁԳ։

Ընարեցի ես ընդ աղբ գալ իսան Աս։

Որպէս սիրելի են յարկք քո Տէր զո։

Ի՛ Եպիսկոպոսն պայ զա՛-էն ի յեռն նո-էրբելոյն և ասէ։

Ա՛ռ քեզ հրաման լինել աւեալածու ի տան Տեառն և ի գաւիթս Աստուծոյ։

Ի՛ ասէն Շարական Գկ։

Լոյս ի լուսոյ ծնունդ եւ ծագումն։

Սուրբդ սրբոց էից մաքրութիւն, որ։

Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ։

Աղբիւր կենաց բղխեալ յեղեմայ սու։

Յեռ պայոբեն զգեն՝ հանդերձն կէրբեկոոնեան, և լինի ընդ հրամանաս ասագ Սարկաագն, որ դասապիարանէ զնա։

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ԱՍՏԻՃԱՆԻ

ԳՌՆԱՊԱՆԻՆ

Սարկաագն խարոզէ։

Աղաչեսցուք բոլորով սրտիւ զԱստուած ամենակալ զՀայր մեր, որպէս զի տացէ զօրութիւն ծառայիս իւրոյ (այս անուն)՝ զոր հրաւիրեաց ի պաշտօն գռնապանութեան, ուղիղ կալով ի կարգի իւրում ի տուէ եւ ի գիշերի, յերեկօրեայ՝ ի վաղորդայն եւ ի հասարակ աւուր, եւ յիշելով զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ եկն եւ թագաւորեաց յաւիտեանս յաւիտենից, կեցուսցէ եւ ողորմեսցի։

(Ի՛ յայն) Օրհնեա՜ Տէր։

Ի՛ Եպիսկոպոսն ասէ զաղօթս։

Դու Տէր Աստուած Հայր սուրբ, որ կարօղդ ես յաւիտեան, ըստ ամենայն սրբոց քոց պահպանեա՛ զծառայս քո (այս անուն)՝

մեալ զօրութեամբ ի պաշտօն կարգեալ գործոյ իւրոյ ի սուրբ եկեղեցիս։ Եւ տուր սմա զվարձս հաւատոյ պաշտման իւրոյ ի գործս յայս՝ յարքայութեանդ երկնից։ Եւ քեզ փառք յաւիտեանս, ամէն։

Եւ դնէ Եպիսկոպոսն ձեռանալն ի յԵռն Նուէրելոյն և ասէ։

Այսպէս արա, որպէս թէ համարս ունիս տալ Աստուծոյ վասն այսր գործոյ։ և որ լինին ի ներքոյ փականաց բանալեացս զոր տուաք ի քեզ՝ պատրաստ կաց, և աղօթեա ի բանալ և ի փակել զդրունս եկեղեցւոյ։

Եւ ցՍարկաւագն ասէ. Ուստ զսա։

Եւ Սարկաւագն առնու ձեռանալն ի յԵռաց Նուէրելոյն և դանէ ընդ դռան եկեղեցւոյն, և աջէ ձեռանալն ի փակն, և ցոյցանէ ձեռանալն և ցփակելն։

Եւ ասէն Սաղմոս ՃԺԷ։

Խոստովան եղերուք Տեառն՝ զի բարի։

Եւ յասէն Բացէք ինձ զդրունս՝ ասէն Շարական Դ։

Զողորմութեան քո զդուռն բաց մեզ։

Ի պատրաստեալ քո օթեւանս սրբոց։

Ի նստիլ քո յատենի դատաւորաց։

Եւ ծգեալ ի նէրքս, և կացեալ առ ոչառաջ եկեղեցւոյն՝ նոցին Եպիսկոպոսն. յաղոթս և կապարեն զայս կարգ։

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Սարկաւագն աջէ ընդ-ելեալն առաջի Եպիսկոպոսին, և ասէ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա։

Ո՞ւր եկեղեցւոյն ասէն ընկ՝, Տէր ողորմ։

Սարկաւագն փարողէ։

Աղաչեսցուք զԱստուած զՀայրն ամենեցուն վասն ծառայիս իւրոյ (այս անուն)՝ որ առնու զկարգ ընթերցողութեան՝ որպէս զի յայտնեսցէ սմա զօրէնս իւր՝ եւ զօրացուսցէ զսա՝ ընթերցմամբ յայտնել ամենեցուն որ գան ի սուրբ եկեղեցի՝ եւ տացէ սմա՝ զոր միանգամ ընթեռնու շրթամբք՝ գործով կատարել ի փառս անուան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ եւ ողորմեսցի։

Եւ Եպիսկոպոսն ասէ ղաղօթս։

Դու Տէր և իշխան Հայր սուրբ՝ որ ունիս տէրութիւն յաւիտեան ի վերայ աշխարհի՝ հե՛ղ զշնորհս քո ի վերայ ծառայիս քո (այս անուն)՝ որ եկն ի պաշտօն ընթերցողութեան։ տուր զգաստութիւն սմա յամենայն ժամ յօրէնս քո՝ միշտ խորհել ի սէր պատուիրանաց քոց՝ և կալ ի պաշտօնս յոր ձեռնադրի։ Զգաստութեամբ խօսել զբանս քո ի սուրբ եկեղեցի՝ և առնել սուրբ գործով՝ և մաքուր սրտիւ խորհրդակցել ժողովրդեան քում՝ և ուղղել զսուրբ զեկեղեցի յունկնդրութիւն պա-

տուիրանաց քոց՝ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Որում վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղա՝ տայ զԳէրս առաքելական ի Յեռանդ-էրելոյն առելով։

Ա՛ռ զգիրս զայս և լեր աստուածային բանին պատմող և տեղեկացիր նոցին։ Եթէ ուղիղ մտօք և հոգւով զգործս քո պաշտես, կալցես բաժին ընդ ժողովս սրբոց և սիրողացն Աստուծոյ։ և դու եղբա՛յր՝ որ լինիս ընթերցող ի տան Աստուծոյ՝ զգործս քո զգուշութեամբ կատարեա։ Եւ Աստուած՝ որ առատն է, տացէ քեզ զողորմութեան իւրոյ զշնորհս ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Որդւոյ իւրոյ, և զօրութեամբ սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ առեն Շարական Ա։

Տէր որ զգթութիւնդ քո զառատ հե։
Որ ի ձեռն սոցա սփռեցան շնորհք հո։
Որ սոքօք լուսաւորեցեր մկրտութեա։
Եւ հաստատեալ է մեզ եկեղեցւոյն՝ նոպէ Եպիսկոպոսն յաղնոս, և կոպուրեն զայս կարգ։

ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳ

ԵՐԴՄՆԵՑՈՒՑԻՆ

Սարկաւագն ածէ զնուէրեալն առաջի Եպիսկոպոսին և ասէ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեա։
Ո՛նոր եկեղեցւոյն առեն ընկ՝ Տէր ողոր։
Սարկաւագն։

Եղբա՛ր՛ք պատուականք՝ բոլորով սրբութիւ աղաչեսցուք զմարդասէրն Աստուած զՀայրն ամենակալ՝ տալ իմաստութիւն ծառայիս իւրոյ (այս անուն) ի գործ երդմնեցուցչութեան։ Որպէս զի կարող լիցի Հոգւով սրբով հալածել զդեւս իմարմնոց եւ ի հոգւոց մարդկան՝ եւ երդմամբ հրաժարեցուցանել եւ բռնադատութեամբ իւրով արտաքս ձգել զնոսա ի մարմնոց եւ ի հոգւոց մարդկան։ Շնորհօք Միածնի Որդւոյ իւրոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ կեցուսցէ եւ ողորմեսցի։

(Ի յայն) Օրհնեա՛ Տէր։

Եւ Եպիսկոպոսն ասէ զաղօթս։

Դու Տէր Հայր ամենասուրբ և անբաւ Աստուած՝ տուր զօրութիւն ծառայիս քո (այս անուն) ի գործ՝ յոր ձեռնադրի՝ երդմնեցուցչութեան։ որպէս զի զօրացի բարբառով բերանոյ հալածել զպիղծ ոգիսն և զաղտեղիս, և բռնադատութեամբ արտաքս ձգել զնոսա ի մարմնոց և ի հոգւոց մարդկան, և լինել ճշմարիտ առողջարար և բժիշկ նկեղեցւոյ քում սրբոյ ի ձեռն սուրբ շնորհացդ՝ զոր առատ

տաս յերկնային պարգևացդ, Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Ե՝ Եպիսկոպոսն պայ է նա զՄաղոցն, յորմէ գրեալ է երգմն՝ հրաժարման որ է կանոնի Ղրպոնիեան, և ասէ.

Ընկալ և ամիոփեա զգրեալս սատ ի միտս քո. քանզի տամ քեզ հրաման գնել զձեռն քո ի վերայ հիւանդաց, և որք գան ի մկրտութիւն՝ հրաժարեցուցանել. և գոհութեամբ փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի այժմ և միշտ։

Ե՝ ասէն Շարական ԲՁ.

Փառաւորեալդ փառօք Երրորդու։ Արեամբ նահատակացն բերկրեալ, սո։ Ի սրբութեան քում բարեբանեմք զդ։ Հաստատեա՝ ի մէնջ Տէր նշանաւ խաչի։

Ե՝ հառէալ առաջի դասին՝ նոպի Ե՝ պիսկոպոսն յանոյ, և կապարէն ղայս կարգ։

ԶՈՐՐՈՐԴ ԿԱՐԳ

ԶՍՀՂՆԿԱԼԻՆ

Սարկաւագն ածէ զնո-էրեալն առաջի Եպիսկոպոսին և խարդէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեա։

Ո՝-ինչ էկեղեցոյն ասէն էնէ՝, Տէր ողորմ։

Սարկաւագն.

Եղբարք սիրեցեալք, աղաչեսցուք զԱստուած զամենակարող Հայրն, զի տացէ ծառայիս իւրոյ (այս անուն) ձեռնադրութեամբս առնուլ զչորրորդ աստիճանի շնորհս՝ առ ի լուցանել զլամպս, եւ լինել լոյս հոգւով՝ օգնականութեամբն Աստուծոյ Հօր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. կեցուսցէ եւ ողորմեսցի։

Սարկաւագն է յայն, Օրհնեա՝ Տէր։

Եպիսկոպոսն ասէ զաղօթս,

Տէր սուրբ Հայր ամենակալ և Աստուած յաւիտենական, որ զմիածին Որդիդ քո զՏէր մեր Յիսուս Քրիստոս առաքեցեր յերկիր. որ և առաքեաց զաշակերտսն իւր՝ և լոյս անուանեաց զնոսա աշխարհի. որք զամենայն տիեզերս լուսաւորեցին, և խորտակեցին զչար դևսն զսպանողս մարդկան։ Որ խնդրեցեր յՈրդւոյ քումմէ մտանել ի փառս խաչիւն. որ կամեցար զբղխումն արեան կայլակել ի կողէ նորա, որով եղև փրկութիւն մարդկան. դու զայս տնօրինեցեր։ Օրհնեա և այժմ զծառայս քո (այս անուն) ի գործ Ս՝ահրնկալութեան՝ լուցանել զլամպս և զկանթեղս ի սուրբ եկեղեցիս և պատրաստել զնշխար և զգինի պատարագի ի սուրբ սեղանս յայս։ Տէր Աստուած, լուսաւորեա զհոգիս և զմիտս ժառանգաւորացս այսոցիկ ի ճառագայթից սուրբ Հոգւոյդ՝ հաւատով սպասաւորել ի քո սուրբ եկեղեցի, շնորհօք Տեառն մերոյ Յի-

սուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Ամենակարող Աստուած, աղբիւր լուսոյ և բաշխող բարութեան, դու ի ձեռն Քրիստոսի Որդւոյ քո լուսաւորեցեր զաշխարհս, և խորհրդով չարչարանաց նորին գնեալ ազատեցեր զմեզ յանիծից մեղաց և մահու։ Արդ օրհնեա զծառայս քո (պոպ անուն) որ ձեռնադրութեամբ բրս կնքի յանուն Հայրընկալութեան։ Խնդրեմք ի քումմէ բարերարութենէդ, պահպանեա զսա և զսիրտ սորա յերկիւղ քո, և լուսաւորեա լուսով իմաստութեան քոյ որպէս զի մնասցէ ի պաշտօնս յայս՝ քո օգնականութեամբդ, և ժամանեսցէ անանց կենացն, շնորհօք Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։ ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ։

Սարկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր։

Եպիսկոպոսն,

Օրհնութիւն և փառք Հօր։

Պոպ առնու զպաշտանակն վերեալ լապտերն և պայ է յԵռս Դուէրբէլոյն ասելով.

Ընկալ զաշտանակ լապտերիս, և ունիս իշխանութիւն լուցանել զՋահս և զկանթեղս ի սուրբ եկեղեցիս։

Նոյնպէս պայ է նա զղեշն կամ զքաժակամանն դարձեալ՝ ասելով.

Առ զբաժակամանս զայս՝ ընուլ ի սա զգինի ի սպասս խորհրդոյն։

Եր առնէն Շարական Գկ.

Լուսով աստուածութեան քո Քրիստ։

Պոպ Սուրբ խաչիւս։ Պահպանեա. և Հայր մեր։

Եր գիպելի է, զի Ջահընկալին պաշտօնէ զՋահս և զկանթեղս եկեղեցւոյն վերել, ըստ սրբոյ պապարտգին նշիւք գորգեալ և զքաժակն պապրտապել։ Լաւ մինչև ցայս վայր կարէ ամուսնանալ՝ որ զսրբոյ ապրիճանն ունի, եւ է հինգերորդէն և անդր ոչ կարէ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՐԳ

ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳԻՆ

ՈՐ Է ԴՊԻՐՆ.

Ոգեղեռ Եպիսկոպոսն և ամենէքեան ըստ ի-բրատանդի-ը կարգի և ապրիճանի, և ասելով Շարական ԳԶ Ուրախ լեր սուրբ եկեղեցի՝ գան է դասն առաջի քեռին, և Եպիսկոպոսն առեալ զբուրվառն ինչէ սուրբ սեղանոյն և նոպի յանոռ։

Ասէ Սարկաւագն ածէ զնուրբելն առաջի Եպիսկոպոսին, և նա պետռնադրէ է վերայ նորա։

Դ՝— ասէն Սաղմոս ՃԻԱ.

Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս՝ խառն Տեառն երթիցուք։ Հասեալ կային ոտք։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱՋԵԱՅ ՄՈՒՐՔՈՒԷԷ.

Եւ եղեւ յամին յորում մեռաւ Ողիա արքայ, տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան եւ վերացելոյ, եւ լի էր տունն փառօք նորա։ Եւ սերովբէք կային շուրջ զնովաւ. վեց թեւք միոյ՝ եւ վեց թեւք միոյ. երկուքն ծածկէին զերեսս իւրեանց, եւ երկուքն ծածկէին զոտս իւրեանց, եւ երկուքն թռուցեալք։ Աղաղակէին մի առ մի՝ եւ ասէին. սուրբ, սուրբ. սուրբ, Տէր զօրութեանց լի է ամենայն երկիր փառօք նորա։ Եւ վերացաւ դրանդն ի ձայնէն զոր աղաղակէին, եւ տունն լի եղեւ ծխով։ Եւ ասեմ. վայ է ինձ, ես այր տառապեալ զի՞նդ կամ հիացեալ. զի մարդ եմ՝ եւ պիղծ շրթունս ունիմ, եւ ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես, եւ զՏէր զօրութեանց տեսի աչօք իմովք։ Եւ առաքեցաւ առ իս մի ի սերովբէից անտի, եւ ի ձեռին իւրում ունէր կայծակն. զոր առեալ ունելեօք ի սեղանոյ անտի՝ եբեր մերձեցոյց ի բերան իմ, եւ ասէ. Ահաւադիկ մերձեցաւ այդ ի շրթունս քո, եւ հանցէ զանօրէնութիւնս քո, եւ զմեղս քո սրբեսցէ ի քէն։ Եւ լուայ զբարբառ Տեառնն որ ասէր. զո՞ առաքեցից, եւ կամ ո՞ երթիցէ առ այն ժողովուրդ։ Եւ ասեմ. ահաւասիկ ես, առաքեա՛ զիս։ Եւ ասէ. Ե՛րթ եւ ասա՛ ցժողովուրդն ցայն. լսելով լուիջիք եւ մի՛ իմասջիք. եւ տեսանելով տեսջիք՝ եւ մի՛ գիտասջիք։ Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ, եւ ականջք իւրեանց ծանուցին լուան, եւ զաչս իւրեանց կափուցին, զի մի երբէք տեսանիցեն աչօք, եւ լուիցեն ականջօք, եւ իմանայցեն սրտիւք, եւ դառնայցեն՝ եւ բժշկեցից զնոսա։

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԱՐԲՈՒՅԵՑՈՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.

Այլ Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձելոցն բարեաց, մեծաւն եւ կատարելով եւ անձեռագործ խորանաւն, այս ինքն է՝ որ ոչ յայսց արարածոց, եւ ոչ արեամբ նոխազաց եւ զուարակաց, այլ իւրով արեամբն եմուտ միանգամ ի սրբութիւնսն յաւիտենական գտեալ զփրկութիւն։ Զի եթէ արիւն ցլուցն եւ նոխազաց եւ մոխիր երնջոցն ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբութենէ, ո՞րչափ եւս առաւել արիւնն Քրիստոսի, որ ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ի մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած կենդանի։ Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ, զի յորժամ մահ լինիցի՝ ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն ի ժառանգութիւնն յաւիտենից։

Սաղմոս ԽԲ.

Ալէ. ալէ։ Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած՝ որ ուրախս առնէ զմանկութիւն իմ։

Դպէրտն. Ալէլուիա որթի։

Քահ. Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկ. Երկիւղածութեամբ լուարուք։

Ղ.Հ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Դ.Պ. Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Սարկ. Պռօսխումէ։

Դ.Պ. Ասէ Աստուած։

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մատուցանէին առ նա մանկտի, զի ձեռն դիցէ նոցա. իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ որք մատուցանէինն։ Իբրեւ եսես Յիսուս, բարկացեալ սաստեաց նոցա եւ ասէ. Թոյլ տուք մանկըտւոյդ գալ առ իս, եւ մի արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ։ Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ, ոչ մտցէ ի նա։ Եւ առեալ զնոսա ի գիրկս՝ ձեռն եդ ի վերայ եւ օրհնեաց զնոսա։

Սարկ-ագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Ո-էր Էլեղէց-ոյն ասէն էրկ-, Տէր ողորմ։

Սարկ-ագն.

Եղբարք սիրեցեալք, աղաչեսցուք զԱստուած տալ ծառայիս իւրոյ (այս անուն) զօրհնութիւն իւր ի զօրացուցանել զնա ի պաշտօն փոքր սարկաւագութեան, սպասաւորել հաւատով առաջի իւր, եւ հասանել փոխարինին՝ զոր խոստացաւ սրբոց իւրոց. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. կեցուսցէ եւ ողորմեսցի։ (ի յայն) Օրհնեա՜ Տէր։

Ե՜- Լ՝ոպ՝ոկ՝ոպ՝ոն ԷՆԷ ԷՅԷ՜Ն Ի ՎԵՐԱՅ Գ՝ԼԽՈՅ Ն՜-Էշ՝Էլ՝ոյն Լ՝ ասէ.

Յոյս անմահութեան և կեանք կենաց, Տէր և արարիչ ամենայնի. յորմէ սարսեալ դողան ամենայն արարածք՝ երկնելիք և աներևոյթք, բանաւորք և մտաւորք։ Որ վասն բազում մարդասիրութեան քո գթալով յազգս մարդկան՝ առաքեցեր զՄիածին Որդիդ քո փրկել զմեզ։ Որ խոնարհեալ մարդասիրապէս զգեցաւ մարմին ի սրբոյ կուսէն։ Ղարշարեցաւ, զի զմոլորեալքս առ ինքն դարձուցէ։ Ամբարձաւ յերկինս առ քեզ՝ Հայր, զի մեզ ճանապարհ հորդեսցէ ի կեանսդ յաւիտենից. և հրամայեաց աշակերտաց իւրոց պահել զպատուիրանս նորա՝ զամենայն աւուրս կենաց իւրեանց, և ի պատշաճ ժամանակի խոստացաւ զկեանսն յաւիտենից։ Ուստի ծառայս քո՝ հետևօղ եղեալ սրբոց առաքելոցն, փափագեցաւ աստիճանի։ Վասն որոյ աղաչեմք զքեզ բարերար և բազումողորմ Աստուած, լուր աղաչանաց մերոց, և նայեա՛ յաղօթս մեր ամենեցուն, և զծառայս քո (այս անուն) զոր ընտրեցեր և կոչեցեր ի խնկարկութիւն և ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյ քո՝ և յընթերցումն աստուածային պատուիրանաց քոց, սուրբ պահեա՛ ի կոչումս յոր կոչեցաւ։ Տէր հզօր և ամենակալ՝ ընտրեա՛ զնա՝ որ սուրբդ ես սրբոց, և արժանի արա ամենայն իմաստու-

թեամբ և խելամտութեամբ զաստուածեղէն քոց բանից կարդացմունս առնուլ ի միտ և առնել։ Պահեա՛ զսա առանց ամօթոյ և արատոյ, արժանաւորել ի պատշաճ ժամանակի հասանել մեծի աստիճանի սարկաւագութեան։ Շնորհեա՛ սմա հեզութիւն՝ խոնարհութիւն և պարկեշտութիւն։ Փչեա՛ ի տա զՀոգիդ քո սուրբ՝ արժանի լինել ի տուէ և ի գիշերի խորհել յաստուածայինս։ Փրկեա՛ զսա ի դատարկաբանութենէ և ի ցոփութենէ. արժանաւորեա՛ սրբութեամբ սպասաւորել եկեղեցւոյ քում սրբոյ, ողորմութեամբ և գթութեամբ Քրիստոսի քո, ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Փառաւորեալ յամենայնի մարդասէր Տէր, տուիչ բարեաց և ընդունող աղօթից, ընկալ և այժմ զծառայս քո (ՆՆՆ-Ն) զոր ընտրեցեր ի սպասաւորութիւն սրբոյ եկեղեցւոյ քոյ։ Լցո՛ ամենայն հոգևոր իմաստութեամբ՝ որպէս և յայնժամ աստուածեղէն բաղկաւ քո ըզմանկունսն, և զօրացո՛ զսա ըստ կարգի քո ճշմարիտ վկային, պահելով յամենայն մեքենաւոր հնարից սատանայի. զի արժանաւոր լիցի սրբութեամբ և ամբծութեամբ սրտիւ հասանել աստիճանի սարկաւագութեան ըստ կամաց քոց, և մնալ յուսոյ կենացն յաւիտենից ընդ ամենայն սուրբս քո, որք ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ։ Եւ մեր ամենեցունն՝ աստուածային և սուրբ սիրով և հոգևոր համբուրիւ ընկալեալ զսա, որպէս յամենայնի և այժմ գոհանալով փառաւորեսցուք զքեզ Հայր ամենակալ՝ հանդերձ կենդանարար և աղատիչ սուրբ Հոգւովդ, այժմ և միշտ։

Եւ զգեցո-ցանէն Ն-էրելոյն հանդերձ դպրի, և Եպիսկոպոսն ասէանէ զԲապէս-ցուն յահեակ Բաղ-էն Ն-ուս, և պայ էյեն-ն զանէհն դապարի և զմաղզմայն, և զանձնայն զգեսա պապարգէն և զգա-զէսայն և զԲոզ-հերդապեպրն՝ և ասէ.

Տե՛ս որդեակ՝ յո՛ր խորհուրդ կոչեցար. քանզի ի վերջին պաշտամանէն՝ որ յառաջ եկիր, յայսմ հետէ արթնութեամբ կա՛ց ի պաշտօնս եկեղեցւոյ. զգաստացի՛ր ի ծուլութենէ. ողջախոհ լեր ի հեշտասիրութենէ. և ըզ հացն առաջադրութեան՝ զոր ետ Քրիստոս եկեղեցւոյ իւրոյ

Հաց կենաց, զգոյշ լեր բաւական ածել ժողովրդեանն ի հաղորդութիւն, և ոչ առաւել կամ պակաս: Յամանն՝ ուր զմարմնականն (զգորփուրայն) լուանաս, մի՛ այլ ինչ մերձեսցի. և զՋուրն յորում լուացեր՝ ածեցես յաւազանն մկրտութեան: Եւ ի կոնքն ուր լուանաս զծածկոց սեղանոյն, անդ լուասցես զամենայն կահս եկեղեցւոյն: Վասն այսորիկ ցուցանեմ, որպէս զի զգուշութեամբ կատարեսցես զգործս քո, և հաճոյ գտանիցիս Աստուծոյ և Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ:

Ե՝ ասէն Շարական Դկ.

Իմաստութիւն երկնային իջեալ ի վերս:
Ի ծովու ճանապարհորդեալ անհետ:
Բանաւոր երկրի մշակդ երկնային որ:

Աղա Սուրբ խաչիւս: Պահպանեա: Հայր մեր:

Պաղաւն ասէին ա՛ելի է քան զաստուածոյն, այս ինքն յեկեղեցին քարոզ ասել, խնկարկել, աղաղակարանին զգեստաւորել, զդրապարի ակին ի խորհրդանոյին բաղնեցուցանել, ի սեղանն ելանել և սրբոյ պատարագին սպասաւորել:

ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՐԳ

ՍԱՐԿԱՒԱԳԻՆ

Օգենոս Եպիսկոպոսն և քահանայք ի սրբոյն եկեղեցւոյն, սարկաւագունք և դպիրքն ըստ օրինի բուրվառաւ և լուսեալ լապտերօք և գան արքայական և ականին զսուրբ պատարագն, և հասանեն մինչև յայն տեղին՝ զոր ասէ պատարագիչ Եպիսկոպոսն. *Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով:*

Ականին դպիրքն Շարական Դզ.

Ուրախ լեր սուրբ եկեղեցի:

Ե՝ Եպիսկոպոսն խնկարկէ և նոքա յաղօթս յաջակողմն սեղանոյն:

Սաղմոս ԺԴ.

Տէր ո՞վ կացցէ ի խորանի ի քո:

Սարկաւագն քարոզէ ի յայն.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ՝ կեցո՛ եւ ողորմեա՛ Տէր:

Ե՝ Եպիսկոպոսն ասէ,

Օրհնութիւն և փառք Հօր և:

Դարձեալ Սաղմոս ԻԵ.

Դատ արա ինձ Տէր, զի ես. ի քո:

Ե՝ յասել Սաղմոսին ելանեն երկու սարկաւագունք և քերեն զնուէրն քառակուսի ասելով բերեն:

Սարկաւագն յայնէ. *Օրհնեա՛ Տէր:*

Եպիսկոպոսն ասէ.

Օրհնութիւն և փառք Հօր և:

Դարձեալ Սաղմոս ԽԲ.

Դատ արա ինձ Աստուած եւ իրաւ. ելմ:

Ե՝ յասել սաղմոսին, Սարկաւագունքն հանեն զնուէրն ընդ յաջակողմն դնելն է գլուխ սանդղոց բերեն: Ե՝ յորժամ ասասցի սաղմոսն, Ա՛ռ Սարկաւագն ասէ ի յայն բարձր.

Հայր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ եկեղեցի, զի (զայս անուն) կիսասարկաւագս՝ զոր ընծայէ քեզ, ձեռնադրեսցես մեզ ի սարկաւագ։

Եւ Եպիսկոպոսն հարցանէ.

Եւ գիտէ՞ք զի արժանաւոր է. թէ օ՞րպէս կամ զիա՞րդ ունի քաղաքավարութիւն. ի սուրբ ամուսնութենէ՞ է ծնեալ, և թէ օ՞րքան ունի իմաստութիւն և սրբութիւն։

Պատասխանէ դայ Եւ-ագ Սարկաւագն ասելով.

Անչափ որքան մարդկային տկարութիւնս տայ մեզ ճանաչել, գիտեմք եւ վկայեմք զսա արժանաւոր գոլ՝առ ի բառնալ զլուծ աստիճանաց, ունելով սրբութիւն եւ իմաստութիւն։

Եւ Եպիսկոպոսն ասէ.

Շնորհօք Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ կոչեմք (զայս անուն) կիսասարկաւագն՝ ի պաշտօն սարկաւագութեան։ Վասն որոյ աղաչեսցուք զմարդասէրն Աստուած, որպէս զի պայծառապէս փայլեցուցէ զսա պարգևօք սրբութեան իւրոյ՝ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ։

Քէրէն զնուէրեալն ի ծունկն առաջի սեղանոյն, և լինի յահեակ ծունկն, և ապա դանէն զնա առաջի Եպիսկոպոսին։ Եւ Սարկաւագն ասէ ցայն.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո՛ եւ ողո։ Օրհնեա՛ Տէր։

Եւ Եպիսկոպոսն դնէ ձեռն ի գլուխն ասելով.

Օրհնութիւն և փառք Հօր և։

Ապա Սարկաւագն փարսէ.

Աղաչեսցուք զամենակալն Աստուած յաղագս ծառայիս իւրոյ (այս անուն)՝ որ հանդերձեալ է կոչիլ ի կարգ Սարկաւագութեան, զի արժանի լիցի ձեռնադրութեամբս առնուլ զշնորհս՝ ըստ նմանութեան սրբոյն Ստեփաննոսի նախասարկաւագին եւ առաջին վկային՝ յամենակալէն Աստուծոյ. կեցուսցէ եւ ողորմեսցի։ Օրհնեա՛ Տէր։

Եւ Եպիսկոպոսն դնէ ձեռն ի վերայ գլխոյ նորընծայեալն և ասէ աղաղնա,

Տէր Աստուած ամենակալ, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, քեզ խոնարհեցոյց ծառայս քո զպարանոցս հոգւոյ և մարմնոյ. ձգեա՛ զաներևոյթսն քո, և օրհնեա՛ զսա արժանաւոր լինել կոչման սպասաւորութեան սուրբ եկեղեցւոյ, առնուլ զշնորհս ըստ նմանութեան սիրելեաց քոց. որ բաշխես առատապէս հաւատացելոց ըստ իւրաքանչիւր աստիճանի պաշտել զքեզ՝ Ճշմարիտդ Աստուած։ Որում պարգևի արժանաւորեալ, լեցցէ զերկրաւորս, և եղեցի քարոզ ամենառատ շնորհաց քոց, աւետարանիդ խաղաղութեան, ի փառս ամենասուրբ Նշխարդու-

թեանդ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Տէր Աստուած զօրութեանց և զօրաց երկնաւոր դասուց. որ և զմեզ կարգեցեր ի բաժին պաշտամանս այսորիկ, և գիտես զմիտս որդւոց մարդկան, և քննիչ ես խորհրդոց և մտածութեան ամենեցուն։ Տո՛ւր և այժմ ըստ մեծի ողորմութեան քում զպարգևս քո, և սրբեա՛ զսա՝ որ ձեռնադրի այժմ. մաքրեա՛ յամենայն գարշութեանց՝ որ ըստ բանսարկուին պատրանաց կրկին մեղացն տեսակք՝ որ ի խորհուրդս և ի գործս։ Զօրացո՛ զսա ի վարս առաքինութեան, և փարատեա՛ ի սմանէ զխաւարային խորհուրդս որպէս զմրրիկ յերեսաց երկրէ։ Լցո՛ զօրութեամբ շնորհի քո և գթութեամբ Միածնի քո և ճշմարիտ Հոգւոյդ սրբոյ։ Եւ տո՛ւր սմա լինել պաշտօնեայ արժանաւոր նորոց կտակարանաց. զի կարասցէ անսայթաք և առանց գայթակղութեան կալ առաջի ահեղ անուանդ քում սրբոյ. և ի պատշաճ ժամանակի քահանայանալ և պաշտել ըզխորհուրդս սքանչելիս աւանդեալս մեզ։ Զ՚ամն զի քաղցր ես և բազմազեղ են ողորմութիւնք քո որք կարդան առ քեզ։ Եւ քեզ միայնոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ։

Ապա ասէն ՊՐԿԷՆԴԷՆ։

Օրհնէ Սրբո՛ւ՝ տէրդ։

Եւ ելս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո եւ ող։ Օրհնեա՛ Տէր։

Եւ Եպիսկոպոսն դնէ ձեռն ի վերայ գլուխոյ նոր-ընտրելոյն և ասէ.

Տէր Աստուած ամենակալ, արարիչ ամենայն արարածոց, որ ընտրեցեր քեզ նոր ժողովուրդ սեպհական յամենայն ազգաց երկրէ. հաստատեցեր զեկեղեցի քո սուրբ՝ շինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, և կարգեցեր ի սմա առաջնորդս, հովիւս և վարդապետս։ Ընկա՛լ և այժմ զաղաչանս մեր ամենեցուն. և հանգո՛ զշնորհս Հոգւոյդ սրբոյ ի վերայ ծառայիս քո (այս անուն)՝ որ եկն ի պաշտօն սպասաւորութեան սրբոյ եկեղեցւոյ քոյ։ Պահեա՛ զսա հաստատուն և անշարժ յամենայն փորձութեանց թշնամւոյն. որպէս զի գնասցէ անարատ առաջի քո ի կամ՚ուղեկէ Եկեղեցւոջ սուրբ սրտիւ և անկեղծաւոր հաւատով յամե-

նայն գործս բարութեան ըստ կամաց քոց բարեսիրաց· զի արժանաւոր լիցի փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնդ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեցուք։

Տէր Աստուած ամենակալ և ամենախնամ, որ ընտրեցեր զգծառայս քո (պայ անուն) ի գործ պաշտաման քո, սրբեա զսա և արժանաւորեա ամենայն իմաստութեամբ և հոգևոր հանճարով զհսկումն և զընթերցումն աստուածայնոց քոց բանիցդ առնուլ ի միտ, և պահել ըստ պատուիրանս քո ամբիծ կրօնաւորութեամբ· և առաքինասէր վարուք կեալ յայսմ աշխարհիս, և հասանել երկնից պարգևացդ ընդ ամենայն սուրբս քոս։ Օրհնեցո՛ զսա ըստ կարգի քո ճշմարիտ վկային սրբոյն Ստեփաննոսի՝ պահելով յամենայն մեքենաւոր հնարից սատանայի։ Զի արժանաւոր լիցի սրբութեամբ սրտիւ պահել զաստիճան սարկաւագութեան ըստ կամաց քոց բարեսիրաց, և հասանել միալ յուսոյ կենացն յաւիտենից ընդ ամենայն սուրբս քոս։ Եւ մեր ամենեցուն՝ աստուածային և սուրբ համբուրիւ ընկալեալ զսա, որպէս յամենայնի և այժմ արժանի լիցուք գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ՝ այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից· ամէն։

Ապա դարձեալ՝ յանէն յարեմտից ընթերցեալն, որ ամբառնայ զձեռս ի վեր ափ ի բաց, և Սարկաւագունդն պարտ առեալ երգեցչին բարձր ձայնիւ երգոյ անգամ.

Մէջակ և Զափաւոր.

սրբ բոյ ե կե զե ցուոյ ի սպա սա ւո բու թիւն ըստ վը-
կայ ու թեա ն ան ձին իւ բոյ եւ ա մե-
նայն ժո ղո վրդ դեա նս։

Դպէրտն. Արժա նի է։

Ն՝ դարձեալ՝ յանէն ընդ-էրեալն յարէալ, և դնէն տահանայտն ղՅէսու ի վերայ Ընկանոյն։

Ն՝ Եպիսկոպոսն դնէ ղաջն ի վերայ գլուխոյն և ասէ ի Ընդ-.

Ստուածային և երկնային շնորհ, որ միշտ ընդ զգէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ (ղայ ա-նուն) ի դպրութենէ ի սարկաւագութիւն, ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեանս։

Ես դնեմ ձեռս ի վերայ սորա դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան սարկաւագութեան անարատ պաշտել առաջի սրբոյ սեղանոյս Ստուծոյ։

Ասէն ա-ի՝ եկեղեցա-ոյն ի Ընդ- երէ՝ Տէր ողորմեա։

Սարկա-ագն յայնէ, Օրհնեա՝ Տէր։

Ն՝ Եպիսկոպոսն ասէ զաղօթն.

Տէր Ստուած հզօր և փառաւորեալ յամենայնի, մեծ և ահաւոր կամաց քոց սրբոց ըստ պատասաւոր լինին արարածք՝ երկնայինք և երկրայինք անյապաղ հնազանդութեամբ. առաւել ևս մնաւորք և բանաւորք, կարգեալք քո կամաւ ի սպասաւորութիւն կատարեն մեծաւ ուրախութեամբ զհրամանս քո։ Դոհանամք զքէն՝ որ յամենայնի հզօրդ ես և անկարօտ. որ վասն մարդասիրութեան քո հայեցար յաղգս մարդկան և ընտրեցեր քեզ եկեղեցի ի մէնջ՝ տաճար բնակութեան ամենասուրբ փառաւորեալ Երրորդութեանդ, և կարգեցեր ի սմա սարկաւագունս սպասաւորս սրբոյ եկեղեցւոյ քո։ Աղաչեմք զքեզ Տէր, և խնդրեմք ի բարերարութենէդ քումմէ, հայեաց հաշտ ակամբ ի պատրաստ բնակութենէ քումմէ ի ծառայս քո՝ որ ձեռնադրեցաւս այժմ ի սպասաւորութիւն եկեղեցւոյ քում սրբոյ։ Հաստատուն պա-

հեա՛ զսա ի կոչումս յոր կոչեցաւ։ Հեռացո՛ զսա յամենայն իրաց չարաց։ Օգնացո՛ զսա յամենայն գործս բարեաց. յաւե՛լ ի սմա զսէր և զհաւատս։ Տո՛ւր սմա զօրութիւն և զշնորհս սրբոյն Ստեփաննոսի նախավկային քո և առաջին սարկաւագի և բարեպաշտի։ Որպէս զի լըցեալ Հոգւով սրբով՝ կացցէ անարատ ի սպասաւորութիւն սեղանոյ քում սրբոյ։ Խնկելով անուշահոտ վարուք և առաքինասէր գործովք զեկեղեցի քո սուրբ, զուարճացուսցէ զենքն և զամենայն մերձաւորս իւր և զհեռաւորս։ Եւ արժանաւոր լիցի ի պատշաճ ժամանակի հասանել մեծի աստիճանի քահանայութեան։ Շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ հրաւիրեաց զմեզ յիւր արքայութիւնն և ի փառս։ Ընդ որում քեզ Հօր ամենակալի և Որդւոյդ Միածնի՝ հանդերձ կենդանարար և աղատիչ սուրբ Հոգւովդ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութի՛ւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Մարդասէր Տէր, որ կոչեցեր զծառայս քո (ՁՅՈ ԱՆՈՒՆ) ի լուսաւորութիւն սրբութեան վարուց՝ պարկեշտութեամբ և հեզութեամբ. արդ ընկա՛լ զսա շնորհօք ողորմութեան քոյ. որ յուսացաւ ի քեզ Տէր՝ և նուիրեաց զանձն իւր Փրկչիդ Յիսուսի Քրիստոսի՝ և շնորհողի Հոգւոյդ սրբոյ։ Տո՛ւր սմա զօրութիւն և իմաստութիւն և շնորհս, արիանալ ընդդէմ հակառակորդին՝ որ սովոր է խաբել և կորուսանել զմարդիկ։ Յաղթօղ զօրութեամբ քով և շնորհօք Հոգւոյդ սրբոյ խափանեսցին ամենայն զօրութիւնք հաղբից նորա, և ձեռնադրութեամբս որ ի վերայ սորա աւարտեցաւ՝ պարգև նուիրանաց երևեսցի սովաւ զօրութեամբ մեծիդ Աստուծոյ՝ մեզ պարգևողիդ զմարդասիրութիւն. որ մեծամեծս շնորհես և փոքր ինչ հայցես՝ զպատուիրանին միայն զպահպանութիւն։ Եւ արդ լե՛ր սմա վերակացու՝ օգնական և պահապան ի տուէ և ի գիշերի։ Պահեա՛ զսա սուրբս և անարատս, հնազանդ և արդար յամենայնի՝ վասն փառաց անուանդ քո։ Զի դու ես Տէր ամենայն արարածոց. որ կարողդ ես յամենայնի սուրբ Երրորդու-

թիւն, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Այլ. ասէ։ Տէր, որպէս զինու հաճութեամբ քով պատակեցեր զնոսա։ Բանից իմոց ունկն դի՛ր Տէր, եւ իմի՛ն առ զաղաղակ իմ։ (Սաղմ. Ե)։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅՈՐԵՆԻՅ ՄՈՒԳՈՒԷԷ.

Պատգամն Աստուծոյ, որ եղեւ ի վերայ Երեմիայի Բեղկեայ՝ ի քահանայից անտի՝ որք բնակեալ էին յԱնաթովթ յերկրին Բենիամինի։ Առ որ եղեւ բան Տեառն յաւուրս Յոսիայ որդւոյ Ամոնայ արքայի Հրէաստանի, յերեքտասաներորդի ամի թագաւորութեան նորա։ Եւ եղեւ յաւուրս Յոսակիմայ որդւոյ Յոսիայ արքայի Հրէաստանի, մինչեւ ի վախճան մեռանելոյ ամին Սեդեկիայ որդւոյ Յոսիայ արքայի Յուդայ՝ ցգերութիւնն Երուսաղեմի, յամսեանն հինգերորդի։ Եւ եղեւ բան Տեառն առ իս՝ եւ ասէ. Մինչչեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ, եւ մինչչեւ ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի զքեզ։ մարգարէ ի հեթանոսս եդի զքեզ։ Եւ ասեմ. որ եսդ Տէր Տէր, ահաւասիկ եւ խօսել իսկ ոչ գիտեմ, զի մանուկ եմ ես։ Եւ ասէ ցիս Տէր. մի ասեր եթէ մանուկ եմ ես. զի առ ամենեսեան առ որս առաքեցից զքեզ՝ երթիցես. եւ ըստ ամենայնի զոր միանգամ պատուիրեցից քեզ՝ խօսեսցիս. մի երկիցես յերեսաց նոցա՝ զի ընդ քեզ եմ ի փրկել զքեզ՝ ասէ Տէր։ Եւ ձգեաց Տէր զձեռն իւր առ իս՝ եւ մերձեցոյց ի բերան իմ՝ եւ ասէ ցիս. ահա եսու զբանս իմ ի բերան քո. ահա կացուցի զքեզ այսօր ի վերայ ազգաց եւ թագաւորութեանց՝ խլել եւ բրել՝ կորուսանել եւ յատակել՝ շինել եւ անկել։

ԴՈՒՅԵԼ ՅՈՐԵՆԻՅ ՄՈՒԳՈՒԷԷ.

Յաւուրսն յայնոսիկ եւ ի ժամանակին յայնմիկ ծագեցից Դաւթի ծագումն արդարութեան՝ որ առնիցէ իրաւունս եւ արդարութիւն յերկրի։ Յաւուրսն յայնոսիկ փրկեսցի Յուդա՝ եւ Երուսաղեմ բնակեսցէ յուսով՝ եւ այս է անուն զոր կոչեսցէ նմա Տէր. արդարութիւն մեր։ Զի այսպէս ասէ Տէր. մի՝ պակասեսցէ Դաւթի այր՝ որ նստիցի յաթոռ տանն Իսրայէլի։ Եւ քահանայիցն Ղեւտացւոյ՝ մի՝ պակասեսցէ այր յերեսաց իմոց՝ մատուցանել ողջակէզս եւ զոհել զոհս՝ եւ արկանել խունկս զամենայն աւուրս։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅՈՒԼԷԻՅ ՄՈՒԳՈՒԷԷ.

Այսպէս ասէ Տէր. ո՞վ է իմաստուն՝ եւ իմասցի զայս՝ հանճարեղ եւ ծանիցէ զայս. զի ուղիղ են ճանապարհք Տեառն՝ եւ արդարք գնասցեն ընդ նոսա՝ եւ ամբարիշտք տկարասցին ի նոսա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԴՈՒՅՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ.

Կոչեցին երկոտասանքն զբազմութիւն աշակերտացն եւ ասեն. ո՛չ է հաճոյ մեզ թողուլ զբանն Աստուծոյ եւ պաշտել զսեղանս։ Ընտրեցէ՛ք՝ եղբարք՝ վկայեալս ի ձէնջ արս եօթն՝ զորս կացուցուք ի վերայ պիտոյիցս այսոցիկ՝ եւ մեք աղօթից եւ պաշտաման եւ բանին հպատակ լիցուք։ Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի ամենայն բազմութեանն՝

եւ ընտրեցին զՍտեփաննոս՝ այր լի հաւատով եւ Հոգւով սրբով, եւ զՓիլիպպոս եւ զՊրոքորոն եւ զՆիկանովրայ եւ զՏիմովնայ եւ զՊարմենայ եւ զՆիկողայոս զեկն Անտիոքացի։ Զորս կացուցին առաջի առաքելոցն, եւ աղօթս արարեալ՝ եդին ի վերայ նոցա զձեռս։ Եւ բանն Աստուծոյ աճէր, եւ բազմանայր թիւ աշակերտացն յոյժ յԵրուսաղէմ. եւ բազում ժողովք ի քահանայիցն անսային հաւատոցն։

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին նիզոյն է ընթերցուածն.

Բայց կրթեա՛ զանձն քո յաստուածպաշտութիւն։ Զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, եւ զաւետիս կենաց ունի՝ զարդիս եւ զհանդերձելոցն։ Հաւատարիմ է բանս եւ ամենայն ընդունելութեան արժանի։ Զի ի սոյն իսկ վաստակեմք եւ նախատինս յանձն առնումք, զի յուսացեալ եմք յԱստուած կենդանի, որ է փրկիչ ամենայն մարդկան, մանաւանդ հաւատացելոց։ Պատուէր տայջիր զայդ եւ ուսուցանիջիր, զի մի ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ։ Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատով, սրբութեամբ, մինչեւ գամ ես. մինչ դիր ընթերցուածոց մխիթարութեան եւ վարդապետութեան։ Մի անփոյթ առներ զշնորհացդ որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան։ Ցայդ խորհեա՛ց եւ ի դոյն կանխեսջիր, զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի։ Զգոյշ լինիջիր անձին եւ վարդապետութեանդ, եւ ի դմին յամեսջիր. զայդ եթէ առնիցես, եւ զանձն ապրեցուսցես՝ եւ զայնոսիկ որ քեզն լսիցեն։

Ակէ. ալէ. Հոգւով սրբով զօրացեալ սուրբ Ստեփաննոս, և ընտրեալ յորովայնէ ճշմարիտ վկայ, սիրող և առաքեալ առաքողին, ի Քրիստոսէ ընկալար զուարթնոցն զպսակ։

Դպ. Ալէլուիա որթի։

Վրահ. Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկ. Երկիւղածութեամբ լուարուք։

Քահ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Սարկ. Պռօսխուսմէ։

Դպ. Առէ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ինքին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւովն սրբով եւ ասէ. գոհանամ զքէն Հայր, Տէր երկնի եւ երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց՝ եւ յայտնեցեր տղայոց. այո՛ Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք գիտէ՝ ո՛վ է Որդի, եթէ ոչ Հայր, եւ ո՛ է Հայր՝ եթէ ոչ Որդի, եւ ում կամիցի Որդին յայտնել։ Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն ասէ. երանի՝ աչաց՝ որք տեսանիցեն զոր տեսանէք։ Ասեմ ձեզ. զի բազում մարգարէք եւ թագաւորք կամեցան տեսանել զոր դուք տեսանէք՝ եւ ոչ տեսին, եւ լսել զոր լսէք՝ եւ ոչ լուան։

Նշ— առէն զՀաւատամքն։

Նշ— զընդհանուր վերաբերեալն, և առէն զնվէր յաղօթս Սարկաւագին, Ողջոյն տուք միմեանց։

Ն՝ Նոպէ Ներսէսոպոսն յանոյ։
Սարկաւագն փարողէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Միաբան ամենեքեան աղաչեսցուք հաւատով զմարդասէրն Աստուած յաղագս Եպիսկոպոսիս մերոյ (այս անուն), որպէս զի շնորհեսցէ զսա Եկեղեցւոյ իւրում իբաղում ժամանակս ուղիղ վարդապետութեամբ՝ հաւատով եւ առաքինասէր վարուք՝ հովուել զժողովուրդ Տեառն՝ զոր գնեաց՝ արեամբն իւրով։ Զի արժանաւոր ձեռնադրութիւնս առնելով ի պէտս սրբոյ Եկեղեցւոյ սպասաւորութեան՝ կեցցէ անխիղճ եւ անարատ վարուք առաջի Աստուծոյ զամենայն աւուրս կենաց իւրոց։ Խնդրեսցուք եւ յաղագս (այս անուն) Սարկաւագի՝ որ կոչեցաւ ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյս՝ զի սրբութեամբ եւ անբամբաս յաջողեսցի ի գործ սպասաւորութեան սրբոյ սեղանոյս՝ եւ վիճակ ժառանգութեան ընկալցի ընդ ամենայն սուրբս յարքայութեան երկնից։ Եւ եւս՝ յաղագս երանելի Հայրապետին մերոյ (այս անուն) Կաթուղիկոսի կենաց եւ փրկութեան՝ հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ եւ ողորմեսցի։

Ընդ յայնէ. Օրհնեա՜ Տէր։

Ն՝ Ներսէսոպոսն դնէ զաջն ի վերայ գլխոյ նոր-ելելոյն և ասէ զաղօթս.

Աստուած բարերար՝ ընկալ զաղաչանս մեր ամենեցուն, և զծառայս քո (այս անուն) զոր ընտրեցեր և կոչեցեր ի սպասաւորութիւն սրբոյ Եկեղեցւոյ քոյ, լցո՛ Հոգւովդ քո սրբով, և յաջողեա՛ ի գործս առաքինութեան։ Օգնական և պաշտպան լեր սմա յամենայն ժամ լինելով ընդ հովանեաւ ամենազօր բազկի քո։ Պահեա՛ աներկիւղ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Զի անարատ գնացեալ ըստ կամաց քոց յամենայն ճանապարհս արդարութեան՝ արժանաւոր լեցի յաւիտենական կենացն ընդ ամենայն սուրբս քո։ Եւ մեր ամենեցուն սուրբ ողջունիւ ընկալեալ զսա, որպէս յամենայնի՝ և այժմ փառաւորեսցուք զամենասուրբ զԵրրորդութիւնդ յաւիտեանս. ամէն։

Ն՝ ասէն Շարական Դկ.

Առաքեա՛ ի մեզ Տէր զբաղում գթու։
Որում զերկնայինն բացեր զդուռն։
Որ աղօթանուէր հայցմամբ զթողու։
Ով երջանիկ ճառագայթ, առաքելա։
Որ քոյին յօժարական համբերու։
Աղօթէիր որ քարաձիգն լինէին ի։

Ն՝ ասէն Կոնդակ.

Յորովայնէ ընտրեալ սուրբ Ստեփաննոս. յորովայնէ ընտրեալ սուրբ Ստեփաննոս. վկայ ճշմարիտ առաքելական քարոզութեանցն. որ ի վերայ անօրէն քարաձգողացն աղօթէիր առ Քրիստոս Աստուած՝ մի համարիր սոցա զայս ի մեղս։ Արդ՝ ի ձեռն սորին բարեխօսութեան շնորհեա՛ մեզ՝ Տէր՝ զմեծ քո ողորմութիւնդ։

Ապա գրեցուցանէր նուիրեալն հանդերձ հոլանի Սարկաւագին, և Եպիսկոպոսն արկանէ զՈ-րարն ի յոտս ուսն նորա և ասէ.

Ա՛ռ զմանդուր և սուրբ ուրարս ի ձեռաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և լե՛ր սուրբ յամենայն խաբէութենէ մեղաց առաջի երեսաց Նորա: Կեանք քո և վարք քո լեցին օրինակ ժողովրդեանս՝ որք են սուրբք հաւատով ի Քրիստոս: Որպէս զի տեսցեն զքեզ գործել զայն՝ որով կարող լինիցիս հասանել կենացն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր· որ է օրհնեալ յաւիտեանս· ամէն:

Յետ այսորիկ դայ զԱ-եպարանն ի յերեսն նորա և ասէ.

Ա՛ռ իշխանութիւն ընթեռնուլ զսուրբ աւետարանս յեկեղեցիս Աստուծոյ՝ յունկն կենդանեաց, և յիշատակ ննջեցելոց:

Ապա դնէ գ�-գլուխն ի յերեսն և ասէ,

Ա՛ռ քեզ հրաման խնկարկել և բուրել հոտ անուշութեան ի սպասաւորութիւն խորհրդոյն:

Եւ նուիրեալն ընկալեալ զրբոյ սեղանոյն ասելով.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկա՛լ կեցո եւ ողորմեա: Եւ դարձեալ ասա Եպիսկոպոսն և ասէ. Օրհնեա Տէր:

Եւ Եպիսկոպոսն ասէ.

Օրհնութիւն և փառք Հօր:

Օրհնեալ երիցս կրկնեն.

Ապա Սուրբ խաչիւս: Պահպանեա զմեզ եւ զծառայս քո Քրիստոս: Հայր մեր որ:

Եւ ապա Ողջոյն տուք միմեանց:

Եւ նուիրեալն ուրիշաբար կացցէ յերկրէջին, և ձանիցէ զինդն՝ ըստ որոյ ընդունակ եղև:

Պաշտօն սորա աւարտի ի դան զԱկոսուրիսն, այս ինդն՝ ի պապարգիչ զոր-ըբ աւարտանն վերաբերի և ընդունուս յանձն ժողովրդեան. այլ և զոր-ըբ երգհորդքն ի երգհրդանոցին վերաբերեալ մատուցանէ պապարգիչ փահանային:

ՏԵՍՈՆ ԳԷՈՐԳԱՑ Դ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԽՐԱՏ ՊԱՏՈՒԻՐԱՆԻ

ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ, ՈՐ ԱՌՆԵՆ ԶՍԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ.

Սուրբ Առաքեալն Պօղոս պատուիրելով պատուիրէ աշակերտին իւրում Տիմոթեայ՝ ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնել. եւ խորախորհուրդ բանիւն զգուշացուցանէ ապաքէն եւ զամենայն եպիսկոպոսունս ի մեծէ վտանգէն որ անշուշտ առաջի կայ նոցա ի յախուռն եւ ի վաղվաղկոտ ձեռնադրութեանց պաշտօնէից Եկեղեցւոյ: Եւ յիրաւի. քանզի եթէ ճշմարիտ է բանն, որպէս եւ է իսկ, թէ «Ոչ որ զանձն ընծայեցուցանէ՝ նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ», հարկ անհրաժեշտ ի վերայ կոյ եպիսկոպոսին մանրակրկիտ քննութեամբ եւ արթուն հսկողութեամբ նկատեալ տեսանել՝ եթէ որք միանգամ ընծայիւն ի սպասաւորութիւն սրբոյ Եկեղեցւոյ՝ յԱստուծոյ իցեն ընտրեալք եւ յաստուածայնոցն շնորհաց կոչեցեալք, թէ անձնընտիրք ոմանք իցեն՝ անդէտք իւրեանցն հոգեկան եւ մտաւորական կարողութեանց, մանաւանդ թէ զուրկք եւ թափուրք յամենայնէ՝ որ ինչ կարեւորն իցէ ի զարգացումն հոգւոյ եւ մտաց իւրեանց: Իսկ զի բազում անգամ տեսանին ի ձեռս այնպիսեացն թուղթք իմն վկայութեան շորթեալք թախանձագին պաղատանօք ի ժողովրդականաց այսր կամ այնր քաղաքի կամ գեղջ, որպէս թէ վկայիցեն նոքին անստգիւտ գնացից՝ եւ անթերի դիտութեան եւ անրամբաս քաղաքավարութեան եւ այլոց ինչ բազմապատիկ կատարելութեանց ընծայելոցն, մինթէ ծածկիցի յաչալուրջ հսկողութենէ հովուաց եւ առաջնորդաց թէ որքան եւ որպիսի՛ս ունիցին արժէս վկայութուղթքն այնոքիկ առաջի Աստուծոյ եւ մարդկան:

Վասն որոյ պարտ եւ արժան է եպիսկոպոսին մի՛ բնաւ վաղվաղել ի դնել ձեռս ի վերայ ոյր ուրուք եւ իցէ՝ մինչչեւ խնամով քննեալ եւ անձամբ վերահասու լեալ իցէ կատարելութեանցն մեծաց որք պահանջին յընծայելոցն ինքեան ի ձեռնադրութիւն՝ իբրեւ հաւաստի եւ անկեղակարծ նշանակք ընտրութեանն Աստուծոյ: Ապա թէ ոչ, պարտական լինի համօրէն ամենայն գործոց եւ թերութեանց եւ յանցուածոց ձեռնադրելոցն յինքենէ անարժանից, այլ եւ բնաւ իսկ ամենայն չարեաց եւ դայթակղութեանց որ գործիցին ի ժողովրդոցն հաւատացելոց ի խնամս այնպիսի պաշտօնէից Եկեղեցւոյ:

Ապաքէն եպիսկոպոսունքն աւանդապահք են ոչ միայն ուղղափառ վարդապետութեանց Եկեղեցւոյն Քրիստոսի, այլ եւ ամենայնի որ ինչ պատշաճ իցէ սրբութեան եւ անկորուստ պահպանութեան եկեղեցական բարեզարդութեանց, եւս եւ անթերի կատարման կարգաց աստուածպաշտութեան ըստ աբարողութեանց աւանդելոց ի սրբոց Առաքելոցն Քրիստոսի եւ յօրինաւոր յաջորդաց նոցա մինչեւ՞ցդալ հասանել առ ինքեանս: Արդ զինչ ինչ կամ որպիսի արդեօք տացեն նոքա պատասխանի առաջի ահեղ ատենին Քրիստոսի, յորժամ Հովուապետն այն եւ մեծ Քահանայապետ հարցանիցէ ցնոսա թէ ո՞ւմ հաւատացին նոքա զժողովուրդսն զորս զնեաց Նա արեամբն իւրով եւ հրաւիրեաց ի ժառանգութիւն կենացն յաւիտենից: Ո՞չ ապաքէն ի կարկել նոցա զբերանս իւրեանց, եւ ի տեսանելն առաջի աչաց իրրեւ ի պատկերի զամենայն զչարիսն զգործեալս յանարժան պաշտօնէից Եկեղեցւոյ, զորս ինքեանք ձեռնադրեցին առ թեթեւութեան կամ անհոգութեան՝ առ մարդահաճութեան կամ տարաղէպ եւ պարսաւելի զթասիրութեան, առ զօշաբաղութեան եւ արծաթասիրութեան, եւ որ այլն եւս, ասիցէ ցնոսա Քահանայապետն ճշմարիտ. «Չարիւն նոցա եւ զմոլորելոցն ի ձեռն նոցա անպարտ եւ անմեղ ժողովրդոց ի ձեռաց քոց խնդրեցից». եւ թէ «Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ», եւ որ զհետ այնորիկ սպառնալիք զեհենին անճողոպրելիք եւ սարսափելիք լսողաց:

Ցաղագս այսր ամենայնի եւ մեր որ անարժանութեամբ անցեալ կամք ի զլուխս Հայաստանեայցս Եկեղեցւոյ, պարտ անձին վարկաք զոյզն խրատու պատուիրանիս զգուշացուցանել զեղբարս մեր ի Քրիստոս, զԵպիսկոպոսունս ասեմ եւ զԱռաջնորդս, բանիւ սրբոյ Առաքելոյն թէ «Ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցէք». այլ փութացարուք արկանել զընծայեալսն ձեզ ի ձեռնադրութիւն ի պաշտօնեայս Եկեղեցւոյ ընդ խիստ եւ անաչառ քննութեամբ հանդամանաց նոցին եւ կատարելութեանցն եւ թերութեանց ըստ կանխագեկոյց աղդարարութեանց Հայրապետացն մերոց առաջնոց եւ Վարդապետաց

Եկեղեցւոյ, մանաւանդ երանելւոյն Յովհաննու Ոսկեբերան Հայրապետի, եւ սրբոյ Կաթուղիկոսին ամենայն Հայոց Տեառն Ներսիսի Կլայեցւոյ, եւ հոգեշունչ Վարդապետին Յովհաննու Սարկաւագ կոչեցելոյ եւ այլոց բազմաց, որք զառաջնոցն պատուէրս կրկնեցին եւ կրկնեն ի դրաւորական վաստակս իւրեանց ամբարեալս ի գանձ Եկեղեցւոյ:

Եւ նախ զայն իսկ արժան համարիմք յուշ առնել եպիսկոպոսին, զի որովհետեւ անսուտ է բան մարդարէին՝ թէ «Շրթունք բահանային զգուշասցին զիտութեան, եւ օրէնս խնդրեսցեն ի բերանոյ նորա, զի հրեշտակ Տեառն ամենակալի է», պարտ եւ արժան է՝ զի ընծայեալն ունիցի զուսումն գիտութեան զէթ այնչափ՝ որչափ պիտոյ իցէ առ ի զայլս հրահանգելոյ ի գիտութիւն վարդապետութեանց հաւատոյ եւ վարուց բարեաց, բաջ իմանալով զամենայն զբանս եւ զպատուէրս սրբոյ Աւետարանին Քրիստոսի:

Երկրորդ, զի բաջահմուտ իցէ խորհրդոց Եկեղեցւոյ եւ խորհրդակատարութեանց ծիսից, որպէս եւ ամենայն կարգաց Աստուածպաշտութեան աւանդելոց մեզ ի Նախնի Հայրապետաց:

Երրորդ, զի ոչ միայն ունիցի զսահմանեալն ի կանոնաց զչափ հասակի երիտասարդութեան կամ զառն կատարելոյ, այլ եւ վկայեալ իցէ մինչեւ ցայնժամ հոգեսիրութեամբն եւ սրբասիրութեամբ. այնպէս զի եթէ հասակի ամացն լրութեամբ թերանայցէ եւս մասամբ, սակայն ըստ իմաստնոյն բանի՝ թէ «Գերութիւն պատուական ոչ բազմաժամանակեայն է, եւ ոչ որ թուով ամացն չափիցի, այլ ալիք՝ իմաստութիւն մարդոյ են, եւ հասակ ծերութեան կեանք անարատ», այս անարատութիւն կենացն եւ վարուց ունիցի լիով եւ զտեղի հասակին անկատարութեան:

Չորրորդ, զի գիտակ իցէ ծանրութեան եւ մեծութեան հրեշտակակրօն պաշտամանն յոր կոչի ընծայեալն, եւ զարհուրեալ դողայցէ յամենայնէ որ օտար իցէ ի պարտուց քահանայականին սրբութեան, այս ինքն է յարբեցութենէ, ի շահասիրութենէ, ի փառամոլութենէ, յանձնդիւր վարուց, ի պղերգութենէ, եւ առհասարակ յամենայնէ որ հակառակ գտանիցի կոչման եկեղեցական աստիճանաց. այլ վկայեալ ցանգ ի տեսողացն եւ ի ծանօթից՝ իւրովն պարկեշտութեամբ եւ ժուժկալութեամբ, խոնարհութեամբ եւ հեզութեամբ, անոխակալութեամբ եւ երկայնամիտ համբերութեամբ, խաղաղասիրութեամբ եւ համօրէն ամենայն առաքինութեամբք՝ որք սիրելի առնեն զմարդն Աստուծոյ՝ եւ օրինակ բարի հաւատացելոց եւ այլակրօնից:

Գեղեցիկ է արդարեւ եւ մեծաց զովութեանց արժանի հնաւանդ սովորութիւն ազգիս ի քառասնօրեայ արգելանս հրաւիրել զնորոգ ծեռնադրեալսն. եւ ի լըրանալ քառասնորդացն եւեթ տալ նոցա հրաման մտանել առաջի սեղանոյն Աստուծոյ, զսուրբ եւ ըզմեղսաբաւիչ պատարագն մատուցանել, եւ զայլս ի խորհրդոց Եկեղեցւոյ պաշտել հաւատացելոց: Սակայն ըստ նմին մեծապէս ըղձալի է եւ ուխտիւք փափաքելի, զի զքառասնորդսն զայնոսիկ ոչ միայն պահօք եւ աղօթիւք եւ լութեամբ անցուցանիցեն յեկեղեցւոջ ծեռնադրեալքն ի քահանայութիւն, այլ եւ յանմնեալք մեծաւ խնամով ի դաստիարակութիւն եւ ի հրահանգս աւագերիցու որ քաջ խելամուտ իցէ ամենայն կարգաց աստուածպաշտութեան, եւ նախանձաւոր աւանդապահ անվրէպ եւ անսայթաք կատարման խորհրդոց եւ արարողութեանց Եկեղեցւոյ. այլ եւ խըրատս հոգեշահս մատակարարիցէ նորընծայիցն յիւրմէն եւ ի հոգեշահ զրուածոց Հարցն սրբոց եւ Վարդապետաց Եկեղեցւոյ:

Սովին օրինակաւ եւեթ ակն ունիմք եպիսկոպոսացն մերոց՝ եղբարց սիրելեաց՝ ըստ կամացն Աստուծոյ լինել կատարողս պարտուցն իւրեանց, եւ իրրեւ սիւնք հաստատութեան Եկեղեցւոյն Քրիստոսի ի վերայ երկրի՝ զվերնոյն Սիոնի նկարագրել ի սմին ըզհրեշտակայինն կարգաւորութիւն: Որով եւ ի չուել իւրեանց յանցաւոր կենցաղոյս եւ ի յանդիման լինել բեմին Քրիստոսի ընդունիցին ի նմանէ զանթառամ փառացն զպսակ իրրեւ հովիւք բաջընթացք երկնաւոր Հօտապետին: Շնորհօք եւ ողորմութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր եւ Հոգւոյն սրբոյ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԿԱՆՈՆ

ՀԵՌՆԱՊՐՈՒԹԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ

ԿՈՉՈՒՄՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ՑԵՐԵԿՈՑԻ.

Նոպէ Եպիսկոպոսն յամենայն սուրբք էն-դեն է դասն, և սրանէ պէտք ունիցիս։

Գ։ան էրէցունէն սա դուռն գոցելին է ներսէն, ունելով ընդ ինքեանս պնուիրեալն։

Եւ սէն Շարական Գկ։

Ծանր.

Ա. Նայ եա ց

ի մեզ ե և

ո ղո ր մեաց մե զ Քրիս-

տոս ս որ ու նիս

քա ղու մ գը-

թու թիւն։

Եւ յասել շարականին դանդն էրկու սարկաւագունէ կամ քահանայէ պնուիրեալն է ծունկս սակուկի դ յարաջ, և յայնէ Սարկաւագն.

Հրա մայ եա տէ ր, օրհ-

նու թեա մը ա սե լ։

Եւ Եպիսկոպոսն ասէ.

Օրհնեալ թիւնն երկնային տացէ ձեզ որ բնակեալն է ի բարձունս Տէր Աստուած մեր։

Եւ դանդն է դէջ եկեղեցւոյն ասելով.

Ո ր հա յրդ ե ս

ո ր քոց, ե և գա -

տա ւոր ա յր եա ց Քրիս-

տոս ս որ ու

նիս քա ղու

մ գը թու թիւն։

Ապա Սարկ. — Հրամայեա Տէր օրհ։

Եւ Եպիսկոպոսն ասէ.

Օրհնեսցէ զձեզ Տէր ի Սիոն, այն որ բնակեալն է Յերուսաղէմ։

Ապա դանդն պնուիրեալն սակուկն դ և յարաջ ասելով.

Ո ր պը սա կի -

ն ր ն ի ր ի ր ի ր

Հդ ե ս որ ր քոց, լու ր

ե և մե զ ա զգ -

Ամէն Եղիշոպոսն.

Այսպէս ասէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. ոչ ոք գայ առ իս՝ եթէ ոչ Հայրն իմ երկնաւոր ձգեսցէ զնա առ իս. և ամենայն որ գայ առ իս՝ ոչ հանից զնա արտաքս: Եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռինք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտցջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի:

Սարկաւագն.

Եւ ե՛ւ ըս խա զա զու թեան ըզ

տէր ա զա չես ցուք ըն կալ կե-

ցո՛ ե՛ւ ո՛ զոր մեա:

Օրհ նեա տէ ր:

Եւ Եղիշոպոսն խաչակնքէ եվերայ նուէրքերոյն ասելով.

Կոչումն ամենակալ զօրութեանն Աստուծոյ կարողացուսցէ զքեզ բառնալ սիրով զլուծն Քրիստոսի, և երթալ կամաւ զհետ կենարարին յանապատ. ուրախութիւնն. ամէն:

Թիւ քա սո ցա Քրի ս-

տո ս որ ու

նիս բա զու մ

գը թու թիւն:

Սարկ. — Հրամայեա Տէր օրհ:

Ե՛ Եղիշոպոսն ասէ.

Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ խօսել:

Յորժամ յԵռանդրոսն Կոնս-դէիոսն էջէ, ի սոն յԵղիշոպոսոյ յաստաղ հապոստեալ ասէ. — Շնորհաղարդ սուրբ Հայրապետ, որ ես հաստատեալ հովիւ հօտին Քրիստոսի, խնդրէ ի քէն, և որ է կարդին: Ինչ ելնէ Եղիշոպոս էջէ յԵռանդրոսն, ասէ Սարկաւագն.

Հայր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես (ղայս անուն) սարկաւագս՝ զոր ընծայէ քեզ, յաստուծան քահանայութեան:

Ե՛ Եղիշոպոսն հարցանէ.

Ու գիտէ՞ք թէ կամաւորութեամբ եկեալ է յայս կարգ, և յօժար կամօ՞ք յանձն առնու զլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եթէ ի հարկէ հրաւիրողացն:

Պատասխանէ Սարկաւագն.

Կամօք եւ յօժարութեամբ սրտի իւրոյ եկեալ է յայս կարգ, եւ ոչ ի հարկէ հրաւիրողաց:

Դպիրք. [illegible]
Ն զի ցի Ե -

[illegible]
զի ցի ։

Հարցանէ Եպիսկոպոսն.

Թողեալ է զամենայն հոգս զբաղմանց աշխարհիս, և զիւր սովորութեամբ կեալն. որպէս ասէ Տէրն, թէ որ ոչ թողու զհայր և զմայր, զքոյր և զեղբարս, նաև զանձն իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Զի ոչ կարէ՛ք ասէ՝ երկուց տերանց ծառայել. զի որ ոչ թողու զայս ամենայն, և ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի։

Պատասխանէ.

Այո՛ Հայր սուրբ, զայդ ամենայն թողեալ է յօժարութեամբ սրտի իւրոյ, եւ յամենայն անձնէ եւ ի զօրութենէ վառեալ կայ ի սէրն Քրիստոսի, եւ առեալ զխաչն եւ եկեալ է զհետ Քրիստոսի եւ ասէ. ինձ աշխարհ ի խաչ եւ ելեալ է եւ ես աշխարհի. զի ես թողի զայս ամենայն եւ եկի զհետ Քրիստոսի։

Եպիսկոպոսն ասէ.

Այսպէս ասէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. ամենայն որ եթող զտուն կամ զեղբարս կամ զքոյր կամ զհայր կամ զմայր կամ զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ և ըզկեանն յաւիտենականս ժառանգեսցէ։

Սարկաւագն ասէ.

Եւ ես խաղաղ։ Օրհնեա՜ Տէր։

Ե՜ Եպիսկոպոսն խաչակնքէ ասելով.

Խոստումն ամենակալին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի արժանացուսցէ զքեզ անճառ խնդութեանն, ժառանգել ըզկեանն յաւիտենականս, զոր ակն ոչ եսես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, բազմապատիկ փոխարինօք ընդ ամենայն սուրբս, շնորհօքն Քրիստոսի. ամէն։

Դպիրք. Եղիցի եղիցի։

Հարցանէ Եպիսկոպոսն.

Պահեալ է զանձն իւր սուրբ և անարատ ի ծննդենէ մինչև ցայսօր։

Պատասխանէ.

Այո՛ Հայր սուրբ, պահեալ է զանձն իւր սրբութեամբ՝ շնորհօքն Աստուծոյ. եւ կամօք ողորմութեան նորին վարժեալ է ի վարս սրբութեան ի ծննդենէ մինչեւ ցայսօր։

Ասէ Եպիսկոպոսն.

Այսպէս ասէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. մի՛ արդելուք զմանկտիդ գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւնն երկնից։

Սարկ.— Եւ ես խաղաղ։ Օրհնեա՜ Տէր։

Ե՝ պառնէն ընդ-էրէալն է վերայ ծնկաց առաջի Եպիսկոպոսին, և նա դնէ գլխոն է վերայ գլխոյ նորա և ասէ.

Զոյն օրհնութիւն աստուածային Աջոյն հանդիցէ ի վերայ քո, պահելով զքեզ սրբութեամբ ի սպասաւորութիւն սուրբ Եկեղեցւոյ յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Դպիրքն. Եղիցի եղիցի։

Հարցանէ Եպիսկոպոսն.

Ունի՞ զուսումն քահանայութեան լիով, և զգիտութիւն աստուածային օրինաց։ Զի որ ոչ ունի զգիտութիւն սուրբ գրոց, նաև ո՛չ զզօրութիւնն Աստուծոյ որ ի նմա՝ ըստ աւետարանին, մի՛ գուցէ յանցանիցէ։ Որոց վասն ողբալով ասէ մեծն Սողոմոն. ո՛հ որոց թողեալ իցէ զուսումն մանկութեան, և մոռացեալ զուխտն աստուածային։

Պատասխանէ Ա-ափէրէցն.

Ուսեալ է զուսումն քահանայութեան ի մանկութենէ իւրմէ, եւ ունի զգիտութիւն օրինացն Աստուծոյ, կատարեալ հաւատով ի նոյն վարժեալ դաւանութեամբն ի Քրիստոս։

Եպիսկոպոսն ասէ.

Այսպէս ասէ Տէր մեր Յիսուս Քրիստոս. գրեալ է ի մարգարէս, և եղիցին ամենեքեան ուսեալք Աստուծոյ. ամենայն որ լսէ ի Հօրէ և ուսանի, գայ առ իս, և տամ զօրէնս իմ ի միտս նորա։

Սարկ.—Եւ եւս խաղա։ Օրհնեա՛ Տէր։

Ե՝ Եպիսկոպոսն խալսինէէ է վերայ նոր-էրելոյն ասելով.

Պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց. լուսաւորեսցէ զաչս մտաց քոց, լուսաւոր առնել ի քեզ զլոյս գիտութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և անուանիլ ի Տեառնէ՝ թէ դուք էք լոյս աշխարհի. և դարձեալ՝ թէ ո՛չ գոյ ի քեզ մասն խաւարի, և որ բոլորովիմբ լուսաւորեալ ծագեսջիր իբրև զարեգակն յարքայութեանն երկնից ընդ ամենայն սուրբս՝ ըստ հրամանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն։

Դպիրքն ասէն. Եղիցի եղիցի։

Հարցանէ Եպիսկոպոսն.

Կարող է ուխտել յանձին ըզհետ երթալ ընթացիցն Քրիստոսի, յաղքատութիւն, ի քաղց, ի ծարաւ, ի վիշտս, ի հալածանս, ի նախատինս, ի չարչարանս վասն Քրիստոսի. որպէս ասէ Տէրն մեր՝ թէ որ զիս պաշտեսցէ՝ զհետ իմ եկեսցէ։ Երդ այսոքիկ են հետք Քրիստոսի, որպէս ցուցաք։

Պատասխանէ Նո-էրէալն.

Յանձն առնում և ուխտեմ որպէս որդիքն Եբեդեայ

զայդ ամենայն կատարել սի-
րով, կամքն Աստուծոյ և կա-
րողութեամբ զօրութեան նո-
րին, որքան իցէ կարողութիւնս
իմ։

Ն- Անդիոկոսոն ասէ.

Այսպէս ասէ Տէրն մեր Յի-
սուս Քրիստոս. որպէս ուխտեաց
ինձ Հայր իմ, և ես ուխտեմ
ձեզ զարքայութիւնն երկնից։
Օ՛ի ուտիցէք և ըմպիցէք ի սե-
ղան Հօր իմոյ ընդ իս յարքայ-
ութեան իմում։

Սարկ. — Եւ եւս խաղա։ Օրհնեա՜ Տէր։

Ն- Անդիոկոսոն խաղանէ ի վերայ նո-
ր-ելոյն ասելով.

Նոյն խոստումն Աստուա-
ծային հրամանացն կատարեսցի
ի վերայ քո ըստ անսուտ բանին՝
որ ասէ, թէ զոր ձեզ ասեմ՝ ա-
մենեցուն ասեմ. գրելով զանուն
քո ի դպրութիւն կենաց ընդ
երջանիկ դասս սուրբ առաքե-
լոցն. ամէն։

Դպիրք. Եղիցի եղիցի։

Հայցանէ Անդիոկոսոն.

Արդ՝ յորժամ այս ամենայն
եղև, յանձն առնու՞ս առանց
ձանձրանալոյ յամենայն ժամ
զդաստութեամբ կալ ի պաշտօնն
Աստուծոյ, և ոչ փոխանակել
զգործն Աստուծոյ ընդ մարմնա-
ւոր գործոց։ Որպէս ասէ Պետ-
րոս. ո՛չ է մեզ պարտ թողուլ
զպաշտօնն Աստուծոյ և պաշ-
տել զմարմնաւոր սեղանս։

Պատասխանէ Նո-ելելոյն.

Յանձն առնում՝ ամենայն
պատրաստութեամբ և առանց
ձանձրանալոյ կալ ի պաշտօնն
Աստուծոյ, և ո՛չ խափանել ըզ-
գործն Աստուծոյ վասն մարմնա-
ւոր գործոյ. որքան իցէ կարն
իմ՝ պաշտել զնա զամենայն
աւուրս կենաց իմոց՝ հետևելով
Տեառն կամաց։

Անդիոկոսոն ասէ.

Այսպէս ասէ Տէր մեր Յի-
սուս Քրիստոս. որ զիս պաշտես-
ցէ՝ զհետ իմ եկեսցէ. և ուր
եմն եմ՝ անդ և պաշտօնեայն իմ
եղիցի։ Եթէ ոք զիս պաշտեսցէ,
պատուեսցէ զնա Հայր իմ։

Սարկ. — Եւ եւս խաղա։ Օրհնեա՜ Տէր։

Ն- Անդիոկոսոն խաղանէ ի վերայ նո-ելելոյն ասելով.

Շնորհք Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի զօրացուսցէ
զքեզ յամենայն ժամ պաշտել
զԱստուած կենդանի և ժառան-
գել զխոստացեալ տեղին, թէ
ուր եմն եմ՝ անդ և պաշտօ-
նեայն իմ եղիցի, ի նոյն սէր վա-
ռելով զմիտս քո յամենայն
ժամ. ամէն։

Դպիրք. Եղիցի եղիցի։

Հարցանէ Եպիսկոպոսն.

Յանձն առնուս կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետաց, և կալ ըստ կանոնաց նոցա, և ո՛չ լուծանել, կամ հակառակ կանոնաց ուսուցանել զոք ի վարս քրիստոնէութեան։

Պատասխանէ Նո-էրէալն.

Յանձն առնում կատարել զամենայն հրամանս ձեր, ըստ կանոնի սրբոցն գնալ, և ոչ լուծանել կամ հակառակ առաջնոցն կալ։

Եպիսկոպոսն ասէ.

Այսպէս ասէ Տէր մեր Յիսուս Քրիստոս. որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց, և ուսուցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ և ուսուցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։

Սարկ. — Եւ եւս խաղաղ։ Օրհնեա՜ Տէր։

Ե- Եպիսկոպոսն խալանդէ ասելով.

Շնորհք շնորհողին զպատուիրանս Աստուծոյ՝ զօրացուսցէ զքեզ յամենայն ժամ կալ ըստ կանոնի օրինացն Աստուծոյ. զի առնելով և ուսուցանելով՝ մեծ կոչեսցիս յարքայութեան Տեառնէն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենայն սուրբս. ամէն։

Դպիրքն. Եղիցի եղիցի։

Հարցանէ Եպիսկոպոսն.

Ունի՞ խոստովանահայր, և ուսեալ է զամենայն որպիսութիւն խոստովանութեան. զի և ինքն կալցի զխոստովանութիւն ժողովրդեան՝ ի խրատել զնոսա զգուշանալ յամենայն մեղաց. զի մի՛ զարիւն նոցա ի ձեռաց սորա խնդրեսցէ Աստուած։

Պատասխանէ Ա-ագէրէցն.

Այո՛, ունի խոստովանահայր, եւ ուսեալ է զամենայն հրամայեալսդ ի ձէնջ։

Ասէ Եպիսկոպոսն.

Այսպէս ասէ Տէր մեր Յիսուս Քրիստոս. տո՛ւր զհաշիւն վաղագոյն մինչդեռ իցես ընդ ոսոխի քում ի ճանապարհի, գուցէ մատնեսցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն՝ դահճի, և արկանիցիս ի բանտ։ Ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն։

Սարկ. — Եւ եւս խաղաղ։ Օրհնեա՜ Տէր։

Ե- Եպիսկոպոսն խալանդէ ասելով.

Հովիւն քաջ՝ որ եդ զանձն իւր ի վերայ բանաւոր հօտի, կարողացուսցէ զքեզ հովուել զհօտ իւր արդարութեամբ, տալով զանձն օրինակ հօտին Քրիստոսի, և դարձուցանել զնոսա յամենայն չարեաց, որպէս զդար-

ձումն անառակ որդւոյն, թողլով զամենայն մեղս նոցա, և տալով զպատմուճանն առաջին։ Եւ դու յերևել Հօտապետին ընկալցիս զանթառամ փառաց պսակն։

Դպիրքն. Եղիցի եղիցի։

Հարցանէ Եպիսկոպոսն.

Ունիս զդաւանութիւն խոստովանութեան ուղղափառ հաւատոյ ի սուրբ Երրորդութիւնն և ի մարդեղութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ըստ երից սուրբ ժողովոցն, և Հրաժարիս յամենայն հերձուածողաց։

Պատասխանէ Նո-իրեալն.

Այո՝ Հայր սուրբ, ունիմ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, և խոստովանիմ զսուրբ Երրորդութիւնն զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, և զմարդեղութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ ընդ սուրբ Հայրապետսն. և Նզովեմ զամենայն հերձուածողսն, և զերկաբնակաց դասսն։

Ն- ասէ Եպիսկոպոսն.

Պարտ է քեզ՝ որդեակ, Հրաժարիլ յամենայն աղանդոյ հարիւր յիսուն և ինն հերձուածողաց, և Նզովել զՀերետիկոսաց դասսն, որք ընդդէմ խօսեցան սրբոյ հաւատոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և ընդունել զուղղափառ սուրբ Հայրապետսն։

Ն- ասա հարցանէ.

Նզովիս զայնոսիկ՝ որք ոչ խոստովանին զՅիսուս Քրիստոս Աստուած և մարդ կատարեալ, և զմարդն աստուածացեալ, և վասն այնորիկ՝ և ոչ Աստուածածին զսուրբ Կոյսն Մարիամ։

Ն- Նո-իրեալն ղՅե- ի վեր ասելով ասէ ընկ-.

Հրաժարիմ եւ Նզովեմ։

(Այսպէս իրինէսոյէ յամենայն հրաժարման։)

Իսկ Դպիրքն.

Նը զով եալ է

զի ցի։

Եպիսկոպոսն.

Հրաժարիս և Նզովիս զԵրիոս Աղէքսանդրացին, որ ոչ խոստովանեցաւ ընութեամբ միանալ ի մարմնի Բանին Աստուծոյ, և զնոյն մի Քրիստոս։

Դպիրքն. Նզովեալ եղիցի։

Հրաժարիս և Նզովիս զՄակեդոն Հայհոյիչն, որ ոչ խոստովանեցաւ զՀոգին սուրբ Համագոյակից Հօր և Որդւոյ, այլ ստացական և արարած։

Դպիրքն. Նզովեալ եղիցի։

Եպիսկոպոսն.

Հրաժարիս և նզովեմ զմարդադաւանն Նեստոր, որ ոչ խոստովանի Աստուածածին ըզսուրբ Կոյսն Մարիամ, և զծնեալն ի նմանէ ոչ բոլորովին Աստուած, այլ սոսկ մարդ։

Դպիրքն. Նզովեալ եղիցի։

Եպիսկոպոսն.

Հրաժարիս և նզովեմ զՊողոս Սամոստացին, որ զմի Քրիստոսն բաժանեաց յերկու դէմս և յերկու երեսս, և միայն մերձաւորութիւն՝ պատիւ և ճոխութիւն ետ նմա, և ոչ միութիւն բնութեամբ։

Դպիրքն. Նզովեալ եղիցի։

Եպիսկոպոսն.

Հրաժարիս և նզովեմ զԱաբէլ Լիբէացին, որ յերկու դէմս և յերկու զօրութիւնս բաժանէ զբանս սուրբ գրոց, զմարգարէից և զառաքելոց և զաւետարանչացն սրբոց՝ որ վասն Քրիստոսի ասացեալ են, և կամ իւր իսկ Յիսուսի՝ վասն իւր։ և զայնոսիկ՝ զոմանս մարդոյն առանձին իմանայ՝ որ ի Մարիամայ, և զոմանս՝ Բանին, որ յԱստուծոյ Հօրէ։

Դպիրքն. Նզովեալ եղիցի։

Եպիսկոպոսն.

Նզովեմ զՏիորիոս Տարսոնացին և զԹէոդորոս Մամեստացին, և զայնոսիկ որք ոչ խոստովանին զմիանալ Բանին ի մարմնի, և զնոյն խոստովանել մի Տէր՝ մի Յիսուս՝ մի Որդի Աստուծոյ, Աստուած և մարդ կատարեալ, Որդի Աստուծոյ և որդի մարդոյ։

Դպիրքն. Նզովեալ եղիցին։

Եպիսկոպոսն.

Նզովեմ զԱնի հերձուածողն, որ ասաց երկու աստուած, մին բարի՝ և մին չար։

Դպիրքն. Նզովեալ եղիցին։

Եպիսկոպոսն.

Նզովեմ զԵպիկուրոս, որ ասաց ինքնեղ զարարածս, և ըզԱբէլ՝ որ ուրացաւ զանձնաւորութիւն Երրորդութեանն, և մի անձն կոչէր զԵրրորդութիւնն։

Դպիրքն. Նզովեալ եղիցին։

Եպիսկոպոսն.

Նզովեմ զՈկրատէս, որ յաւետակից Նիւթոյ ասաց լինել աշխարհի, և զԴալիանոս՝ որ ի հրեշտակաց ասաց լինել և ստեղծեալ զերկնեղիսս։

Դպիրքն. Նզովեալ եղիցի։

Եպիսկոպոսն.

Նզովեմ զԿարպոկրատէս, որ ի Յովսեփայ և ի Մարիամայ ա-

սաց զ՝Քրիստոս· և զԱ՝նիքէս՝ որ առ աչօք ասաց զմարմնանալ Բանին։

Դպէրդն. Նզովեալ եղիցին։

Եպիսկոպոսն.

Նզովեսցէ զԱ՝ուտիքէս, որ ուրանայր զշնորհօքն Քրիստոսի արդարանալն· և զՆեսթորիոս, որ ասաց յերկնից բերեալ զմարմինն Քրիստոսի, և էանց ընդ Կոյսն որպէս ընդ խողովակ· և զԼեւոն և զառումարն իւր, զոր գրեաց՝ զմին յերկուս բաժանեալ։

Դպէրդն. Նզովեալ եղիցին։

Եպիսկոպոսն.

Նզովեսցէ և հրաժարիցէ միահամուռ յամենայն չար հերձուածողացն և յաղանդոց նոցա, որք են արբանեակք չարին։

Դպէրդն. Նզովեալ եղիցին։

Եր՝ ապա ինքն Եպիսկոպոսն ասէ.

Նզովեալ և անիծեալ եղիցին ամենայն դասք հերձուածողաց, ի Հօրէ և յՈրդւոյ և ի Հոգւոյն սրբոյ· ամէն։

Դպէրդն. Եղիցին եղիցին։

Ասէ Եպիսկոպոսն.

Որովհետև հրաժարեցար յամենայն չար հերձուածողաց, պարտ է քեզ այսուհետև հետևիլ և աշակերտիլ ամենայն ուղղափառ և աստուածաբան Հայրապետացն։

Դպէրդն ասէն.

Ցաւի տենա կա ն յի շա տակն ա ր դա ր ո ց օրհ նութեամբ ե ղի- ցի ։

Նոյնպէս և նորընծան ապ ամենայն հարցոնցն ասէ ի ներ-.

Աշակերտիմ և հետևիմ։

Հարցանէ Եպիսկոպոսն.

Աշակերտին և հետևին սրբոցն Դիոնեսիոսի Արիսպագացւոյն և Յուեթէոսի վարդապետին։

Դպէրդն. Ցաւիտենական յիշատակն։

Եպիսկոպոսն.

Աշակերտին սրբոյն Գրիգորի երկրորդ Լուսաւորչին մերոյ, և որդւոց և թոռանց նորին։

Դպէրդն. Ցաւիտենական։

Եպիսկոպոսն.

Աշակերտին Սեղբեստրոսի և Աթանասի Հայրապետացն։

Դպէրդն. Ցաւիտենական։

Եպիսկոպոսն.

Աշակերտիս սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ:

Դպիրքն. Յաւիտենական:

Եպիսկոպոսն.

Աշակերտիս սրբոցն Բարսղի Կեսարացւոյն և Գրիգորի Նիւսացւոյն:

Դպիրքն. Յաւիտենական:

Եպիսկոպոսն.

Աշակերտիս սրբոցն Կիւրղի Երուսաղեմացւոյն, Եփրեմի Խուրին Ասորւոյ և Գրիգորի սքանչելագործին:

Դպիրքն. Յաւիտենական:

Եպիսկոպոսն.

Աշակերտիս սրբոցն Գրիգորի Աստուածաբանին և Եպիփանու Կիպրացւոյն:

Դպիրքն. Յաւիտենական:

Եպիսկոպոսն.

Աշակերտիս սրբոցն Յովհաննու Ոսկեբերանին, Կիւրղի Աղեքսանդրացւոյն, և սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետին:

Դպիրքն. Յաւիտենական:

Եպիսկոպոսն.

Աշակերտիս սրբոցն Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն, և աշակերտի նորին Գրիգորի Տաթևացւոյն:

Դպիրքն. Յաւիտենական:

Եպիսկոպոսն.

Աշակերտիս Նիկիոյ սուրբ ժողովոյն, երեք հարիւր և ութտասն Հայրապետացն:

Դպիրքն. Յաւիտենական:

Եպիսկոպոսն.

Աշակերտիս Կոստանդնուպօլսոյ սուրբ ժողովոյն, հարիւր և յիսուն Հայրապետացն:

Դպիրքն. Յաւիտենական:

Եպիսկոպոսն.

Աշակերտիս Եփեսոսի սուրբ ժողովոյն՝ երկերիւր Հայրապետացն:

Դպիրքն. Յաւիտենական:

Եպիսկոպոսն.

Աշակերտիս ամենայն ուղղափառ և սուրբ Հայրապետացն՝ որք ուղիղ դաւանութեամբ համառօտեն ի մեզ զբանն ճշմարտութեան:

Դպիրքն. Յաւիտենական:

Ե՛ապա ինքն Եպիսկոպոսն ասէ ի ՐԷ՛.

Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Դպիրքն. Եղիցի եղիցի:

Եպիսկոպոսն ասէ.

Այսպէս ասէ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ

որ յերկինս է. և որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է։

Սարկ. — Եւ ես խաղա։ Օրհնեա՛ Տէր։

Ե՛ — Եպիսկոպոսն խաչակնքէ ասելով.

Հոգին սուրբ Աստուած՝ որ էջ ի Յորդանան և ի վերնատունն և յայտնեաց զՔրիստոսի աստուածութիւնն, նոյն զեղումն շնորհաց սուրբ Հոգւոյն ծաւալեսցի ի վերայ քո, բանալով զառաջաստ մտաց քոց ի ճանաչումն աստուածութեանն Քրիստոսի. ըստ որում ոչ ոք է որ ասէ Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն սրբով։ Եւ պայծառացուսցէ զմիտս քո ի դաւանութիւն ուղղափառ հաւատոյ ընդ սուրբ Հայրապետան. ամէն։

Դ.ԷԷԴ. Եղիցի եղիցի։

Ե՛ — հշամայէ Եպիսկոպոսն ասել զայս ուղղափառ դաւանութիւն հաւատոյ.

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ անծին և անըսկիզբն. այլ և ծնօղ Որդւոյ և բղխօղ Հոգւոյն սրբոյ։

Հաւատամք զՔանն Աստուած՝ անեղ՝ ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ոչ յիտոյ և ոչ կրտսեր. այլ որքան Հայրն Հայր՝ ընդ նմին և Որդին Որդի։

Հաւատամք զսուրբ Հոգին անեղ՝ անժամանակ. ոչ ծնեալ՝ այլ բղխեալ ի Հօրէ էակից Հօր և փառակից Որդւոյ։ Հաւատամք զԵրրորդութիւնն սուրբ՝ մի բնութիւն, մի աստուածութիւն. ոչ երկք աստուածք, այլ՝ մի Աստուած. մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երևելեաց և անտեսանելեաց։

Հաւատամք յԵկեղեցի սուրբ՝ զթողութիւն մեղաց, զհաղորդութիւն սրբոց։

Հաւատամք զմին յերից անձանց զՔանն Աստուած՝ ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյսն Մարիամ, առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն, իննամսեայ ժամանակաւ ժուժկալեալ յարգանդի անարատ Կուսին. և եղև Աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ, հոգւով և մտօք և մարմնով. մի անձն՝ մի դէմ և միաւորեալ մի բնութիւն։ Աստուածն մարդացեալ առանց փոփոխման և առանց այլայլութեան. անսերմն յղութիւն և անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն աստուածութեան նորա, և ոչ վախճան մարդկութեան նորա. զի Յիսուս Քրիստոս երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան։ Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ ի վերայ երկրի։ Յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն. Հայր ի վերուստ վկայեալ՝ Դա է Որդի իմ սիրելի, և Հոգին սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ Նորա։ Փորձեալ ի սատանայէ և յաղթեալ նմա։ Քարոզեալ մարդկան զփրկութիւն։ Վաստակեալ մարմնով, քաղցեալ, և ծարաւեալ։ Յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս. խաչեալ և մեռեալ մարմնով, և կենդանի՝ աստուածութեամբն։ Մարմինն եդեալ ի գերեզմանի՝ միաւորեալ աստուածութեամբն, և հոգւովն իջեալ ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբն։ Քարոզեալ հոգւոցն, աւերեալ զդժոխս՝ և աղատեալ զհոգիսն։ Յետ երից աւուրց յարուցեալ ի մեռելոց և երևեալ աշակերտացն։ Հաւատամք զՏէր մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր։ Այլ և գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս. որ և յարութիւն ամենայն մարդկան։

Հաւատամք և զհատուցումն գործոց. արդարոցն կեանք յաւիտենական, և մեղաւորացն տանջանք յաւիտենական։

Այս է Դէրոյս հաւատոյ ուղղափառ դաւանութիւն. զոր պարտ է ասելոյն դրիսոռնէէից յասելոյն ֆամ է սրտէ ոնել և է լեզուէ պահել, զի սրտէ հա-

սատակ՝ ղարդարութիւն գործեն, և բերանով խոսք-
վանել՝ ղիրկութիւն, ասէ առաքեալն։ Սա է հիմն, է
վերայ որոյ պարտ է շինել զգործս բարիս. զի այս են
ապրիմանք հաւատոյ՝ որովք ելանեմք յերկինս առ Աստ-
ուած՝ ոչն առ ոչն յաւուրս մարդկեղով, մարմ և
հոգւով և մարմնով, այս ինքն որման կենդանի եմք՝ մարմ և հաւատով ելանեմք առ Աստուած, և յեր
մանուան՝ հոգւով և բարի գործով. իսկ յեր յարու-
թեան՝ մարմնով և հոգւով։

Եւ պարտ է Եպիսկոպոսին յամենայնում նուազի
զայս դասանութիւնս պահանջել ինչանէ՝ զոր ունի
յեռանդութիւն։ Բանզի ինքանէ հոգին սուրբ Աստուած
բաշխէն շնորհս՝ յայնպիսի ուղղութիւն և ի դասանուցան ուղղութիւն, և հանգչի յոգեալն
յայն, որ ճանաչէ զստուն և զընդունին։ Եւ Քրիստոսի
Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն։

Սարկաւագն փաղաղէ.

Եւ ելս խաղաղ։ Օրհնեա՛ Տէր։

Ն՝ Եպիսկոպոսն խաղաղութիւն ի վերայ նուիրեալին՝ ասելով.

Տէր Աստուած՝ որ կարօղն է զօրացուցանել զքեզ և հաստատել ի դոյն, պահեսցէ քաղցրութեամբ և ամրացուսցէ օրհնութեամբ և ծաղկազարդեսցէ շնորհափայլութեամբ զմիտս և զգայարանս քո, զսիրտ և զխորհուրդս քո, զբանս և զգործս քո, զմտաս և զելս քո՝ ընդ ամրածածուկ աջոյն իւրոյ, հզօր ձեռամբ և բարձր բազկաւն հեղլով ի վերայ քո զշնորհս ճառագայթից լուսոյ Հոգւոյն սրբոյ եօթնագան պայծառութեամբ, որպէս ի դասս առաքելոցն հրաբորբոք ծաւալմամբ՝ հրաշինեալ զքեզ ընդ հրեղինացն շնորհաբաշխութեամբ։

Զմայլիլ, հրճուիլ, զուարճանալ, ցնծալ խայտալից բերկրանօք յանսպառ ուրախութիւնսն, ըմպելով զուղիս փափկութեանցն Աստուծոյ՝ օրհնութեան շնորհիւս։ Ընդ ամենայն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Հայր մեր որ յերկինս։

ԿԱՆՈՆ

ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ

ՅԱՌԱՒՕՏԻՆ.

Օ՛գնեա՝ Եպիսկոպոսն ըստ օրինի է սըրբաբարոյ եկեղեցւոյն՝ հանդիսիցի Քահանայից և Սարկաւագաց և Դպրաց, և քառասնից և հոգեղինաց, և վառեալ լապտերաց գան արտաքոյս և սկսանին զսուրբ Պատարագն, և հասանեն մինչև ցայն՝ զոր ասէ պատարագիչ Եպիսկոպոսն. Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած։

Դպիրքն երգեն Շարականն Գ.Զ.

Այսօր Աստուածութիւնն զուարճանայ։

Եւ Եպիսկոպոսն խնկարկէ։

Ապա Սաղմոս ՃԻԱ. Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս։ Քարոզ Սուրբ եկեղեցեաւս։

Եպիսկոպոսն ասէ.

Ի մէջ տաճարիս և առաջի։

Ապա նոքա յանոյ յաջակողմն սեղանոյն։

Սաղմոս ՃԺԷ. Խոստովան եղերուք։

Դպիրքն երգեն Շարականն Գ.Զ. Խորան սրբութեան։

Սաղմոս ՃԻԲ. Առ քեզ Տէր համբարձի։

Յառել Սաղմոսին ելանեն երկոքին և առնուն զնոքա զնոքին ելանել և բերեն առաջի բեմին։

Սաղմոս ԻԵ. Դատ արա ինձ Տէր։

Եւ յառել Սաղմոսին հանեն զնոքին ելանել ի վեր ընդ յաջակողմն մինչև ի գլուխ սանդղոց բեմին, և լինի ի ձայնէն, և աստուածբերեցն յայնէ.

Հայր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ եկեղեցի՝ զի (պայս անուն) սարկաւագս՝ զոր ընծայէ քեզ՝ ձեռնադրեսցես մեզ ի քահանայ։

Եւ Եպիսկոպոսն հարցանէ.

Եւ գիտէ՞ք զի արժանաւոր է, թէ որպէս կամ զնա՞որ ունի քաղաքավարութիւն, և թէ որքան ունի իմաստութիւն և սրբութիւն։

Պատասխանէ Ա-ստուածբերեցն.

Այնչափ՝ որքան մարդկայնոյն տկարութիւնս մեր տայ մեզ ճանաչել՝ գիտեմք եւ վկայեմք սմա արժանաւոր գոլ առ ի բառնալ զլուծ աստիճանաց՝ ունելով սրբութիւն եւ իմաստութիւն։

Եւ Եպիսկոպոսն ասէ.

Շնորհքն Աստուծոյ՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ կոչեմ (պայս անուն) սարկաւագս ի քահանայութիւն։ Զ՝ասն որոյ աղաչեսցուք զբարերարն Աստուած, որպէս զի պայծառապէս փայլեցուսցէ զսա պարգևօք սրբութեան իւրոյ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ։ Օրհնեա՛ Տէր։

Եպիսկոպոսն.

Օրհնութիւն և փառք Հօր։

Սաղմոս ԻԶ. Տէր լոյս իմ եւ կեանք իմ։

Յառել Սաղմոսին բերեն զնոքին ելանել առաջի Եպիսկոպոսին։

Սարկաւագն.

Եւ եւս խաղաղու։ Օրհնեա՛ Տէր։

Եպիսկոպոսն պետութիւնքէ է վերայ նուէրքելոյն և ասէ.

Ընկալցի զքեզ Տէր։

Եւ դնէն փահանայէն պյեռս է-բէռնոյ է վերայ ընկնոյ նուէրքելոյն, և Սարկաւագն փառրողէ.

Աղաչեսցուք զմարգասէրն Աստուած վասն (այս անուն) սարկաւագի՝ որ հանդերձեալ է կոչիլ ի քահանայութիւն, զի արժանի լիցի ի ձեռն կոչմանս այսորիկ զօրութեան եւ շնորհաց ձեռնադրութեանս՝ առնուլ զշնորհս քահանայութեան յամենակալէն Աստուծոյ. կեցուսցէ եւ ողորմեսցի։

Եպիսկոպոսն նախ ասէ ընկերքելոյն Տէր ողորմեա, և ապա դնէ ղաջն է վերայ գլխոյ նուէրքելոյն ասելով ղաղօթս.

Տէր Աստուած ամենակալ, արարիչ ամենեցուն, փրկիչ և կեցուցիչ և նորոգօղ ազգի մարդկան. որ անբաւ բարերարութեամբ քո շնորհս բաշխեա՝ զերեւելի և զաներեւոյթ պարգևս Եկեղեցւոյ քում սրբոյ։ Եւ այժմ աղաչեմ զբարերար մարդասիրութիւնդ քո, տո՛ւր շնորհս ծառայիս այսմիկ առնուլ զաստիճան քահանայութեան յամենակալէդ Աստուծոյ ի ձեռն կոչման և ձեռնադրութեանս, արժանաւոր լինել ընդունելութեան Հոգւոյդ սրբոյ, առնուլ զպարգևս վերակացութեան արժանաւորութեամբ։

Շնորհօք Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ հրաւիրեաց զամենեսեան ի կոչումն սուրբ ըստ իւրաքանչիւր աստիճանի պաշտել զԱստուած, և գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք.

Աստուած բարձրեալ և ահաւոր, Աստուած անքննին և սքանչելագործ, Աստուած ողորմած և մարդասէր. հայեաց բարեգթութեամբդ քո ի մեզ և կատարեա զհայցուածս մեր ըստ մեծի ողորմութեան քո։ Դու ես Աստուած՝ որ սքանչելագործեցեր իսկզբանցն ազգի մարդկան պէսպէս շնորհօք։ Աղաչեմ զքեզ Հայր երկնաւոր, առաքեա զՀոգիդ սուրբ և օրհնեա զնորընծայս զայս որ կայ առաջի սրբոյ սեղանոյ քո, առնուլ զաստիճան քահանայութեան, և լինել տեսուչ ժողովրդեան քո և աթոռակից առաքելոցն։ Եւ գրեսցի անուն սորա ի դպրութիւն կենաց, և աղատեսցի ի ծառայութենէ թշնամւոյն։ Եւ ամենեքեան մեք լիցուք որդիք երկնաւոր Հօրդ և ժառանգա-

կից.ք Քրիստոսի. և արժանաւոր լեցուք երկնից արքայութեանն և գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ այժմ և միշտ։

Յայնժամ պանին փահանայք պնոյէրեալք է ինքնայոյր բէմին և դարձեալ ցանէն է ժողովուրդն. և նա զյէառն է վերս ոնի ապ է բաց է յԼ հրաժարման, և փահանայքն շուրջանակէն, և ասէն բարձր յայնէր էրէփ անգամ.

Մէջ-է և Զ-փառ.

Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ ընու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ (պայս անուն) ի սարկաւագութենէ ի քահանայութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն՝ ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեանս։

Եւ ապա դնէ զյէառն խալանման է վերայ գլխոյ դուրէրելոյն և ասէ.

Ես գնեմ զձեռս ի վերայ սորա, և դուք ամենեքեան աղօթս արարէք. զի արժանի լեցի սա զաստուծան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ։

Սարկաւագն ասէ. — Օրհնեա՜ Տէր։

Եպիսկոպոսն դնէ զաջն է վերայ գլխոյ դուրէրելոյն և ասէ.

Կայ ու թեա ն
ան ձին իւ բոյ եւ ա մե-
նայն ժո ղո վրբ դեա նս։
Դպիրքն. Արժա նի է։

Ապա դարձեալ ցանէն պնոյէրեալք յարիւրեալ և բէրէն առաջի Եպիսկոպոսին, և նա ասէ է ՌԻ-.

Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ ընու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ (պայս անուն) ի սարկաւագութենէ ի քահանայութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն՝ ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեանս։

Եւ ապա դնէ զյէառն խալանման է վերայ գլխոյ դուրէրելոյն և ասէ.

Ես գնեմ զձեռս ի վերայ սորա, և դուք ամենեքեան աղօթս արարէք. զի արժանի լեցի սա զաստուծան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ։

Սարկաւագն ասէ. — Օրհնեա՜ Տէր։

Եպիսկոպոսն դնէ զաջն է վերայ գլխոյ դուրէրելոյն և ասէ.

Տէր Աստուած ամենակալ՝ ամենագութ՝ ամենախնամ, ա-բարիշ ամենայն արարածոց, ե-ռևելեաց և աներևութից, ը-նակեալ ի լոյս ահաւոր և ան-մերձենալի, և անդունդք խորոց յայտնի են ամենատես աչաց քոց։ Քեզ շուրջ կան զօրք երկնայինք, հրեշտակք և հրեշ-տակապետք, իշխանութիւնք և պետութիւնք, աթոռք և տէ-րութիւնք, սերովբէք և քե-րովբէք և ամենայն անմարմին զօրութիւնք, յաղթական գո-վութեամբ միշտ փառաւորեն զքեզ։ Դու Տէր զօրութեանց՝ ամենայն յամենայնի, հզօր և անկարօտ, մարդասէր կամօքդ զթացեալ ի խոնարհեալ ազգս մարդկան՝ որոշեցեր քեզ յամե-նայն մարդկանէ ժողովուրդ սե-փական զԵկեղեցի քո սուրբ, զոր մարմին քեզ և անդամս անուա-նեցեր։ կարգեցեր ի սմա երի-ցունս՝ հովուել զժողովուրդս քո։ Լո՛ւր Տէր և այժմ ձայնի աղաչանաց մերոց։ և զոր ընտ-րեցեր և ընկալար յերիցութիւն զծառայս քո (ՁԱՅՆ ԱՆՈՒՆ) զձեռ-նադրեալս այժմ, անշարժ պահ-եա ի քահանայութիւնս յոր կոչեցաւ։ Շնորհեա՛ սմա սիրտ զգաստ՝ զգուշութեամբ պահել զամենայն պատուիրանս քո, սիրել զքեզ յամենայն զօրու-թենէ և ի սրտէ իւրմէ և ի բո-վանդակ մտաց իւրոց։ Որպէս զի գնասցէ ճշմարտութեամբ ի ճանապարհս արդարութեան, սուրբ սրտիւ և անկեղծաւոր հաւատով, առաւելեալ ի գործս բարութեան ըստ կամաց քոց բարեսիրաց։ կացցէ հաստատուն և անարատ ի գործս քահանայ-ութեան առաջի քո ի կա-թուղիկէ Եկեղեցւոջ, շինեալ և հաստատեալ ի վերայ վիմի հա-ւատոյ առաքելոց և մարգարէ-ից։ Եղիցի սա միակ առանց ա-մօթոյ, ուղիղ համառօտել ըզ-բանն ճշմարտութեան, սերմա-նել զկենդանարար և զուղղա-փառ հաւատս առաքելական Ե-կեղեցւոյ յամենայն լսօղս։ Տո՛ւր սմա Տէր շնորհս առաքելական առ ի մերժել և հեռացուցանել զամենայն ախտս չարաչարս և զայսս պիղծս ի մարդկանէ, զը-նելով ձեռս ի վերայ և կարդա-լով զամենազօր անունդ քո ի վերայ նոցա յօգնականութիւն և ի բժշկութիւն ախտացելոց։ Եւ եղիցի արժանաւոր կոչել զՀոգիդ սուրբ յերկնից առ ի հոգևոր կենդանութիւն վերըս-տին ծնելոց և լուսաւորելոց սուրբ աւազանաւ։ որով հասանիցեն մեծի շնորհի որդեգրութեան

քում, լինել ժառանգաւոր երկնից արքայութեանդ, և տաճար Հոգւոյդ սրբոյ։ Եւ հաւատով կատարեսցէ զահաւոր և զերկնային խորհուրդ Մարմնոյ և Արեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց արժանապէս հաղորդելոցն։ Այլև զամենայն իսկ զկարգս քահանայութեան բովանդակ առաքինութեամբ կատարելով՝ եղիցի փառաւորիչ սուրբ Երրորդութեանդ, և վարձս ընդ երանելի առաքեալն ընկալցի ի կեանսն յաւիտենական՝ կրկին պատուոյ արժանաւոր լինելով. շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ հրաւիրեաց զմեզ և կոչեաց յիւր արքայութիւնն և ի փառս։ Ընդ որում քեզ Հօր ամենակալի՝ հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ Հոգւովդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Տէր Աստուած զօրութեանց, Աստուած հզօր և ամենակալ, Աստուած փառաց և ամենայն պատուոյ։ Դու պսակեցեր փառօք և պատուով զսուրբս քո։ Դու ընծայեցուցեր զմարգարէական շնորհս ի մարդիկ։ Դու պարգևեցեր զքահանայական պատիւն մարդկան։ Դու ընտրեցեր զսուրբ զառաքեալսն և յարդարեցեր ի կաթուղիկէ Եկեղեցւոջ զանազան կարգս ուղղութեան, յօրինելով ի սմա քահանայապետս և դասս սարկաւագաց և օրհնաբանողաց և վարդապետաց. որով.ք մեծարի անուն Միածնի Որդւոյ քո Յիսուսի Քրիստոսի։ Եւ այժմ զծառայս քո (ՁՅՈ ԱՆՈՒՆ) զոր ընտրեցեր ի կոչումն քահանայութեան՝ լուսաւորեալ պայծառացո՛ շնորհօք սուրբ Հոգւոյդ. զի կեցցէ ամբիծ և անարատ վարուք և պաշտեսցէ ըզսուրբ Եկեղեցի քո։ Եւ զժողովուրդս քո պահեա՛ առանց գայթակղութեան յամենայն նենգութենէ չարին։ Եւ մեր ամենեցուն ընկալեալ զսա հոգևոր և սուրբ ողջունիւ՝ այժմ և յամենայնի փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ այժըմ և միշտ և յաւիտեանս։

Եւ ԷՒՏՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԵՌԱՄԷՆ ԲԷՐԷ ՔԵՐԲԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՆՈՅԱՆ Է ՅԱԽՌԷ Է ՅԱՔ Լ ԱՍԷ.

Եւ զլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի լուծ նորա

քաղցր է, և բեռն նորա փոքր-
րոգի։

Ն՝— ասէն Սաղմոս կ՚ասէր.

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։ Փոխ. Ցիշեա Տէր զԴաւիթ, եւ զամենայն հեզութիւն նորա։ Լ՚հան ասա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Յ՚ԶԷՆԷԼԷ ՄԱՐԳԱՐԷԷ։

Այսպէս ասէ Տէր. որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի. լուիցես յինէն զպատգամս, եւ սպառնայցես նոցա իբրեւ յինէն։ Յորժամ ասիցեմ ցանօրէնն՝ թէ մահու մեռանիցիս, եւ դու ոչ զգուշացուցանիցես նմա, եւ ոչ խօսեսցիս զգուշանալ անօրինին, եւ դառնալ ի ճանապարհաց իւրոց չարաց եւ կեալ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, եւ զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից։ Իսկ եթէ դու զգուշացուցանիցես անօրինին, եւ նա ոչ դարձցի յանօրէնութենէ իւրմէ եւ ի ճանապարհէ իւրմէ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, եւ դու զանձն քո ապրեցուսցես։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՄՈՂՈՒԷՍ ՄԱՐԳԱՐԷԷ։

Այսպէս ասէ Տէր. ուխտն իմ որ ընդ նմա՝ կենաց եւ խաղաղութեան. ես եառ նմա երկիւղ՝ երկնչել յինէն, եւ յերեսաց անուան իմոյ խորշել։ Օրէնք ճշմարտութեան էին ի բերան նորա, եւ անիրաւութիւն ոչ գտաւ ի շրթունս նորա. խաղաղութեամբ եւ ուղղութեամբ գնաց ընդ իս, եւ զբազումս դարձոյց յանիրաւութենէ։ Զի շրթունք քահանային զգուշասցին գիտութեան, եւ օրէնս խնդրեսցեն ի բերանոյ նորա. զի հրեշտակ Տեառն ամենակալի է։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Յ՚ՈՍՏԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Հոգի Տեառն ի վերայ իմ՝ վասն որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս՝ բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն եւ կուրաց տեսանել. կոչել ամ Տեառն ընդունելի եւ օր հատուցման Աստուծոյ մերոյ. մխիթարել զամենայն սգաւորս. տալ սգաւորաց Սիովնի փառս. փոխանակ մոխրոյն օծումն ուրախութեան, եւ սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոցն վհատութեան։ Եւ կոչեսցին նոքա ազգ արդարութեան՝ տունկ Տեառն ի փառս. եւ շինեսցեն զաւերակսն յաւիտենից, եւ զառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն, եւ նորոգեսցեն զքաղաքս աւերեալս ազգաց մինչեւ յազգս։ Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց, եւ այլազգիք մաճակալք եւ այգեգործք քո։ Բայց դուք՝ քահանայք Տեառն կոչեսջիք, եւ պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք, զզօրութիւնս ազգաց կերիջիք, եւ մեծութեամբ նոցա սքանչելի լինիջիք։

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ Է ԿԱՐՈՂԷՍՅՍ ԱՌԱՋԻՆ ԸՂԻՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾ։

Զերիցունս այսու հետեւ աղաչեմ իբրեւ զերիցակից եւ վկայ չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացըն յայտնելոց հաղորդ։ Արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ, մի ղոշաքաղութեամբ,

այլ յօժարութեամբ։ Մի իբրեւ տիրելով վիճակացն՝ այլ լինել օրինակ հօտին. զի յերեւել հովուապետին ընդունիջիք զանթառամ փառաց պսակն։

Պօղոսի առաքելոյն է Տիմոթէոսի առաջին նամակն է ընթերցուածս։

Շնորհ ունիմ այնմիկ՝ որ զօրացոյց զիս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. զի հաւատարիմ համարեցաւ կարգել ի սպասաւորութիւն՝ որ յառաջագոյն հայհոյիչն էի եւ հալածիչ եւ թշնամանիչ. այլ գտի ողորմութիւն՝ զի զայն յանգիտութեան եւ յանհաւանութեան գործէի։ Եւ առաւել եղեն շնորհք Տեառն մերոյ հաւատովքն եւ սիրով՝ որ ի Քրիստոս Յիսուս։ Հաւատարիմ է բանս՝ եւ ամենայն ընդունելութեան արժանի է. զի Յիսուս Քրիստոս եկն յաշխարհս փրկել զմեղաւորս՝ որոց գլուխն ես եմ։ Այլ վասն այնորիկ գտի ողորմութիւն՝ զի նախ յիս եցոյց Յիսուս Քրիստոս զամենայն երկայնմտութիւն՝ յօրինակ այնոցիկ որք հաւատալոցն իցեն ի նա ի կեանսն յաւիտենից։ Այլ թագաւորին յաւիտենից անեղծի եւ աներեւութի՝ միոյն Աստուծոյ՝ փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից։

Ակէ. պէ. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն.

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա՝ եւ ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին. եւ նա ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց։ Եւ եկն ի Նազարէթ՝ ուր սնեալն էր՝ եւ եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուր շաբաթու ի ժողովուրդն։ Եւ ետուն նմա գիրս զԵսայեայ մարգարէի՝ եւ յարեաւ ընթեռնուլ. եւ իբրեւ եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի յորում գրեալն էր. Հոգի Տեառն ի վերայ իմ՝ վասն որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս։ Քարոզել գերեաց զթողութիւն՝ եւ կուրաց տեսանել՝ արձակել զվիրաւորս ի թողութիւն՝ քարոզել զտարեկան Տեառն ընդունելի՝ եւ զօր հատուցման։ Եւ խրփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն եւ նըստաւ. եւ ամենեցուն որ ի ժողովրդեանն էին աչք՝ ի նա հայէին։ Եւ սկսաւ ասել ցնոսա. այսօր լցան գիրքս այս յականջս ձեր։ Եւ ամենեքին վկայէին նմա՝ եւ զարմանային ընդ բանս շնորհացն որ ելանէին ի բերանոյ նորա։

Եւ ասէն զՀաւատամքն, և վերաբերեալն զընծայսն, և ասէն զՇնորհակալն Դնելն ցփարեալ Սարկաւագին՝ Ողջոյն տուք միմեանց։

Ապա նոքի Երգիկոպոսն յանոր, և ասէն Սաղ. ՃԺԸ. Երանեալ են ամբիծք։

Ապա Սարկաւագն եղանակէն.



Ն հա զորդ առ նեռ-

լով ընդ քեզ մաբ դա սէ ր

ա զա չէ մք։

Գ. Ցիշ եա տէր զուխա եւ

զո զոր մու թիւն որ առ սի բե-

լիս ան ուա նըդ քում սըր բո-

յ եւ լուր հայց ուա ծոց մե-

բոց ի տա ճա բի

փա ռաց սըր բու թեան քո

ա զա չէ մք։

Է. Նայ եա քաղց բու թեամբ

քո ի ժո զո վուրդս եւ յեր կըր-

պա գուս ան ուա նըդ քում սըր-

բո յ, յի շէ լով ըզ սի-

եւ զոր ի նո սա ա-

զա չէ մք։

Դ. Լուր տէր եւ ո զո բմ

եա ։

Ը. Ա. բա բե ր ըզ սե-

բով բէան եւ ըզ քե բով բէ ան

զե բե ւե լիս եւ զա նե բե-

ւոյթ զո բու թիւ նս կը ցոր-

դու թեան բա նի ա բա բա-

ծոց ի պա տի ւ

եւ ի փա ռըս տէ բու թեա նըդ

քո ա զա չէ մք։

Գ. Ե տու ր եւ մարմ-

նա ւոր բնու թեանս բա նիւ մըշ տընն-

ջե նա ւոր կեն դա նու թիւ-

Է. Պահ պան եա տէր ընդ

եր կայն ա ւուրս ըզ պատ ուա կան

հայ բա պէ տըն մեր ըզ տէր (այս

անուն) սըր բա զան Կա թու ղի-

կո սն եւ զե պիս կո պոս վի-

ճա կիս ըզ տէր (այս անուն), ա ռաջ-

նոր դե ը վ

ժո ղո վըր դեան հա ւա տա ցե-

լոց ուղ ղա փառ վար դա պե տու-

թեամբ յա մե նա ին

ճա նա պար հըս կեն ցա ղա կա նս

ա ղա չե մք։

Ը. Բարձ բա ցո՛ ի մէջ

ոի ե զե բաց ըզ կար գըս քա-

ըել եաց ուխտ ե բե ւե ցո՛

ի վե բայ ա-

մե նե ցուն զա ռատ ո զոր-

մու թիւ նըդ քո ա

զա չե մք։

Ղ. Պահ եա տէր սուրբ

զե կե զե ցի քո զոր փըր-

կե ցեր պատ ուա կան ար եամ ըզդ

քով սըր բո վ շնո ըհ-

եա հատ տա տուն հա ւա-

տով հաշ տա բար պա տա բա-

դաւդ եւ պահ եա

մին չեւ յե բե ւու մըն մե ծի

վա ռաց քո ց ա ղա-

չե մք։

գործ քա հա նայ ու թեա ն

ընդ հո վան եա ւ

ա մե նա զօր բաղ կի քո լ

սա տա նա յա կան ո ր ո գայ-

թից եւ յա մե նա յն

ե ր ե ւե լի եւ ա նե ր ե ւոյթ

թըշ նամ եա ց ա զա -

չե մք ։

Փըր կեա տէր ըզ ժո-

ղ ո վուր դըս քո եւ օրհ նեա

ըզ նո ս ա

ոբք եր կիր պա գա նեն ա ռա-

ջի տէ ր ու թեա նըդ քո

ա զա չե մք ։

հա նայ ու թեան բա ր ե կրո-

ն պաշ տօ նէ-

լուք եւ զա մե նայն ուխտ սուրբ ե-

կե ղեց ւո յ ա զա-

չե մք ։

Եւ եւս ա ռա ւե լ

յա ղագս (այս անուն) ծա ռա յիս-

ղոր ընտ ր ե ցեր ե ւ կո չե-

ցեր ի կարգ քա հա նայ ու-

թեան օգ նա կա ն

եւ պաշտպան լի նե լով սը մա

յա մե նայ նի ա -

ղա չե մք ։

Պահ եա ըզ ս ա

ան եր կիւղ եւ ա նա ր ատ ի

ԺԷ. Եւ եւս ա ռա ւե Լ

զյոր դո բու մին սի բոյ եւ ըզ

գոր ծըս բար եաց պար գե ւել մեզ

խնդ ըե մք։

Ղ։պէրէն. — Տուր մեզ տէր Աստ ուա ծ։

ԺԸ. Զան ձի նըս մե ր

եւ ըզ միմ եա նըս Տեա ռն Աստ-

ու ծոյ ա մե նա կա լին յանձն

ա բաս ցուք։

Ղ։պ. — Քեզ տեա ռ նըդ յանձն ե-

ղի ցու ք։

ԺԹ. Ո զոր մեա ց

մե զ տէր Աստ ուած մե ր ըստ

մե ծի ո զոր մու թեան քում

ա սաս ցուք ա մե նեք եան մի-

ա բա նու թեա մբ։

Տէր ո զոր մեա տէր

ո զոր մեա լուր տէր ե ւ ո-

զո բմ եա ։

Ղ։— Ղ։պէպոպոն դնէ ղաջն ի վերայ գըլ-
խոյ նո-էրէլոյն և ասէ ղաղօթս.

Տէր Աստուած զօրութեանց և արարիչ ամենայն արարածոց երևելեաց և աներևութից. որ ի հրեղէն զօրաց փառաբանիս, և ի սերովբէից և ի սրբոց հրեշտակաց և ի հրեշտակապետաց յանմարմին զօրացն օրհնիս. հաճեցար քո առատ մարդասիրութեամբդ և ի հողեղինացս առնուլ քեզ զնոցին օրհնաբանութիւնս, ոչ ի լրումն ամենակատար տէրութեան քում, ամենազօր, որ անկարօտդ ես ամենայնի, այլ յաղագս անբաւ մարդասիրութեանդ քո խոնարհեցար ի հայրական ծոցոյ կամաւ ի մեր բնութիւնս՝ բարեգութ ծընունդ Հօր, և զգեցար մարմին ի սրբոյ Կուսէն, և զազգս մարդկան ազատեցեր յանիծից Ադամայ և

ի դատապարտութենէ։ Եւ հեղմամբ անապական արեանդ քո արարեր խաղաղութիւն յերկինս և յերկրի, և հաշտեցուցեր զՀայր ընդ արարածս։ Այլ և ընտրեցեր քեզ ժողովուրդ սեփական զեկեղեցի քո սուրբ։ Եւ այժմ Տէր բարերար՝ հայցեմք ի բազմառատ մարդասիրութենէդ քումմէ, ընկալ ըզպաղատանս մեր և զժողովրդեանս որ կան ի տաճարի փառաց սրբութեան անուանդ քո, և զծառայս քո (պայ անուն) զոր ընտրեցեր և կոչեցեր յառաջնորդութիւն ժողովրդեանս և ի սպասաւորութիւն սրբոյ Եկեղեցւոյ քո, լցո՛ Հոգւովդ քո սրբով։ զօրացո՛ զսա ի գործս բարիս՝ կալ առաջի քո անարատ վարուք և առաքինի գործովք ի հաստատուն հաւատս, պաշտել առաջի սրբոյ սեղանոյ քո, և հովուել իմաստութեամբ և արդարութեամբ զհօտ քո։ Պահեա՛ Տէր զսա և զժողովուրդս յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ զի արժանաւոր լինիցին յաւիտենական ուրախութեանցն։ Եւ մեր ամենեցուն ընկալեալ զսա հոգևոր և սուրբ ողջունիւ, գոհասցուք զքո առատ մարդասիրութենէդ յաղագս տուեցելոց բարեաց, և խոստացելոց անսպառ կենացդ հասանել։ Որոց լեցի մեզ ամենեցուն արժանաւոր լինել ընդ ամենայն սուրբս քո, շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։ ընդ որում քեզ Հօր ամենակալի հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ Հոգւովդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Տէր ամենակալ և Աստուած ամենայն լինելութեանց, որ նստիս յաթոռ անարուեստ, յանտես և յանմահ սուրբ զբաւարթնոցն գովեալ բարեբանիս, որք անհանգիստ ձայնիւ առ միմեանս բարբառելով զերեքսրբեանն դրուատեն զեշխանական զփառս։ Աղաչեմք զքեզ միաբան ծառայքս քո, խոնարհեա՛ ի խնդրուածս մեր, և շնորհեա՛ զառատ քո զողորմութիւնդ։ Եւ պարգևեա՛ ծառայի քում (պայ անուն) զաստիճան քահանայութեան ուղիղ վարուք և անարատ առաքինութեամբ պահել և հատուցանել քեզ զշնորհընկալ գոհութիւնս։ Հեղ ի վերայ սորա առատապէս զշնորհս

Հոգւոյդ սրբոյ եօթնպատիկ պարգևօք ճշմարտութեան և իմաստութեան, հանճարոյ և մեծի խորհրդոյ, զօրութեան և գիտութեան, աստուածպաշտութեան և երկիւղի քո՝ Տէր։ Մերժեալ հեռացի ի սմանէ ամենայն խորամանկութիւն թշնամւոյն. զի կեցեալ սորա արդարութեամբ և ուսուցանող նմանութեամբ անձին իւրոյ, զյուսացեալսն ի քեզ ժողովուրդս հովուել ճշմարտութեամբ, առնելով և ուսուցանելով մեծ կոչեցի յարքայութեանն Քրիստոսի քո, և արժանաւորապէս փառաւորեսցէ զքեզ Տէր։ Եւ մեր ամենեցուն ընկալեալ զսա հոգևոր և սուրբ ողջունիւ, և զոհութեամբ և օրհնութեամբ յամենայն ժամ պատրաստ գտելով ամենազօր կամաց քոց՝ բարեբանեսցուք զամենասուրբ զԵրրորդութիւնդ այժմ և միշտ։

Ե՛ Եպիսկոպոսն ասիցէ զքեզնոսա զնոսէրեցոյն, և Սարկաւագացն ասէալ ի յԵ՛ս զշրջանն, զքաղաքն, զգիւղն և զայլ հոհանայական զգիւղս, և կոյսեն ասասջի Եպիսկոպոսին։

Ե՛ Եպիսկոպոսն ասէ զաղօթս.

Յիսուս Քրիստոս, հայեաց ի ծառայս քո՝ որ յուսացաւ ի բարերարութիւնդ քո և գայ զկնի հրամանաց քոց. որպէս ետուր համարձակութիւն ամենայն հաւատացելոց կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւնս թշնամւոյն։ Տո՛ւր սմա և այժմ յաղթութիւն նշանաւ սմենայաղթ խաչի քո, գնալ ի վերայ իժի և քարբի, և ջաղխել զգլուխս թունաւոր վիշապին. և ընդ երանելի առաքեալսն ժառանգեսցէ զերկնից արքայութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Քրիստոս Աստուած, յոյս փրկութեան և պարիսպ ամրութեան, պահեա՛ զծառայս քո անսասանելի յաւիտեան, զժամանեալս յաստուածահրաւէր կոչումնս ի կարգ քահանայութեան՝ կատարել ի հաճոյս քո։ Զգեցո՛ սմա պատմուճան ուրախութեան և հանդերձ փառաց. վառեա՛ զմէջ սորա ամենայն ժուժկալութեամբ. ցո՛յց զսա ճգնաւոր և գործունեայ գործոց բարեաց. պարկեշտ, աղօթասէր, անբիծ, ցածուն, հեզ, խոնարհ, սուրբ սրտիւ և անարատ պահել զքահանայութիւնն. միանգամայն յամենայն ընթացս վարուց սրբութեան և յամենայնի պահեսցի անարատ և օրհնութեամբ քեզ ի հաճոյս։ Ընդ սմին և զմեզ օրհնեա՛ Տէր՝ հոգևոր շնորհաց պարգևօք ի

փառս ամենօրհնեալ սուրբ Երրորդութեանդ։ Լցո՛ զմեզ Հոգւովդ քո սրբով, և հոգևոր ուրախութեամբ ի հրաւիրակս կատարման կարգի սրբութեան։ Զի դու ես Աստուած ընդունող և փրկիչ, որ կամիս զամենայն մարդիկ զի կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն։ Եւ քեզ փառս վերառաքեսցուք Հօր ամենակալի և միածնի Որդւոյդ և ազատիչ սուրբ Հոգւոյդ, օրհնութեամբ և գոհութեամբ և բարեբանութեամբ, այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Տէր Յիսուս Քրիստոս՝ կատարումն օրինաց և մարգարէից, և բաշխող շնորհաց և ողորմութեան, օրհնեա՛ զպատմուճան և զարտախուրակ սորա՝ որպէս օրհնեցեր ի ձեռն Մովսէսի զպատմուճան և զարտախուրակն Ահարոնի և որդւոց նորա։ Եւ որպէս ի նախնումն Յակոբ յօրինեաց զծաղկեայ պատմուճանն Յովսեփայ, Օրհնեա՛ Տէր զդեստ և զպատմուճան սորա՝ որպէս և օրհնեցեր զմաշկեակն Եղիայի, յորոյ ձեռն հանդեաւ հոգին Եղիայի ի վերայ Եղիսէի։ Օրհնեա՛ Տէր զպատմուճան սորա, զի հանդիցէ ի վերայ սորա օրհնութիւն աստուածաստեղծ պատմուճանի քո փորանկելոյ ի վերուստ, զորմէ նախագուշակեալ մարգարէին քո ասէր. ո՞վ է սա՝ որ դիմեալ գայ Յեդովմայ, գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ։ Նոյն օրհնութիւն հանդիցէ ի սա և ի պատմուճան սորա լիութեամբ շնորհաց քոց։ Եւ մեք ամենեքեան աղաչեմք զանփոփոխելի տէրութիւն Հոգւոյդ Հզօրի, առաքեա՛ Տէր զցօղ քաղցրութեան քոյ, և բարեգործեա՛ յանձին և յիշխանական ազգման զգայութեան՝ զամենալից շնորհս բաշխապարգև քո ողորմութեան։ Եւ հերկեա՛ զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտից, յընդունակութիւն արդասեաց հոգևոր սերմանդ։ Քում ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զամենայն պարգևս ի մեզ ծաղկեալ և աճեցեալ, որ ձեռնադրես առաքեալս, լցուցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համերս, և բանաս զիակեալ ականջս խլից, որպէս և ազգակիցն քո՝ էակիցն Հօր՝ անդրանիկն Որդի, քոյին գործակցութեամբ ներգործելով

զայս ամենայն՝ քարոզեաց զքեզ Աստուած հաւասարակից խոկութեանդ Հօր։ Շնորհեա՛ և կոչեցելոյս այժմ առ ի քէն ի գործ վերակացութեան տնտեսութեան խորհրդոյ Եկեղեցւոյ սպասաւորել, խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ։ Հետևել արագաթռիչ ընթացիւք մտաց ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց։ Եւ ի մատչել սորա ի գլուխ հանդիսի մեկնութեան բանից աստուածայնոց, նախաժամանեսցէ առ սա գթութիւն քո, խօսելով ի սա զարժանն և զպիտանին և զհաճոյսն քո ի ժամանակի, ի փառս և ի գովեստ աստուածութեանդ քո, և ի լրութիւն շինութեան կաթուղիկէ Եկեղեցւոյ։ Կարկառեա՛ ի վերայ սորա զամենամերձ աջ քո, և զօրացո զսա շնորհօք գթութեան քո։ Փարատեա՛ ի մտաց սորա զմէգ մթութեան մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին և զխաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստից ի կենցաղոյս երկրէ ի բարձունս։ Լուսաւորեա՛ ի սմա վերստին զծաղումն անստուեր հրաշից գիտութեան աստուածութեան քո հզօր, արժանի լինել՝ առնել և ուսուցանել՝ յօրինակ բարեաց աստուածասէր լսողաց։ Շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ հրաւիրեաց զմեզ և կոչեաց յարքայութիւն իւր և ի փառս, և քեզ Հօր ամենակալի՝ և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Ապա ասէն Շարական Գ.

Որք արժանաւորեցայք ի կոչումն։
Զօրացեալքս ի քեզ Քրիստոս Ժողովուրդ։
Ուրախ լեր եկեղեցի սուրբ հարսն։
Յեր այսորիկ դնէ Պաղատարդն ի գլուխ դուռնէրելոյն և ասէ.

Ա՛ռ քեզ սաղաւարտ փրկութեան ի ձեռաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ զգենոյցանէ նմա զլուսրջառն և ասէ.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս զգեցուցանէ քեզ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան նորակերտ, ի վայելչութիւն նորոգ և հոգևոր կենաց.

Եւ ապա կապէ զգօտին և ասէ.

Ա՛ռ քեզ իշխանութիւն ի Հոգւոյն սրբոյ՝ կապելոյ և արձակելոյ. զոր Տէրն մեր ետ հրաման առաքելոցն սրբոց ասելով. Որ միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ

յերկինս. և զոր միանգամ արձակիցէ՛ք յերկրի, եղեցի արձակեալ յերկինս։

Եւ ինչ պանէն Սարկաւագունք պնուէրքեալն յեպ կոյս սեղանոյն է զգեսպասարքել, ասէ Խորհուրդ խորին։ Եւ ապա քեզքեն քուրվարա և մոնեղինօվ զսուրբ Մեռոնն է սրբապանէն ասելով Շարական Դ. Կենդանարար Աստուած։

Յետ այնորիկ Եպիսկոպոսն սուրբ է յերեսս զՄեռոնն հեղու յամառ, և ասէն Շարական Դ. Առաքելոյ աղաւնոյ։

Եւ Եպիսկոպոսն օծանէ սրբալոյս Մեռոնաւն նախ զճակատ նուիրելոյն ասելով է յայն.

Օրհնեսցի՝ օծցի և սրբեսցի Ճակատ (այս անուն) քահանայիս՝ այս նշանաւ։

Ապա զերիս յերեսն է հինգեան ափ է քաց յարիալ՝ օծանէ ասելով է յայն.

Օրհնեսցի՝ օծցի և սրբեսցի աչ ձեռն (այս անուն) քահանայիս՝ այս նշանաւ։

Նոյնպէս օծանէ զյոյ յերեսն և ասէ.

Օրհնեսցի՝ օծցի և սրբեսցի ահեակ ձեռն (այս անուն) քահանայիս՝ այս նշանաւ։

Եւ յօծանելն՝ յաջ բունէն սկսանի օծանել դէպ է յոյ ճկոյրն, և յահեակ բունէն յաջ ճկոյրն։

Եւ զնի օծմանն ասէ զաղօթս.

Տէր Աստուած մեր՝ որ օծեր սրբութեամբ և օրհնութեամբ զձեռս զայս, զամենայն զոր միանգամ սա օրհնէ՝ օրհնեա՛, և զոր ինչ կնքէ յանուն քո՝ հաստատեա՛ և կատարեա՛. զի լեցի զօրացեալ շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Որում վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Յետ այսորիկ սուրբ Եպիսկոպոսն զՍկիհրն և զմաղզմայն հանդերձն կենարար Մարմնով և Արեամբ, և պայ է յերանոցն ասէ.

Ա՛ռ ընկալ քեզ իշխանութիւն և կարողութիւն ի Հոգւոյն սրբոյ, կնքել և կատարել զսուրբ պատարագս յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ վասն կենդանեաց և նընջեցելոց։

Յետ այսորիկ սուրբ Եպիսկոպոսն ըստ բուրվառն, և խնկարկանամբ ասէ երիցս սուրբ նոցընծայն.

Եւ ևս խաղաղութեան զՏեր աղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնեա (այս անուն) քահանայ։

Եւ նորա ընկալեալ երիրպագանամբ երիցս ասէ.

Օրհնութիւն և փառք Հօր։ Խաղաղութիւն ամենեցուն։

Եւ յասելն զարանայ և խալանէ է վերայ ժողովրդեանն։

Եւ ապա դարձեալ Եպիսկոպոսն է վերայ նոցընծային ասելով.

Օրհնութիւն Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ի Ջ-
ցէ ի վերայ քո, որ կատարեցար ի կարգ քահանայութեան, ընտ-
ծայել զառաջադրութիւն մարմնոյ և արեանն Քրիստոսի վասն
խաղաղութեան աշխարհի և թողութեան մեղաց. ամէն:

Նրբգեն դալբրն դաս ատ դաս ղայս գանյ.

Ով ա ն մա հ հաց կե-
նա ց մեզ տու ա ր
տէր ցի սու, ս քա ւե-
ցե ր ըզ պա ր տի -
ս նա խա հո րն
Ա. դա մա յ :

Բա րե բա ր ըը նու-
թիւ ն մի ա ծի ն
Հօր ծը նու նդ ի յերկ-
րի և բե ւ ետ -

ն ի ն ա ր դ
լ մարմ նա ց ր ի
կու սէ ն :

Ի յերկ նի ց գոլ ան-
հա ս թէ զի ա ր դ
մարդ ե զե ր կամ ո ր-
պէ ս կու սա կա -
ն ա նա բուի քո
ա ռու մն:

Մինչ յեր կու ց մի ա -
ցա ր ան շը վո թ
խառ նը մա մբ, զոր մը -
տо ք սքան չա նա -
մք եւ գո վե մք օրհ-
նու թեա մբ :

պե տան ո ր ը նդ քե -
զ զի լը ցե ր
սուրբ հո գ ւո վ ։
Զնը ւի ր եա լքս յաս տի-
ճա ն որ շնո ր հօ ք
օ ծե ցա ն , զխոր հուրդ
քո սրբ բու թեա -
մբ գոր ծե ս ցե ն ան-
խա փա ն ։
Զքեզ ու նի մք բա բե-
խօ ս բնա կա բա ն
մայր բա նի ն , զի տա-
ցե ս հա նա պա -
զ մեզ զա ն ճա ռ քո
բա բի ազ ։

Դու օ ծա ր ի Հօ -
րէ որ ի քե զ
հա ճե ցա ւ , օ ծե -
ցե ր ը զ մա ր դի -
կ որ հո գ ւո վ նոր
ծը նա ն ։
Զա հա բո ն ա ռա-
ջի ն զքա հա նա յն
ի հը նու մն , զվար դա-
պե տս ո ր ը նդ քե -
զ օ ծե ցե ր ի
վե ըջ նու մն ։
Զքո ընտ բեա լ քըս ըբ-
մա ն օ ծե ցե ր
սուրբ իւ ղո վ զհայ բա-

Եւ քեզ վա ռս եր գես-

ցու՝ ք այժմ ը նդ հօ . ր

յա՛ ւի տ եա ն հա մա-

գո յ սուրբ հո գ ւո -

յն այժմ եւ մի շտ յա-

վի տ եա ն ։

Եւ՝ ղինի Սուրբ խաչիւս։ Պահպանեա զմեզ եւ զծառայս քո ընդ հոլմանեաւ։

Եւ՝ յայնէ Սարկաւագն՝ Ողջոյն տուք միմեանց. Եւ ողջունի նորընծայն յԵպիսկոպոսէն Եւ է փոխանայիչ։ Ապա հաղորդեսցի ճաշակոյ Եւ ապէան Տեառն կոչեցեալն է կոչնական։ Եւ՝ փառաւորն օր կայցէ յեկեղեցին, ղկարգն ուսցի Եւ ղինուն ծանիցէ։ Եւ՝ Արքիսպոսի Աստուածոյ մերոյ փառաւ յաւիտեանս, ամէն։

ԿԱՆՈՆ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՐԵՂԱՑԻ.

Յառաջ քան զԷրբէկոյի ժամերգութիւնն կոչէ Եպիսկոպոսն առ ինքն զնորոգ յեռանդրեալն և յաշ առնէ նմա զգրաւոր խոստմանն զոր պարտի անշուշտ տալ ի յեռանդրութիւնեան իւրոմ ի Սարկաւագ՝ յայս յիշեանիկ՝ ի ‘‘Ես (այս անուն) խոստանամ և ուխտիմ առաջի Աստուծոյ և սրբոց նորա զանխոտ կապարեալ հնազանդութիւնեան, կամաւոր աղքատութիւնեան և կրօնաւորական ողջախոհութիւնեան, ուրանալ զանձն և զյօժարութիւն կամաց իմոց, և կալ ի կարգի սահմանաց Հարցն սրբոց, ընդ հրամանաւ վանահօր (այս անուն վանէց),,: Եւ ընդունի ի նմանէ զխոստմունս հաստատուն կալոյ յուխտն ինովն ինովն ցվախճան կենաց իւրոց:

Ի՞նչ ի պահանջէրէկոյի ժամերգութիւնանն Եպիսկոպոսն յանուն ի վերայ բերն. բերեն առաջի նորա զյեռանդրեալ նորընծայն, և ասէն Շարական ԻԶ. Պարծանք Եկեղեցւոյ եւ ուրախութիւն հրեշտակաց:

Եպս Սաղմս ԺԴ.

Տէր՝ ո՞վ կացցէ ի խորանի քում՝ կամ ո՞վ բնակեսցի ի լեառն սուրբ քո:

Ընդունելոյ յԵպիսկոպոսէ:

Այսպէս ասէ Տէր Աստուած՝ որ արար զքեզ՝ Յակովբ, եւ որ ստեղծ զքեզ՝ Իսրայէլ. մի երկնչիր՝ զի փրկեցի զքեզ՝ եւ կոչեցի քեզ զանուն քո՝ թէ իմ ես: Եւ եթէ անցանիցես ընդ ջուրս՝ ընդ քեզ եմ՝ եւ գետք զքեզ մի ողողեսցեն. եւ եթէ անցանիցես ընդ հուր՝ մի՝ այրեսցիս՝ եւ բոց նորա զքեզ մի՝ կիզցէ: Զի ես եմ Տէր Աստուած քո սուրբն Իսրայէլի՝ որ փրկեմ զքեզ. արարի փոխանակ քո զԵգիպտոս՝ եւ զԵթիոպիա եւ զՍուհէն քեզ փոխանակեցի: Ուստի եւ պատուական իսկ եղեր՝ եւ առաջի իմ փառաւորեցար. եւ ես սիրեցի զքեզ. եւ տայց զմարդիկ փոխանակ քո՝ եւ զիշխանս փոխանակ գլխոյ քո:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց ընդունելն է ընթերցուածս:

Այսուհետեւ զօրացարուք Տերամբ՝ եւ կարողութեամբ զօրութեան նորա. եւ զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ՝ զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան՝ այլ ընդ իշխանութիւնս՝ եւ ընդ պետութիւնս՝ եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այս չարութեան որ ի ներքոյ երկնից: Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ՝ զի կարող լինիցիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան: Եւ իբրեւ զամենայն ինչ կատարիցէք՝ հաստատուն կացէք՝ զտեղի կալջիք՝ պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ՝ եւ զգեցեալ զզրահսն արդարութեան՝ եւ ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան: Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոյ՝ որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել: Եւ առէք զսաղաւարտն փրկութեան՝ եւ զսուսեր Հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ: Ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք՝ աղօթս առնել յամենայն ժամանակի Հոգւով. եւ ի նոյն աքնեսջիք ամենայն ժուժկալութեամբ:

Ալէ. ալէ։ Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ։ Գտի զԴաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եկեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ Կեսարիայն՝ հարցանէր ցաշակերտսն եւ ասէր. զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ Եւ նոքա ասեն. ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, եւ կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն։ Ասէ ցնոսա Յիսուս. իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի ետ Սիմովն Պետրոս եւ ասէ. դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. երանի՝ քեզ Սիմովն՝ որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է։ Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն։ Եւ տացի քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։

Պարկապետն Քրիստոսի.

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ՝ զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր. Տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի։

Եւ Եպիսկոպոսն զՆէ զՅեռն ի վերայ գլխոյ Նո-էրելոյն և ասէ զաղօթս.

Զոհանամք զքէն Տէր Աստուած մեր, մարդասէր և բազմագութ, որ կոչեցեր զծառայս քո (զայս անուն) հոգևոր օրհնութեամբ ի գործ քահանայութեան՝ ի սպասաւորութիւն ճշմարիտ մարմնոյ և արեան Միածնի քո։ Տո՛ւր սմա շնորհս որպէս սրբոց առաքելոցն. զի զոր կապեսցէ յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեսցէ յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս. և վերակացու լինել և առաջնորդ բանաւոր հօտի քո Տէր։ Լցո՛ զսա ամենասուրբ Հոգւովդ զօրութեամբ, որպէս զի պահեսցես զսա սուրբ և անարատ առաջի ամենատես աչաց քոց, և յաջողեսցես սմա յամենայն ի գործս բարիս։ Որպէս զի ամբիծ գնացիւք և առաքինասէր վարուք կացցէ ըստ կամաց քոց սրբոց և բարեսիրաց, հովուել երկնային և գերապայծառ իմաստութեամբ և հոգևոր հանճարով զբանաւոր հօտ քո՝ զամենայն աւուրս կենաց իւրոց. պահել զգուշութեամբ զինքն և զժողովուրդ իւր՝ որ հաւատացաւ սմա, ի վնասակար իրաց և յամենայն չարահնար փորձանաց բանսարկուին. և արժանաւորիլ յաւիտենական և երկնային ուրախութեանցն՝ զոր պատրաստե-

ցեր՝ Աստուած՝ սիրելեաց քոց։ Եւ մեր ամենեցուն ընկալեալ զսա հոգևոր և սուրբ ողջունիւ՝ դոհասցուք զքէն՝ մարդասէր Տէր՝ յաղագս տուեցելոց մեզ բարեացդ և խոստացելոց յանըսպառ կեանսդ. որոց լեցի ամենեցուն մեզ հասանել՝ շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում քեզ ամենակալ Հայր անսկիզբն՝ հանդերձ կենդանարար և աղատիչ սուրբ Հոգւովդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Խնդրեմք ի քէն, մարդասէր Տէր, նայեա՛ հաշտ ակամբ և քաղցր կամօք քո յաղաչանս ծառայից քոց, և օրհնեա՛ ըզպատմուճան և զարտախուրակ սորա, որպէս օրհնեցեր ի ձեռն Մովսիսի՝ զՀարոնի և զորդւոց նորա։ Օրհնեա՛ Տէր զպատմուճան սորա որպէս զմաշկեակն մեծին Եղիայի, յորոյ ձեռն հանգեաւ հոգին Եղիայի ի վերայ Եղիսէի։ Օրհնեա՛ Տէր զպատմուճան հանդերձի սորա, որպէս զի հանգիցէ ի վերայ սորա օրհնութիւն աստուածային կամաց քոց, զոր նախագուշակեալ քո մարգարէին ասէր. զարդարեալ գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ։ Արդ՝ նոյն օրհնութիւն հանգիցէ ի սա, և ի պատմուճան սորա լիութիւն շնորհաց քոց։ Զի և սա արժանասցի փառաւորել զքեզ՝ Հայր ամենակալ՝ ընդ Որդւոյ և ընդ ամենասուրբ Հոգւոյդ այժմ և միշտ։

Սարկաւագն փարողէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո՛ եւ ողորմեա։

Դպիրքն.

Օրհնութիւն և փառք Հօր։

Եւ ասէ դարձեալ ղաղօթս, որ յապուկ է կոսանաց։

Աստուած յաւիտենական, կատարեալ իսկութեամբ ի փառս վայելչականս, որ յաւէտ օրհնաբանիս ի հրեղինաց յանմահ սուրբ զուարթնոցն, ի սերովբէից և ի քերովբէից և յամենայն իմանալի խմբագործ դասակցութեանցն հոգեղինաց։ Որ հաճեցար ընդ նոսին ընդունել և զպաշտօն բանական բնութեանդս ի հոգեղինաց և ի մարդկային ազանց, և ընտրեցեր մաքուր կոչմամբ զդասս արդարոցն՝ արժանաւորիլ առ քեզ

բարեպաշտ մաղթանաք և հաճութեամբ նուիրանաց պատարագին, որպէս զԱբէլն առաջին ի հոտ անուշից քեզ ի հաճոյս, և զպայման խաղաղական խորհրդոյն զՆոյեանն նաւահանգիստ՝ դադարման ալեաց՝ ոգէվէրն խաղաղացեալ վրդովմանց, խորհրդակիր և ձայնալուր արժանաւորութեամբ արթնացեալ սրբութեամբ նուիրելոյն քեզ Տեառնդ կուսակրօն մաքրութեամբ՝ զհոգևոր հաճութիւն կատարելով ըստ տեսլեանն խորհրդոյ քոյին երևմամբն։ Մարգասիրեա և ի սմա զզէնն հոգևոր՝ իմանալի դասակցութեանց հրեղէն զօրաց՝ արիանալ ի կուսականս յայսմ հանդիսի։ Եւ երեքանձնեայ և միաբուն Տէրութեան ամենասուրբ Երրորդութեանդ՝ վառիլ անեռևոյթ զենու։ Եւ հաճոյական մաղթանաք՝ ընդ Եղիայի արժանաւորիլ աստուածային և տեառնափայլ երևմանն։ Եւ ոգւով բերանոյ և բարբառով շրթանց՝ մաշել մահու կորբստեամբ զհակառակ և զանմարմին զաներևոյթ և զոգեկորոյս պատերազմ դիւական զօրացն և օդային այսոցն։ Զ՝զօրացն զսա Տէր ի պաշտաման այսմ հոգևոր խրախութեան, և բաշխմամբ անմահական հացիս՝ որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զի զմայլեալ ուրախասցի բերկրաղուարձ ցընծութեամբ աստուածարար և անապական բաժակին, շնորհաք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։ որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Յոյս արարածոց և կեանք նորոգման ամենեցուն՝ Միածին որդի և Բան Հօր։ որ եկիր նորոգել հոգևոր շնորհաք և լուսածագ վարդապետութեամբ զազգս մարդկան, որ և ընտրութեամբ նախահրաւէր կոչմամբ սուրբ Հոգւոյն յայտնեցեր զդասս առաքելոցն, զոր և սրբեալ կենարար բանիւ քո՝ բարեկամս քեզ անուանեցեր, և հրեղինաք զնոսա զենեալ լեզուաք՝ հաստատեցեր իբրև զվէմ անշարժ և որպէս զակն պատուական ի զարդ պարծանաց մանկանց նոր Սիոնի։ Մաքրեա Տէր զմիտս և զզգայարանս սորա և լուսաւորեա զիմաստս խորհրդոց սորա, որպէս և երանելի աշակերտացն շնորհեցեր գիտել զքեզ և քա-

բողել զհսկապէս և զճշմարիտ Աստուածութիւնդ քո։ Հանգո՛ ի սա զհոգի շնորհաց առ ի սիրել զքեզ, որպէս ետուր սրբոյ աւետարանչին Յովհաննու, չհայել ի կեանս աշխարհի, այլ զքեզ միայն սիրել և ստանալ զճշմարիտն արդարութիւն։ Եւ քեզ փառք պատիւ և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ե՝ առէն Պաղմոս Ծ.

Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Ե՝ Եպիսկոպոսն ասէ.

Պահեա՛ զանձն իմ սուրբ Տէր, և փրկեա՛ զծառայս քո՝ Աստուած իմ՝ որ ի քեզ յուսացայ։

Երգեցողն ասէն.

Աստուած իմ՝ ես ի քեզ յուսացայ՝ մի ամաչեցիր, եւ մի ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ։

Ե՝ Եպիսկոպոսն ասէ.

Մի՛ մերժիցէ սմա թշնամի։

Երգեցողն ասէն.

Եւ որդի անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զսա։

Ե՝ Եպիսկոպոսն ասէ.

Աստուած զօրութեանց, դարձո՛ զմեզ։

Քահանայն ասէն.

Երեւեցո՛ զերեսս քո ի մեզ եւ կեցո՛ զմեզ։

Ե՝ Եպիսկոպոսն ասէ զաղօթս.

Աստուած Հայր՝ ողորմած և անսխալ, որ ոչ ունիս դառնութիւն, հաշտեա՛ց ընդ որդիս քո՝ որ զարմանալի խորհրդով դարձուցանես զչարս ի բարութիւն։ Շնորհեա՛ զբարուք գիտութիւնդ բազմառատ յաճախութեամբ ծառայիս քո (այս անուն) աբեղայի. և մի՛ անարգեր զսա՝ որ առնու զձև կրօնաւորութեան ի ձեռն մերս անարժանութեան։ Այլ ըստ մեծութեան խորհրդոյս այսորիկ՝ Տէր Աստուած՝ լե՛ր սմա գործակից ի ձեռն Հոգւոյն սրբոյ, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք առ Հայրն Աստուած։

Աղաչեմք զքեզ Տէր Աստուած Հայր միշտնջենաւոր՝ ի ձեռն Որդւոյդ, որով արարեր զաշխարհս ամենայն. որ զհնացեալքս մեղօք՝ մարմնանալով Քրիստոսի քո նորոգեցեր. խնդրեմք ի քէն երկրպագութեամբ, շնորհեա՛ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ծառայիս քո (այս անուն) աբեղայի՝ որ ուրանայ զցանկութիւն աշխարհի՝ արժանի լի-

նել ողորմութեան քում։ Որպէս զի նորոգեսցի հոգւով և մարմնով, և զհին մարդն մերկասցի խորհրդովք իւրով և գործովք, և զգեցցի զնոր մարդն որ ի քէն է հաստատեալ արդարութեամբ և սրբութեամբ և ճշմարտութեամբ, շնորհօք Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Աղօթք առ Որդին Աստծին։

Տէր Յիսուս Քրիստոս, դու ես ճանապարհ, և առանց քո ոչ ոք կարէ գալ առ Հայր։ Վասն մեծի զթութեանդ զծառայս քո (պայ անուն) աբեղայ, որ ցանկայ հեռանալ յաշխարհէ, ած ի ճանապարհ և ի կարգ խոնարհութեան։ քանզի դու ես՝ որ կոչեցեր զմեղաւորս և ասացեր։ եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Տո՛ւր սմա ըստ բանի քում զօրանալ, և զբեռն մեղաց թեթևացո՛ ի սմանէ։ զի ծանիցէ զքաղցրութիւն քո և զհեղութիւն, զի կարող լիցի զգուշութեամբ պաշտել զքեզ օգնականութեամբ քո։ որ խոնարհեցար և եղեր զանձն քո ի վերայ ոչխարաց։ Ծանիր զսա ի մէջ ոչխարաց քոց, և սա ծանիցէ զքեզ և ձայնի քում լուիցէ։ զօտարի զհետ ո՛չ երթիցէ, և մի՛ լուիցէ զձայն այլոց, այլ զքոյդ։ որպէս ասացեր, որ զիս սիրէ՝ զհետ իմ եկեսցէ։ Եւ քեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Աղօթք առ Հոգին սրբոյ։

Սուրբ Հոգի Տէր Աստուած՝ որ յայտնեցար աշխարհի, աղաչեմք զշնորհս բարերարութեան քո։ որ քանզի ուր և կամիս շնչես զշնորհս աստուածեղէն, խոնարհեա՛ց ի ծառայս քո (պայ անուն) աբեղայ, և տո՛ւր սմա խորհուրդս բարիս։ իմաստնացո՛ առ ի քէն և ուղղեա՛ քոյին սովորական շնորհիւ, և օծ զսա քո օրհնութեամբդ։ Աղաչանօք բարւոյ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, զոր ետուր սահման այսմ սրբոյ օրինացս, և բարեխօսութեամբ ամենայն սրբոց քոց՝ ընտրել քեզ զորս ինքն անուանեաց։ Եւ դու՝ որ ես ներող ի վերայ մեղաւորաց, դարձո զսա յամենայն չար ցանկութեանց և արձակեա՛ յամենայն կապանաց մեղաց։ Հայեա՛ց ի սա, և զշնորհս յոր հաստատեցաւ՝ եռացո՛, և զամենայն

խռովութիւնս հեռացո՛։ Եւ մեծ զօրութիւն քո հովանի լիցի սմա, որպէս զի շարժեսցի սա յամենայն գործս բարիս յօժարամիտ կամօք ամենայն խոնարհութեամբ յաշխատութիւն՝ ի հնազանդութիւն և ի վշտակրութիւն։ Որպէս զի ածցէ ի կատարումն զսահմանեալ կարգըս ի ձեռն շնորհի քո՝ որ տուաւ մեզ առհաւատչեայ բարի, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում քեզ և Հօր ամենակալի վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Եւ ասէն Շարական Աշ.

Որ գերազանցեալ գտար առաւել։
Որ անճաշակ լինելով բազմաժամս։
Անմոռաց յիշմամբ առաջի Քրիստոսի։
Որ ի հանդէս քո ճգնութեան՝ երկ։
Որ գերագոյն քան զբնութիւն հոգի։
Ուստի եւ մեք տօնելով զճգնութեան։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՎԵՂԱՐԻ.

Սարկաւագն խարոզէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո՛ եւ ողորմեա։

Եպիսկոպոսն.

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժըմ և միշտ։

Եւ ասէ դպրոն.

Աղաչեմք զքեզ Տէր Յիսուս Քրիստոս՝ և խնդրեմք յառատ ողորմութենէ քումմէ, զվերարկու մեռելութեան մերոյ՝ որով և դու ծածկեցար խոնարհութեամբ, և զձև զգեստուս՝ զոր ետուն մեզ սուրբ հարքն մեր ի ցոյցս խոնարհութեան և ուրացութեան աշխարհի, որով և ինքեանք կերպարանեցան, դու Տէր օրհնեա՛, և զծառայս քո (զայս անուն) աբեղայ արժանի արա զկարգս սուրբ ունել և հանել ի գլուխ. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ։

Հանէ Եպիսկոպոսն զԼբրոնն (զգդալն) և ասէ.

Հանցէ Աստուած զհին մարդն գործովք իւրովք։

Եւ զգեցո՛ցանէ զՀեղարն և ասէ.

Աստուած զգեցուցանէ քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ և սրբութեամբ և ճշմարտութեամբ, և եղիցիս դու հպատակ և հնազանդ եկեղեցւոյ, կանխեալ ի սէրն Աստուծոյ հոգւով ի տուէ և ի գիշերի. ամէն։

Քարոզ՝ Սուրբ խաչիւս։ Աղօթք՝ Պահպանիչ եւ յոյս։

ԳԻՐՔ

ԳԱՒԱՌԱՆ ՏԱԼՈՑ

ԱՇԱԿԵՐՏԱՑՆ ՃՇՄԱՐԻՏ ԲԱՆԻՆ,

ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ,

ՆԱԽ ՁՄԱՍՆԱՒՈՐՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ՝ ՈՐ Է ԶՈՐՍ ԱՍՏԻՃԱՆ, ԵՒ
ԱՊԱ ՁԾԱՑՐԱԴՈՑՆՆ՝ ՈՐ Է ՏԱՍՆ ԱՍՏԻՃԱՆ,
ՈՐ ԼԻՆԻ ԲՈԼՈՐՆ ԶՈՐԵՔՏԱՍԱՆ։

ՑՕՐԻՆԵԱԼ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ,
ԳԵՐԱՀԱՆՃԱՐ ՀՌԵՏՈՐԻ ԵՒ ԱՆՑԱՂԹ ԱԽՈՅԵՆԻ ՍՈՒՐԲ ՀԱՒԱՏՈՅ,
ԱՇԱԿԵՐՏԻ ՄԵԾԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑԻՈՅ,
Ի ԼՈՒՍԱՁԱՐԴ ԲԱՆԻՑ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՄԱՐԴԱՐԷԻՆ ԵՍԱՅԵԱՅ ԼՈՒՍԱՒՈՐ ՄՏՕՔ
ՄԵԿՆՈՂՕՐԷՆ ԻՄՆ ՏԵՍՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԳԱՒՈՐԵԱԼ։

ԿԱՆՈՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ԻՋԽԱՆՈՒԹԵԱՆ

Կապարէն գիշերապաշտօնն մինչև յա-
ռաւօտու ժամն՝ Լցաք։ Ապա գիշերու-
պէսկոպոսն, որ ընկալեալ էր պսակաւոր և
գնայրագոյն իշխանու-թիւն վարդապետու-
թեան, որ կոչի Մեծ Վարդապետ, և փահա-
նայ և դպիր, և գնան ներփօրի- է դուռն
եկեղեցւոյն ասելով Շարական Ակ, Զքեզ
քաղաք Աստուծոյ եւ տաճար։ Եւ նորին
անդր Մեծ Վարդապետն յաղնու՝ երգեան յա-
րիւրեալ, և հրաւիրեալն բացաւ գլխով է գուռ-
գայ առաջի նորա։ Եւ Սարկաւագն երեր
է սրբապանէն գաւազանն ծածկեալ շղար-
շի- և կանգնի առաջնիր, և ասէն Շարական
Դկ. Ի հարաշարժ աղբերէն անհա։

Այսօր ի սուրբ վերնատունն։

Հրճուողական խնդութեամբ։

Եւ Աւագ փահանայն ասէ բարձր յայնի-.

Հայր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ եկեղեցի՝ հանդերձ ամենայն ուխտիւս, զի կոչեսցես (զայս անուն) բանի սպասաւորս՝ ի պատիւ եւ յաստիճան մասնաւոր վարդապետութեան։

Ապա Մեծ Վարդապետն և ասէ.

Ունի՞ զուսումն վարդապետութեան և զգիտութիւն հին և նոր աստուածային կտակարանացն սրբոց, և զդաւանութիւն ուղղափառ խոստովանութեան հաւատոյ ի սուրբ Երրորդութիւնն և ի մարդեղութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Եւ հրաժարի՞ յամենայն հերձուածողացն աղանդից։

Ասէ Աւագ փահանայն.

Այո՛ Հայր սուրբ, ունի լիովին զուսումն վարդապետութեան եւ զգիտութիւն հին եւ նոր աստուածային կտակարանացն սրբոց, եւ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, եւ խոստովանի սուրբ զերրորդութիւնն զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին համագոյ եւ միասնական, եւ զմարդեղութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ընդ ուղղափառ սուրբ հայրապետսն։

Եւ Մեծ Վարդապետն ասէ.

Պարտ է քեզ որդեակ՝ հրաժարիլ յամենայն աղանդոյ հերձուածողաց, որք ընդդէմ խոստեցան ուղղափառ հաւատոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Պաղատանքայսն յայնի-.

Նզովեալ եղիցի։

(Ոչնայցելոն կարգա- գրոցս յերեսս 32 — 36 և կապարէոցս)։

Ե- ապա ալէ. ալէ՛լ-է (Սաղմոս Բ)։

Խնդրեա՛ յինէն եւ տայ քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն, եւ յիշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի։ Փա.Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, եւ ժողովուրդք խորհեցան ի սնոտիս։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՂԷՑ։

Եւ Մովսէս արածէր զխաշինս Յոթորայ աներոյ իւրոյ՝ քրմին Մադիանացւոց. եւ ած զխաշինսն յանապատ, եւ եկն ի լեառն Աստուծոյ ի Քորէբ։ Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ ի միջոյ մորենւոյ, եւ տեսանէր զի մորենին վառեալ էր հրով, եւ ոչ այրէր մորենին։ Եւ ասէ Մովսէս. անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ. զի՞ է զի ոչ այրիցի մորենին։ Իբրեւ եաեսն Տէր՝ եթէ մերձենայ տեսանել, կոչեաց զնա Տէր ի միջոյ մորենւոյն, ասէ. Մովսէս, Մովսէս. եւ նա ասէ, զի՞ է։ Եւ ասէ. մի մերձենար այսր. լոյծ զկօշիկս քո յոտից քոց. զի տեղիդ յորում կաս դաւ ի դմա՝ երկիր սուրբ է։ Եւ ասէ ցնա. ես եմ Աստուած հօր քոյ, Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակովբայ. եւ դարձոյց Մովսէս զերեսս իւր, քանզի երկնչէր հայել առաջի Աստուծոյ։ Եւ ասէ Տէր ցՄովսէս. տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ յԵգիպտոս, եւ լուայ աղաղակի նոցա ի գործավարացն իւրեանց, զի գիտեմ զվիշտս նոցա. եւ իջի փրկել զնոսա ի ձեռաց Եգիպտացւոցն, եւ հանել զնոսա յերկրէն յայնմանէ, եւ տանել զնոսա յերկիր բարի եւ ընդարձակ, յերկիր որ բղխէ զկաթն եւ զմեղր, յերկիրն Քանանացւոց եւ Քետացւոց եւ Ամորհացւոց եւ Փերեզացւոց եւ Խեւացւոց եւ Գերգեսացւոց եւ Յեբուսացւոց։ Եւ արդ աւասիկ աղաղակ որդւոցն Իսրայէլի հասեալ է առ իս, եւ տեսի ես զնեղութիւնն՝ զոր նեղեն զնոսա Եգիպտացիքն. Եւ արդ ե՛կ առաքեցից զքեզ առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց, եւ հանցես զժողովուրդ իմ զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց։ Եւ ասէ Մովսէս ցԱստուած. ո՞վ եմ ես՝ զի երթայցեմ առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց, եւ հանիցեմ զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց։ Եւ ասէ. ես եղէց ընդ քեզ. եւ այս եղիցի քեզ նշան՝ թէ ես առաքեցի զքեզ հանել զժողովուրդ իմ յԵգիպտոսէ, եւ պաշտեսջիք զԱստուած ի լերինս յայսմիկ։ Եւ ասէ Մովսէս ցԱստուած. ահա ես երթեալ առ որդիսն Իսրայէլի՝ ասիցեմ ցնոսա. Աստուած հարցն ձերոց առաքեաց զիս առ ձեզ. եւ հարցանիցեն զիս՝ թէ զի՞նչ է անուն նորա, զի՞նչ ասացից ցնոսա։ Եւ ասէ Աստուած ցՄովսէս. ես եմ Աստուած Որ էն. եւ ասէ. այսպէս ասասցես ցորդիսն Իսրայէլի. Որ էն առաքեաց զիս առ ձեզ։ Եւ ասէ դարձեալ Աստուած ցՄովսէս. այսպէս ասասցես ցորդիսն Իսրայէլի. Տէր Աստուած հարցն ձերոց, Աստուած Աբրահամու, եւ Աստուած Իսահակայ, եւ Աստուած Յակովբայ՝ առաքեաց զիս առ ձեզ. այս է անուն իմ յաւիտենական, եւ յիշատակ յազգաց յազգս։ Արդ՝ երթեալ ժողովեսցես զծերակոյտ որդւոցն Իսրայէլի, եւ ասասցես ցնոսա. Տէր Աստուած հարցն ձերոց երեւեցաւ ինձ, Աստուած Աբ-

բահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակովբայ եւ ասէ. այցելութեամբ այց արարից ձեզ, եւ որ ինչ անցք անցին ընդ ձեզ յԵգիպտոս, եւ ասեմ, հանիցէ զձեզ յերկրէ չարչարանաց Եգիպտացւոցն՝ յերկիրն Քանանացւոց եւ Քետացւոց եւ Ամորհացւոց եւ Փերեզացւոց եւ Գերգեսացւոց եւ Խեւացւոց, եւ Յեբուսացւոց, յերկիր՝ որ բղխէ զկաթն եւ զմեղր. եւ լուիցեն ձայնի քում։ Եւ մտցես դու եւ ծերակոյտ որդւոցն Իսրայէլի առ Փարաւոն արքայ Եգիպտացւոց, եւ ասասցես ցնա. Տէր Աստուած Եբրայեցւոց կոչէ զմեզ առ ինքն. արդ երթիցուք մեք երիւ՝ աւուրց ճանապարհ յանապատ, զի զոհեսցուք Տեառն Աստուծոյ մերում։ Եւ ես գիտեմ, եթէ ոչ թողուցու զձեզ արքայն Եգիպտացւոց գնալ, եթէ ոչ հզօր ձեռամբ։ Եւ ձգեալ զձեռն իմ հարիցէ զԵգիպտոս ամենայն սքանչելեօք իմովք՝ զոր արարիցէ ի նոսա, եւ ապա արձակեսցէ զձեզ։ Եւ տայ շնորհս ժողովրդեան իմոյ առաջի Եգիպտացւոցն. եւ յորժամ ելանիցէք, մի՛ ելանիցէք դատարկ, այլ խնդրեսցէ կին ի դրացւոյ եւ յերդակցէ իւրմէ անօթս ոսկւոյ, եւ անօթս արծաթոյ, եւ հանդերձս. եւ զարդարեսջիք զուստերս եւ զդրստերս ձեր, եւ դաւաճանեսջիք զԵգիպտացիսն։ Պատասխանի ետ Մովսէս եւ ասէ. եթէ ոչ հաւատայցեն ինձ, եւ ոչ լուիցեն ձայնի իմում, քանզի ասիցեն թէ չիք երեւեալ քեզ Աստուծոյ, զի՞նչ ասացից ցնոսա։ Ասէ ցնա Տէր. զի՞նչ է այդ որ ի ձեռին քում է. եւ նա ասէ. գաւազան։ Եւ ասէ. ընկեա՛ զդա ի գետին. եւ ընկէց զնա ի գետին, եւ եղեւ օձ, եւ փախեաւ Մովսէս ի նմանէն։ Եւ ասէ Տէր ցՄովսէս. ձգեա՛ զձեռն քո եւ բուռն հար զոտանէն. եւ ձգեաց զձեռն իւր եւ բուռն էհար զոտանէն, եւ եղեւ գաւազան ի ձեռին նորա։ Զի հաւատասցեն քեզ՝ թէ երեւեալ է քեզ Տէր Աստուած հարցն նոցա, Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակովբայ։ Ասէ ցնա դարձեալ Տէր. արկ զձեռն քո ի ծոց քո. եւ արկ զձեռն իւր ի ծոց իւր, եւ էհան զնա ի ծոցոյ իւրմէ, եւ եղեւ ձեռն նորա բորոտ իբրեւ զձիւն։ Եւ ասէ. արկ զձեռն քո ի ծոց քո. եւ արկ զձեռն իւր ի ծոց իւր, եւ էհան զնա ի ծոցոյ իւրմէ, եւ դարձեալ անդրէն ի նոյն հաստատեցաւ ի գոյն մարմնոյ իւրոյ։ Եթէ ոչ հաւատայցեն քեզ եւ ոչ լուիցեն ձայնի առաջնոյ նշանին, հաւատասցեն քեզ ձայնի երկրորդի նշանիդ։ Եւ եղիցի եթէ ոչ հաւատասցեն երկոցունց նշանացդ այդոցիկ, եւ ոչ լուիցեն ձայնի քում, առցես դու ի ջրոյ գետոյն եւ հեղցես ի ցամաքի, եւ եղիցի ջուրն՝ զոր առնուցուս ի գետոյ անտի՝ արիւն ի ցամաքին։ Եւ ասէ Մովսէս ցՏէր. աղաչեմ զքեզ Տէր, չեմ բաւական, որպէս թէ յերիկէ եւ յեռանդէ, եւ ո՛չ յորմէ հետէ սկսար խօսել ընդ ծառայի քում. զի նրբաձայն եւ ծանրալեզու եմ ես։ Եւ ասէ Տէր ցՄովսէս. ո՞վ ետ բերան մարդոյ, կամ ո՞վ արար զխուլն եւ զհամր, զականին եւ զկոյր. ոչ ապաքէն ես Աստուած. եւ արդ երթ, եւ ես բացիցէ զբերան քո, եւ խելամուտ արարիցէ

զքեզ՝ զոր պարտ իցէ խօսել։ Եւ ասէ. ապաշէմ զքեզ Տէր. ահա քեզ ի ձեռն զայլ ոք զօրաւոր՝ զոր առաքիցես։ Եւ բարկացաւ Տէր սրտմտութեամբ ի վերայ Մովսէսի եւ ասէ. ոչ աւանիկ կայ Ահարոն եղբայր քո Ղեւտացի. գիտեմ զի խօսելով խօսեսցի նա ընդ քեզ. եւ ահա նա ելցէ ընդ առաջ քո, եւ ի տեսանելն զքեզ բերկրեսցի ի միտս իւր. եւ խօսեսցիս ընդ նմա, եւ տացես ըզպատգամս իմ ի բերան նորա, եւ ես բացից զբերան քո եւ զբերան նորա, եւ խելամուտ արարից զձեզ՝ զինչ առնիցէք։ Եւ նա խօսեսցի առ ի քէն ընդ ժողովրդեանն. եւ նա եղիցի քո բերան, եւ դու եղիցիս նմա յաստուածակոյս կողմանէ։ Եւ զգաւազանդ որ դարձաւ յօձ՝ առցես ի ձեռին քում, որով արասցես նշանս.

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱԿՑԻ։

Ճանաչել զիմաստութիւն եւ զիրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, եւ ուղղել զիրաւունս։ Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս եւ զհանճար։ Որոց իբրեւ լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի. իսկ որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստասցի։ Ի միտ առցէ զառակս եւ ըզբանս խորհնս, զճառս իմաստնոց եւ զառակս նոցա։ Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն, հանճար բարի ամենեցուն որ առնէն զնա. պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգօնութեան. զիմաստութիւն եւ զիրատ ամբարիշտք անգոսնեն։ Լուր, ո՛րդեակ, խրատու հօր քոյ, եւ մի՛ մերժեր զօրէնս մօր քո, զի պսակ շնորհաց ընկալցիս ի գլուխս քո, եւ մանեակ ոսկի ի պարանոցի քում։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Եւ եղեւ յամին յորում մեռաւ Ոզիա արքայ, տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան եւ վերացելոյ, եւ լի էր տունն փառօք նորա։ Եւ սերովբէք կային շուրջ զնովաւ. վեց թեւք միոյ՝ եւ վեց թեւք միոյ. երկուքն ծածկէին զերեսս իւրեանց, եւ երկուքն ծածկէին զոտս իւրեանց, եւ երկուքն թռուցեալ։ Աղաղակէին մի առ մի եւ ասէին. սուրբ. սուրբ. սուրբ, Տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր փառօք նորա։ Եւ վերացաւ դրանդն ի ձայնէն զոր աղաղակէին, եւ տունն լի եղեւ ծխով։ Եւ ասեմ. վա՛յ է ինձ, ես այր տառապեալ զիա՞րդ կամ հիացեալ. զի մարդ եմ՝ եւ պիղծ շրթունս ունիմ, եւ ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես, եւ զՏէր զօրութեանց տեսի աչօք իմովք։ Եւ առաքեցաւ առ իս մի ի սերովբէից անտի, եւ ի ձեռին իւրում ունէր կայծակն. զոր առեալ ունելեօք ի սեղանոյ անտի, եբեր մերձեցոյց ի բերան իմ, եւ ասէ. ահաւասիկ մերձեցաւ այդ ի շրթունս քո, եւ հանցէ զանօրէնութիւնս քո, եւ զմեղս քո սրբեսցէ ի քէն։ Եւ լուայ զբարբառ Տեառն որ ասէր. զո՞ առաքեցից եւ կամ ո՞ երթիցէ առ այն ժողովուրդ։ Եւ ասեմ. ահաւասիկ ես, առաքեա՛ զիս։ Եւ ասէ. երթ եւ ասա՛ ցժողովուրդն ցայն. լսելով լուիջիք եւ մի՛ իմասջիք, եւ տեսանելով տեսջիք՝ եւ մի՛ գիտասջ

ջիք։ Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ, եւ ականջօք իւրեանց ծանրունս լուան, եւ զաչս իւրեանց կափուցին, զի մի երբէք տեսանիցեն աչօք, եւ լուիցեն ականջօք, եւ իմանայցեն սրտիւք, եւ դառնայցեն՝ եւ բժշկեցից զնոսա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՐԵՌԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Պատգամն Աստուծոյ, որ եղեւ ի վերայ Երեմիայի Քեղկեայ ի քահանայից անտի՝ որ բնակեալ էր յԱնաթովթ յերկրին Բենիամինի։ Առ որ եղեւ բան Տեառն յաւուրս Յովսիայ որդւոյ Ամոնայ արքայի Հրէաստանի, յերեքտասաներորդի ամի թագաւորութեան նորա։ Եւ եղեւ յաւուրս Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի Հրէաստանի, մինչեւ ի վախճան մեռասաներորդի ամին Սեդեկիայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ՝ ցգերութիւնն Երուսաղէմի, յամսեանն հինգերորդի։ Եւ եղեւ բան Տեառն առ իս՝ եւ ասէ. Մինչչեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ, եւ մինչչեւ ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի զքեզ, մարգարէ ի հեթանոսս եդի զքեզ։ Եւ ասեմ. որ եսդ Տէր Տէր, ահաւասիկ եւ խօսել իսկ ոչ գիտեմ, զի մանուկ եմ ես։ Եւ ասէ ցիս Տէր. մի ասեր եթէ մանուկ եմ ես. զի առ ամենեսեան առ որս առաքեցից զքեզ՝ երթիցես, եւ ըստ ամենայնի զոր միանգամ պատուիրեցից քեզ՝ խօսեսցիս։ Մի երկիցես յերեսաց նոցա, զի ընդ քեզ եմ ի փրկել զքեզ, ասէ Տէր։ Եւ ձգեաց Տէր զձեռն իւր առ իս՝ եւ մերձեցոյց ի բերան իմ, եւ ասէ ցիս. ահա եսու զբանս իմ ի բերան քո. ահա կացուցի զքեզ այսօր ի վերայ ազգաց եւ թագաւորութեանց, խլել եւ բրել, կորուսանել եւ յատակել, շինել եւ տնկել։ Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ. զի՞նչ տեսանես, Երեմիա. եւ ասեմ. գաւազան ընկուզի տեսանեմ ես։ Եւ ասէ ցիս Տէր. բարւոք տեսանես. զի զարթուցեալ եմ ես ի բանս իմ առնել զնոսա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Է ԳՈՐԾՈՅ ԱՌՔԵԼՈՅ։

Բառնաբաս եւ Սօղոս դարձան յԵրուսաղեմէ՝ իբրեւ կատարեցին զպաշտօնն. առեալ էր ընդ իւրեանս եւ զՅովհաննէս՝ որ կոչեցեալն էր Մարկոս։ Էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք եւ վարդապետք, Բառնաբաս եւ Շմաւոնն կոչեցեալն Նիգէր, եւ Ղուկիոս Կիւրենացի, եւ Մանայեն դայեակորդի Հերովդի Չորրորդապետի, եւ Սօղոս։ Մինչդեռ ի պաշտամանն Տեառն կային եւ պահէին, ասէ Հոգին սուրբ. որոշեցէք ինձ զԲառնաբաս եւ զՍօղոս ի գործ՝ յոր կոչեալ է իմ զդոսա։ Յայնժամ պահեալ եւ աղօթս արարեալ, եդին ձեռն ի վերայ նոցա եւ արձակեցին։ Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն սրբոյ՝ իջին ի Սելեւկիա, եւ անտի նաւեցին ի Կիպրոս։ Եւ հասեալ ի Սաղամինա՝ պատմէին զբանն Աստուծոյ ի ժողովուրդս Հրէից. ունէին եւ զՅովհաննէս պաշտօնեայ։ Շրջեալ ընդ ամենայն կղզին մինչեւ ի Պափոս, գտին անդ այր զոմն մոգ՝ սուտ մարգարէ՝ հրեայ, որում անուն էր Բարեյեսու. որ էր ընդ փոխանակի բդեշխին Սերգեայ Պողոսի առն իմաստնոյ. նորա աղաչեալ զԲառնաբաս եւ զՍո-

ղոս՝ խնդրէր լսել զբանն Աստուծոյ։ Ընդդէմ եկաց նոցա Եղիմաս՝ մոգ, քանզի այսպէս թարգմանի անուն նորա. խնդրէր շրջել զփոխանակ բըդեշխին ի հաւատոց։ Իսկ Սօղոս՝ որ եւ Պօղոսն լցեալ Հոգւովն սրբով՝ հայեցաւ ի նա եւ ասէ. ո՛վ լի ամենայն նենգութեամբ եւ խորամանկութեամբ՝ որդի սատանայի՝ թշնամի ամենայն արդարութեան՝ ոչ լռես ի թիւրելոյ զճանապարհս Տեառն զուղիղս։ Եւ արդ ահա ձեռն Տեառն ի վերայ քո՝ եւ եղիցիս կոյր՝ չտեսանել զարեւ մինչեւ ի ժամանակ մի։ Եւ անդէն անկաւ ի վերայ նորա մէգ եւ խաւար՝ եւ շրջէր խնդրէր առաջնորդս։ Յայնժամ տեսեալ փոխանակի բդեշխին զիրսն որ եղեն՝ հաւատաց՝ զարմացեալ ընդ վարդապետութիւնն Տեառն։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին ընդդէմն է ընդդէմ։

Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս՝ երկրորդ զմարգարէս՝ երրորդ զվարդապետս՝ ապա զօրութիւնս՝ ապա շնորհս բժշկութեանց՝ օգնութիւնս՝ վարիչս՝ ազգս լեզուաց՝ թարգմանութիւնս լեզուաց։ Միթէ ամենեքին առաքեա՞լք իցեն՝ միթէ ամենեքին մարգարէ՞ք իցեն՝ միթէ ամենեքին վարդապե՞տք իցեն՝ միթէ ամենեքին շնորհս բժշկութեա՞ն ունիցին՝ միթէ ամենեքին ի լեզո՞ւս խօսիցին՝ միթէ ամենեքին թարգմանիցե՞ն։ Բայց նախանձաւորք լերուք շնորհացն՝ որ լաւն են։

Ալէ. ալէ. Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր ի Սիոնէ. և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց. եղերո՛ւք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս՝ եւ միամիտք իբրեւ զաղաւնիս։ Զգոյշ լինիջիք ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս՝ եւ ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ՝ եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ՝ ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց։ Այլ յորժամ մատնիցեն զձեզ՝ մի հոգայցէք՝ թէ ո՞րպէս կամ զինչ խօսիցիք. զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք։ Զի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն՝ այլ Հոգին Հօր ձերոյ որ խօսիցի ձեզ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ՝ եւ հայր զորդի. եւ յառնիցեն որդիք ի վերայ հարց եւ սպանանիցեն զնոսա՝ եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ խսպառ՝ նա կեցցէ։ Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ՝ եւ եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք ի միւսն. ամէն ասեմ ձեզ՝ ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայէլի՝ մինչեւ եկեսցէ որդի մարդոյ։ Ո՛չ է աշակերտ առաւել քան զվարդապետ՝ եւ ոչ ծառայ քան զտէր իւր. շատ լիցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր՝ եւ ծառային՝ իբրեւ

զտէր իւր։ Եթէ զտանուտէրն բէեղ-
ղեբուղ կոչեցին՝ որչափ եւս առաւել
զընտանիս նորա։ Մի այսուհետեւ եր-
կընչիցիք ի նոցանէ. զի ոչինչ է ի ծա-
ծուկ՝ որ ոչ յայտնեսցի՝ եւ գաղտնի՝
որ ոչ ծանիցի։ Զոր ասեմ ձեզ ի խա-
ւարի՝ ասացէք ի լոյս՝ եւ զոր լսէք յուն-
կանէ՝ քարոզեցէք ի վերայ տանեաց։

Ն՝- փարոզէ Սարկաւագն.

Եւ եւս խաղաղու։ Օրհնեա՛ Տէր։

Ն՝- Դեր Վարդապետն.

Օրհնութիւն և փառք Հօր։

Ապա առնու զգաւազանն և դայ հրա-
ջելոյն՝ ասելով.

**Ա՛ռ զսուրբ գաւազանս ի ձե-
ռաց Հոգւոյն սրբոյ՝ ունել իշ-
խանութիւն քարոզել զբանն
կենաց ողջամիտ վարդապետու-
թեամբ յունկն հաւատացելոց։**

Ն՝- ապա Շարական Ակ.

Աշակերտք Քրիստոսի եւ առ ամե։
Որք առիք զպատուէր։
Որք արժանի եղէք տեսանել։

Փարոզ՝ Սուրբ խաչիւս։ Ընդ՝ Պահ-
պանիչ եւ յոյս։

ԿԱՆՈՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ՄԱՍՆԱՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ.

Որ պոլեալ լինի ի կողմն հարաւոյ։ Թո-
փարի- երկնչեն անդր ասելով Շարական ԴՁ.

Որ ի վերայ բղխեալ գաւազանին։
Որ զգուշակեալն քո Եսայեաւ։
Որ զառաքումն առ ի Հօրէ եւ ի։

Ալէ. ալէ։ Տէր տացէ զբան ոյք աւե-
տարանեն զօրութեամբ բազմաւ։ Փոխ.
Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամե-
նայն թշնամիք նորա. փախիցեն ատե-
լիք նորա յերեսաց նորա։

Ընդ՝ երգոյ՝ Թոյ։

Եւ էջ Տէր ամպով՝ եւ խօսեցաւ
ընդ Մովսէսի. եւ էառ ի Հոգւոյն որ
ի նմա՝ եւ արկ զեօթանասուն արամբքն
ղծերովք։ Եւ իբրեւ հանգեաւ Հոգին
ի վերայ նոցա՝ եւ մարգարէացան ի
բանակին՝ եւ այլ ոչ եւս յաւելին։
Եւ մնացին երկու արք ի բանակին՝
անուն միումն Ելդադ՝ եւ անուն երկ-
րորդին Մովդադ՝ եւ հանգեաւ ի վե-
րայ նոցա Հոգին. եւ նոքա էին ի
գրելոց անտի՝ եւ ոչ եկին ի խորանն՝
եւ մարգարէացան ի բանակին։

Ընդ՝ երգոյ՝ յԱ։ոյեայ մարգարէէ։

Հոգի Տեառն ի վերայ իմ՝ վասն
որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել
աղքատաց առաքեաց զիս՝ բժշկել
զբեկեալս սրտիւք՝ քարոզել գերեաց
զթողութիւն եւ կուրաց տեսանել.
կոչել ամ Տեառն ընդունելի՝ եւ օր
հատուցման Աստուծոյ մերոյ՝ մխիթա-
րել զամենայն սգաւորս. տալ սգաւո-
րաց Սիովնի փառս. փոխանակ մոխ-
րոյն՝ օծումն ուրախութեան՝ եւ սգա-
ւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ
ոգւոցն վհատութեան. եւ կոչեսցին
նոքա ազգ արդարութեան՝ տունկ
Տեառն ի փառս։ Եւ շինեսցեն զաւե-
րական յաւիտենից՝ եւ զյառաջագոյն
աւերեալսն կանգնեսցեն՝ եւ նորոգես-
ցեն զքաղաքս աւերեալս յազգաց մին-

յեւ յաղգս։ Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց, եւ այլազգիք մանակալք եւ այգեգործք քո։ Բայց դուք՝ քահանայք Տեառն կոչեսջիք, պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք, զզօրութիւնս ազգաց կերիջիք, եւ մեծութեամբ նոցա սքանչելի լինիջիք։

ԸՆԴԵՐՑՈՒԱԾ ՅԱՄՈՎՍՈՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Պատասխանի ետ Ամովս եւ ասէ ցԱմասիա. ես ոչ մարգարէ էի եւ ոչ որդի մարգարէի, այլ հովիւ էի, եւ թութ քաղէի. եւ էառ զիս Տէր ի հօտից, եւ ասէ ցիս Տէր. գնա՛ դու եւ մարգարեա՛ ի վերայ Ժողովրդեան իմում Իսրայէլի։ Եւ արդ լո՛ւր զպատգամն Տեառն. դու ասես, մի՛ մարգարէանար ի վերայ Իսրայէլի, եւ մի՛ ժողովս ժողովեր ի վերայ տանն Յակովբու. վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր. կին քո ի քաղաքիդ պոռնկեսցի, եւ ուստերք քո եւ դստերք քո ի սուր անկցին, եւ երկիրդ քո լարաբաժին բաժանեսցի, եւ դու յերկրի պղծումդ վախճանեսցիս, եւ Իսրայէլ գերելով գերեսցի յերկրէ իւրմէ։ Այսպէս ետոյց ինձ Տէր Տէր. եւ ահա գործի հաւորսաց. եւ ասէ, զի՞նչ տեսանես՝ Ամովս. եւ ասեմ, գործի հաւորսաց։ Եւ ասէ ցիս Տէր. հասեալ է վախճան ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԼՈՅՆ Է ՏԻՄՈԹԷՈՍԻ ԵՐԷՐՈՐԴ ԸՆԴՈՅՆ Է ԸՆԴԵՐՑՈՒԱԾՆ։

Այլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան, յօժարութեան, հաւատոյ, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չարչարանաց. որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ յԻկոնիոն եւ ի Լիւստրոս. որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր։ Եւ ամենեքին որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն։ Այլ մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր. մոլորեալք՝ եւ մոլորեցուցանիցեն։ Այլ դու հաստատուն կա՛ց յոր ուսարդ եւ հաւատարիմ եղեր. գիտես՝ ուստի ուսար. զի ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարօղք են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն՝ ի ձեռն հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս։ Ամենայն գիրք աստուածաշունչք եւ օգտակարք ի վարդապետութիւն են եւ յանդիմանութիւն, եւ յուղղութիւն եւ ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ։ Զայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս ի յայտնութեան իւրում եւ յարքայութեան։ Եւ դու քարոզեա՛ զբանն, հա՛ս ի վերայ ժամու եւ տարաժամու, յանդիմանեա՛, սաստեա՛, միխիթարեա՛ ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապետութեամբ։

Ալէ՛ ալէ։ Ընդ ամենայն երկիր եկ բարբառ նոցա. և մինչև ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ էր երեկոյ ի միաշաբաթոջ աւուրն, եւ դրօքն փակելովք՝ ուր էին աշակերտքն Ժողովեալ վասն ահին Հրէից, եկն Յիսուս եւ եկաց ի միջի նոցա, եւ ասէ ցնոսա. ողջոյն ընդ ձեզ։ Իբրեւ զայս ասաց, ետոյց նոցա զձեռսն եւ զկողս իւր. եւ խնդացին աշակերտքն իբրեւ տեսին զՏէր։ Ասէ ցնոսա դարձեալ. ողջոյն ընդ ձեզ. որպէս առաքեաց զիս Հայր իմ, եւ ես առաքեմ զձեզ։ Եւ զայս իբրեւ ասաց, փչեաց ի նոսա եւ ասէ. առէք Հոգի սուրբ։ Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա, եւ եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։

Սարկաւագն գրոյկ.

Եւ եւս խաղաղու։ Օրհնեա՜ Տէր։

Ն՝ Մեծ Վարդապետն.

Օրհնութիւն և փառք Հօր։

Ն՝ առնս գլխաւորն և պայ հրաբերելոյն՝ ասելով.

Ա՛ռ քեզ իշխանութիւն ի Հոգւոյն սրբոյ ընդունել զերկրորդ աստիճան վարդապետութեան ուսուցանելոյ զտգէտս և խրատելոյ զստահակս։

Ն՝ ասէն Շարաքան Բկ.

Երրորդութիւն անբաժանելի։
Որ էջն յերկնից այսօր եւ հան։
Որ ի խորհուրդս փրկականս։

Տրոյլ՝ Սուրբ խաչիւս։ Ընդե՛ Պահպանեա։

ԿԱՆՈՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ՄԱՍՆԱՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Ոչ պարտեալ լինի ի կողմն հիւսիսոյ եկեղեցւոյն, որ և գնան ընթերցիս և ասելով Շարական ԴՁ.

Այսօր երկնայնոցն ընդ մեզ տօ։
Այսօր առաքելոց եւ մարգարէիցն։
Այսօր քահանայք եւ պաշտօնեայք։

Ալէ. ալէ։ Հոգի քո սուրբ եւ բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։ Փոխ. Տէր լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՅՈՎԵԼՈՅ ՀԱՐԳԱՐԷՆ։

Եւ եղիցի յաւուր յայնմիկ բղխեսցեն լերինք զքաղցրութիւն, եւ բլուրք յորդեսցեն զկաթն, եւ ամենայն աղբիւրք Յուդայ բղխեսցեն ջուրս. եւ աղբիւր ի տանէ Տեառն ելցէ, եւ արբուսցէ զձորն վիճակաց։ Եգիպտոս յապականութիւն եղիցի, եւ Եդոմ ի դաշտ ապականութեան, յանիրաւութեանց որդւոցն Յուդայ. փոխանակ զի հեղին արիւն արդար ի մէջ իւրեանց։ Բայց Հրէաստան յաւիտեան բնակեսցէ, եւ Երուսաղէմ ազգայ յազգս. եւ խնդրեցից զարիւն նոցա, եւ ոչ արարից անպարտ. եւ Տէր բնակեսցի ի Սիովն։

ՊԷՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ Ի ԿՈՐՈՆԹԻԱՅ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՅՆ Ի ԸՆԹԵՐՑՈՒԱԾՆ։

Պատրաստաք լիցէք տալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զբանն՝ որ է վասն յուսոյն ձերոյ. այլ հե-

զութեամբ եւ երկիւղիւ ունիցիք բարս ջաղցունս. զի որով չարախօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին որք բամբասեն զձեր բարւոք գնացս ի Քրիստոս։ Զի լաւ է բարեգործաց՝ եթէ կամիցին ըստ Աստուծոյ կամացն չարչարել՝ քան չարագործացն. զի եւ Քրիստոս միանգամ վասն մեղաց ի վերայ ձեր մեռաւ՝ արդարն ի վերայ անարդարոց՝ զի զձեզ մերձեցուսցէ առ Աստուած. զի թէպէտ եւ մեռաւ մարմնով՝ այլ կենդանի է հոգւով։ Որով եւ ոգւոցն որ էին ի բանտին՝ երթեալ քարոզեաց՝ երբեմն ապստամբելոցն՝ յորժամ նեբեր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի՝ յորս տապանն կազմէր. յորս նուազունք՝ այս ինքն ոգիք իբրեւ ութ ապրեցան ի ջրոյն։ Որ եւ զձեզ ըստ նմին օրինակի կեցուսցէ մկրտութիւնն՝ ոչ զմարմնոյ աղտն ի բաց ընկենլով՝ այլ զբարւոք մտաց հանդէս առ Աստուած ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի՝ որ է ընդ աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս՝ ի հնազանդել նմա հրեշտակաց եւ իշխանութեանց եւ զօրութեանց։

Գլխ. պէ։ Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նորա. օրհնեցէք զնա ի հաստատութեան ի զօրութեան նորա։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն՝ եւ նոցա զօրութիւն եւ իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց՝ եւ բժշկել զհիւանդութիւնս։ Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ եւ բժշկել զախտաժէտս։ Եւ ասէ ցնոսա. մի ինչ բառնայք ի ճանապարհ՝ մի գաւազան եւ մի մախաղ՝ մի հաց՝ եւ մի արծաթ՝ եւ մի երկուս հանդերձս ունիցիք։ Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք՝ եւ անտի գնայցէք։ Եւ որք ոչ ընդունիցին զձեզ՝ յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ՝ զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա։ Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս՝ աւետարանէին եւ բժշկէին ընդ ամենայն տեղիս։

Սարկաւագն խրոսէ.

Եւ եւս խաղաղութիւն։ Օրհնեա՛ Տէր։

Մեծ Վարդապետն ասէ.

Օրհնութիւն և փառք Հօր։

Ն՚ առնու զգաւազանն և դայ հրաւիրելոյն՝ ասելով.

Ա՛ռ զերրորդ աստիճան մասնաւոր վարդապետութեան՝ կարողութեամբ Հոգւոյն սրբոյ կոչել յապաշխարութիւն զմեղուցեալս, և դարձուցանել զմոլորեալս ի գիտութիւն ճշմարտութեան։ Ն՚ դու յերևել Հովուապետին ընկալցիս զանթառամ փառաց պսակն։

Ն՚ ասէն Շարական Ակ.

Որ սիրողդ էք Արարչին արարածոց։
Որ քարոզդ էք ընդհանուր տիեզերաց։
Որ պսակդ էք ամենայն։

Դարձեալ՝ Սուրբ խաչիս։ Ընդ՝ Պահպանեա։

ԿԱՆՈՆ ՀՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՄԱՆԻ

ՄԱՍՆԱՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Որ պա-էալ լենի է կողմ ալ-ելից ա-ա-
ջի բերէին, ո-ր Ա ընթօրէ- երընէցեն ա-ելով
Շարկան Դշ.

Երանելի սուրբ առաքեալք հրաւի։
Որք աւիք իշխանութիւն ի վերայ։
Խաչակցեալք ընդ Քրիստոսի եւ ընդ։
Զմարգարէ բարձրելոյն եւ զթագաւ։
Զմիածնին կարապետ եւ զբանին։
Զանապատի բնակիչ եւ շնորհացրն։
Ա.յսօր սրբոց հայրապետացն ժողով։
Ա.յսօր զբանն խոկզբանէ քարոզե։
Ա.յսօր զՀոգին ճշմարտութեան դա։
Հոգիդ ճշմարիտ որ զաստուածային։
Որ առաքեցար ի Հօրէ կենդանարար։
Որ կատարեցեր զփափաք ցանկու։
Զծնեալն ի սրբոյ կուսէն ընկալ։
Օրհնեսցուք զառաքեալն ի Հօրէ։
Ուրախ լեր անապատ ծարաւի։
Ա.յսօր ուրախացեալ ցնծան երկնից։
Ա.յսօր սիւն լուսոյ հովանի։
Ա.յսօր քահանայապետ ճշմարիտ։

Ալէ. ալէ։ Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո. փառօք եւ պատուով պսակեցեր զնա, եւ կացուցեր զնա ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց։ Փոխ. Տէր Տէր մեր՝ զի՞ սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ յաւաջին թագաւորութեանց։

Եւ ասէ Տէր ցՍամուէլ. արի օծ զԴաւիթ, զի դա է բարի։ Եւ էառ Սամուէլ զեղջիւրն իւղոյ, եւ օծ զնա ի մէջ եղբարց իւրոց։ Եւ խաղաց Հոգի Տեառն ի վերայ Դաւթի յօրէ յայնմանէ եւ առ յապա. եւ յարեաւ Սամուէլ եւ գնաց յԱրիմաթեամ։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ է Յովնանու մարգարէէ։

Եւ եղեւ բան Տեառն առ Յովնան որդի Ամաթեայ եւ ասէ. Արի եւ գնա՛ ի Նինուէ քաղաք մեծ, եւ քարոզեսջիր անդ, զի ել աղաղակ չարութեան նորա առ իս։ Եւ յարեաւ Յովնան փախչել ի Թարսիս յերեսաց Տեառն. էջ ի Յոպպէ եւ եգիտ նաւ որ երթայր ի Թարսիս, եւ գինս՝ եւ եմուտ ի նա նաւել ընդ նոսա ի Թարսիս յերեսաց Տեառն։ Եւ Տէր յարոյց հողմ ի ծովուն եւ եղեւ մրրիկ մեծ ի ծովուն, եւ նաւն ի վտանգի կայր ի խորտակել։ Եւ երկեան նաւավարքն երկիւղ մեծ, եւ աղաղակէին առ իւրաքանչիւր աստուածս իւր. եւ ընկեցին զկարասին որ էր ի նաւին ի ծով անդր՝ զի թեթեւացուսցեն յինքեանց։

Յակոբու ա-ա-ա+ելոյն է Կոնու-ղեկեայց ընդոյն է ընթերցուածս։

Արի բազում վարդապետս լինել, եղբարք իմ. գիտասջիք՝ զի մեծ դատաստան ընդունելոց եմք. քանզի բազում ինչ յանցանեմք ամենեքեան։ Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ կատարեալ, որ կարօղն է սանձահարել զամենայն մարմին իւր։ Տե՛ս զի ձիոց սանձս ի բերան դնեմք՝ առ անսալոյ նոցա մեզ, եւ զամենայն մարմինս նոցա նուաճեմք։ Ահաւասիկ եւ նաւք որպիսի՞ ինչ են, եւ ի սաստիկ հողմոց վարին, եւ փոքր թեւովն շրջին յոր կոյս եւ միտք ուղղչին կամիցին։ Սոյնպէս եւ

լեզու փոքր ինչ անդամ է, եւ մեծամեծս բարբառի. ահա եւ սակաւ ինչ հուր զորպիսի՝ անտառս հրդեհէ. եւ լեզու հուր՝ զարդ անիրաւութեան, լեզու հաստատեալ է յանդամս մեր, որ զամենայն մարմինն ապականէ, եւ վառէ հրով զանիւ ծննդեան, եւ բորբոքեալ տոչորի ի գեհենի։ Ամենայն բնութիւն գազանաց եւ թռչնոց եւ սողնոց, եւ որ ի ծովու են, հնազանդեալ է եւ հնազանդի մարդկեղէն բընութեան։ Բայց զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել, զչարն եւ զանկարգն եւ զլի թունաւոր մահաբերին։ Նովաւ օրհնեմք զՏէրն եւ զՀայր, եւ նովաւ անիծանեմք զմարդիկ որ ըստ նմանութեան Աստուծոյ արարան։ Ինքին բերանոյ ելանեն օրհնութիւնք եւ անէծք. ոչ է պարտ՝ եղբարք իմ, այսմ այսպէս լինել։ Միթէ աղբիւր անդստին ի միոյ ականէ բղխիցէ՞ քաղցր եւ դառն. միթէ մա՞ղթ ինչ լցէ, եղբարք իմ՝ թզենւոյ ձէթ բերել, կամ որթոյ թուզ, եւ ոչ աղտաղտին տեղւոջ ջուր քաղցր առնել։

Ալէ. ալէ. Կացուցցես զնոսա Իշխանս ընդ ամենայն երկիր. և յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յարուցեալ Յիսուս յառաւօտուն առաջին միաշաբաթուն՝ երեւեցաւ Մարիամու Մագդաղենացւոյ, յորմէ հանեալ էր զեօթն դեւն։ Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին, մինչդեռ լային եւ սգային։ Նոքա իբրեւ լուան թէ կենդանի է եւ երեւեցաւ նմա, ոչ հաւատացին։ Յետոյ երեւեցաւ այլով կերպարանաւ՝ որք երթային յանդաստան։ Նոքա չոքան պատմեցին այլոց, եւ ոչ նոցա հաւատային։ Յետոյ մինչդեռ բազմեալ էին մետասանքն, երեւեցաւ նոցա եւ թշնամանեաց զանհաւատութիւն նոցա եւ զխստասրտութիւն. զի որ երեւ եցաւ նոցա յարուցեալ ի մեռելոց, եւ նոքա ոչ հաւատացին։ Եւ ասէ ցնոսա. երթայք յաշխարհ ամենայն, եւ քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց։ Որ հաւատայ եւ մկրտեսցի՝ կեցցէ, եւ որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի։ Նշանք այնոցիկ որ հաւատանն երթիցեն զհետ՝ այսոքիկ. յանուն իմ դեւս հանցեն, լեզուս խօսեսցին, ի ձեռս իւրեանց օձս բարձցեն, եւ եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեսցէ, ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն եւ բժշկեսցեն։ Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա համբարձաւ յերկինս, եւ նստաւ ընդ աջմէ Հօր։ Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր՝ Տեառն գործակցութեամբ, եւ զբանն հաստատէին ամենայն նշանօք որ երթայր զհետ նոցա։

Սաղմոս. — Օրհնեա՛ Տէր։

Մեծ Վարդապետն ընթերցանս ի վերայ հրաշելոյն զաղօթս.

Օրհնեալ ես Տէր Աստուած մեր, որ արարեր զերկինս և զերկիր և որ ի սմա են կենդանիք. որ եւտուր մարդկան դի-

տութիւն, և ի հովուաց ընտրեցեր զմարգարէս՝ քարոզող հնոյն Իսրայէլի, և իմաստնացուցեր զնոսա ամենազօր Հոգւովդ և լցուցեր եօթնարփեան շնորհօք ըստ Նոյեայ։ Նու արդ Տէր բարերար, աղաչեմք զքեզ և աղերսեմք. մի՛ հայիր յանարժանութիւնս մեր, և մի՛ անտես առներ զպաղատանս մեր. առաքեա՛ զշնորհս ամենազօր Հոգւոյդ սրբոյ ի վերայ ծառայիս քո որ հրաւիրեցաւ յաստիճան վարդապետութեան։ Լցո՛ զմիտս և զխորհուրդ և զլեզու սորա Հոգւովդ սրբով, որպէս զի առցէ զհամարձակութիւն քարոզելոյ զբանն կենաց ի քեզ յուսացեալ հաւատացելոց, և ածել գիտութեամբ ի լոյս աստուածգիտութեան, ի փառս ամենազօր տէրութեանդ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Տէր Աստուած ամենազօր և մարդասէր Հոգի, որ ի հնումն զտգիտութիւն հովուացն ի մարգարէութիւն փոխեցեր, և ի նորումն զձկնորսան առաքեալս ապարեր. որ տաս ումեմն բան գիտութեան, այլում ազգս լեզուաց և այլում թարգմանութիւն լեզուաց. աղաչեմք զքեզ Տէր, տուր ծառայիս քում այսմիկ զշնորհս քո սուրբ՝ բարբառել զլեզու խրատու և գիտութեան։ Որ ի հնումն ետուր Ռեսելիէլի արուեստ իմաստութեան և զարդարեցեր զնա քոյին շնորհիւդ, և զեօթանասուն և երկու ծերսն Մովսիսի իմաստութեամբ լցուցեր. զարդարեա զծառայս քո ըստ պատշաճի զարդու, և լցո զսա իմաստութեամբ քով սրբով։ Որ ի նորումն իջեր ի վերնատունն սուրբ, և հանդեար հրեղէն լեզուօք յառաքեալսն, և զմայլեցուցեր զնոսա անմահական բաժակաւն, որով մաքրեցան և եղեն մաքրիչք և լուսաւորիչք ամենայն աշխարհի։ Նու արդ Տէր բարերար, աղաչեմք և խնդրեմք յամենառատ և ի քաղցրալուր մարդասիրութենէդ քումմէ, մասնակցեա զծառայս քո շնորհացն որ յառաքեալսն սուրբ, զի քև կարողասցի արիանալ յամենայն գործս բարութեան, նախ սրբիլ ի Տեառնէդ և ապա զայլս սրբել՝ բանիւդ կենաց։ Տուր՝ Տէր՝ ծառայիս քում զշնորհ քարոզելոյ ի լուր ժողովրդեան, զմեղաւորսն սրբել, զմոլորեալ-

սին դարձուցանել, զտգէտսն իմաստնացուցանել, զստահակսն կշտամբել, և զբարին հաստատել, և հրաւիրել զհաւատացեալ հօտս քո բանաւոր յարքայութիւն քո և ի փառս ամենազօր տէրութեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սարկաւագն գոչէ.

Եւ եւս խաղաղութիւն։ Օրհնեա՛ Տէր։

Ա՛ռնու՝ Մեծ Վարդապետն զգաւազանն և դայ ի յեռն հրաւէրելոյն և ասէ.

Ա՛ռ զչորրորդ աստիճան մասնաւոր վարդապետութեան ի ձեռաց Հոգւոյն սրբոյ, և երթ և քարոզեա զաւետարանն սուրբ և զպրակս առաքելոց և մարգարէից, և զպատուէր օրինադրութեանց Հարցն սրբոց՝ ողջամիտ վարդապետութեամբ՝ ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ, առանց աչառանաց և երկիւղի ուստ և խրատեա, սաստեա, յանդիմանեա, և դարձեալ մխիթարեա ըստ առաքելոյն բանի։ Եւ դու եղիցիս առաջի Տեառն մշակ առանց ամօթոյ և ծառայ ազնուական, գրելով զանուն քո ի դպրութեան կենաց ընդ երջանիկ դասս սուրբ վարդապետաց։

Ապա ասէն Շարական Դ.

Ամոլք հաւատոյ այսօր փայլին։

Բարեխօսութեամբ։

Լուսաւորեալք ի։

Եւ՝ ապա Մաղթանք՝ Վասն սուրբ խաչի։ Գրաբար՝ Սուրբ խաչիս։ Աղօթք՝ Պահպանիչ. և Հայր մեր։

ԿԱՆՈՆ

ԹԵՑՐԱԳՈՑՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՑ

ԱՇԱԿԵՐՏԱՑ

ՃԶՄԱՐԻՏ ԲԱՆԻՆ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ,

ՈՐ Է ՏԱՍՆ ԱՍՏԻՃԱՆ.

Օ՜ սրբոյն Յոհաննէսի զգուշանան և դնէն ի սէրանն. ապա սկսանին զգիշերապաղօթն լոյս պապաղանքի սուրբն՝ մինչև յուսուսոյ ժամն՝ Լցաք։

Օ՜ գիշեր Մեծ Վարդապետն և քահանայքն և դպիրք, և պան մոռիկնս ի յիսուսմինեցուն, և գնան ընթերցին ի դուռն եկեղեցոյն՝ ասելով Շարական ԴՁ.

Հրաշափառ Աստուած եւ միշտ։
Հրաշալի գործմամբ երանելին։
Հրաշագործ քո բանիւդ եւ մեծ ողո։

Եւ նոքի անդ մեծ Վարդապետն յանուն՝ երբեմն յարնելը, և հրաբերեալն քացու գլխով ի գոնձս կայ առաջի նորա։ Եւ Ա՜ստ սարկաւագն առնու զաղաղարեալ գաւազանն ի սեղանոյն, և գայ կանգնի առաջնիկ Մեծի Վարդապետին։

Եւ ասէն Շարական ԴԶ.

Գաւազան զօրութեան զիսաչ քո։
Սա է զէն յաղթութեան սրեալ ար։
Սա է աթոռ տէրունեան եւ ի սմա։
Սա է սեղան սրբութեան եւ ի սմա։
Սա է կարապետ յաւուր գալստեան։

Ա՜ստ քահանայն ասէ.

Հայր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ Եկեղեցի Հանդերձ ամենայն ուխտիւս, զի կոչեսցես (զայս աստուն) քանի սպասաւորս ի պատիւ աստիճանի մեծի վարդապետութեան։

Հարցանէ Վարդապետն Մեծ.

Ունի՞ զուսումն ողջամիտ վարդապետութեան, և զգիտութիւն հին և նոր կտակարանացն սրբոց, և զդաւանութիւն խոստովանութեան ուղղափառ հաւատոյ ի սուրբ Երրորդութիւնն, և ի մարդեղութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Եւ հրաժարի՞ յամենայն հերձուածողաց՝ թէ ոչ։

Պատասխանէ.

Այո՛ Հայր սուրբ, ունի լիովին զուսումն վարդապետութեան, եւ զգիտութիւն հին եւ նոր աստուածային

կատարանացն սրբոյ, եւ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ։ Եւ խոստովանի սուրբ զերրորդութիւնն զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին համագոյ Աստուածութիւն, եւ զմարդեղութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ ընդ ուղղափառ սուրբ հայրապետսն։

Ապա հրամայէ Մեծ Վարդապետն.

Պարտ է քեզ որդեակ՝ հրաժարել յամենայն աղանդոյ հերձուածողացն և նզովել յատուկ յանուանէ զամենայն հերետիկոսաց դասս, որք ընդդէմ խոստեցան սուրբ հաւատոյ և Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և ընդունել զուղղափառ սուրբ հայրապետսն։

Ասա Ես Վարդապետն հրամարեցուցանէ զհրաբրեալն յամենայն հերձուածողաց, և պայ ընդունել զուղղափառ սուրբ հայրապետն. զոր պետքն է 32 զոր երեսն ինչ է 36 զոր երեսն։ Եւ ապա սկսանին զարանն Դկ.

Իմաստութիւն երկնային լիցեալ ի։
Ի ծովու։ Բանաւոր։
Որ զօրինակ երկոտասան առաքելոց։
Որ շինեցեր։ Որ տիրականդ։
Այսօր ցնծայ Եկեղեցի ի հոգեւոր։
Այսօր փեսաւ։ Այսօր շնորհեցաւ։
Այսօր ցնծայ զուարճացեալ Եկեղեցի։
Այսօր նոր։ Այսօր ի գլուխ։
Որ կոչեցեր զհեռացեալսն ի հարսա։
Որ գերագոյն։ Որ ի վիրապն։
Աղբիւր կենաց բաշխող շնորհայ։
Որ ի վերայ։ Որ զարդարեալ։
Թագ հիւսեալ երկնային՝ յեռեալ։
Ժողովեալ սուրբ։ Իսկ եկեալ։
Խաչի քո Քրիստոս երկրպագեն։
Փառք.— Իսմաբարձ։ Այժմ.— Սովաւ։
Ալէ. ալէ։ Սիրա սուրբ հաստատեա յիս Աստուած, եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։ Փառք. Ողորմեա՛ ինձ Աստուած։

ԸՆԴԵՐՁՈՒԱԾ Է ԹՈՒՈՑ։

Եւ եկ Մովսէս եւ խօսեցաւ ընդ Ժողովրդեանն զպատգամն Տեառն. եւ Ժողովեաց զեօթանասուն այր ի ծերոց Ժողովրդեանն, եւ կացոյց զնոսա շուրջ զխորանաւն։ Եւ էջ Տէր ամպով եւ խօսեցաւ ընդ Մովսէսի, եւ էառ ի հոգւոյն որ ի նմա, եւ արկ զեօթանասուն արամբքն զծերովք։ Եւ իբրեւ հանգեաւ հոգին ի վերայ նոցա, եւ մարգարէացան ի բանակին, եւ այլ ոչ եւս յաւելին։ Եւ մնացին երկու արք ի բանակին, անուն միումն Ելդադ, եւ անուն երկրորդին Մովդադ, եւ հանգեաւ ի վերայ նոցա հոգին. եւ նոքա էին ի գրելոց անտի եւ ոչ եկին ի խորանն, եւ մարգարէացան ի բանակին։

ԸՆԴԵՐՁՈՒԱԾ ՅԱՐՈՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն եւ կուրաց տեսանել. կոչել ամ Տեառն ընդունելի եւ օր հատուցման Աստուծոյ մերոյ, մխիթարել զամենայն սգաւորս. տալ սգաւորաց Սիովնի փառս, փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութեան, եւ սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վհատու-

թեան։ Եւ կոչեսցին նոքա ազգ արդարութեան՝ տունկ Տեառն ի փառս, եւ շինեսցեն զաւերակսն յաւիտենից, եւ զյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն, եւ նորոգեսցեն զքաղաքս աւերեալս ազգաց վինչեւ յազգս։ Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց, եւ այլազգիք մանձալք եւ այգեգործք քո։ Բայց դուք՝ քահանայք Տեառն կոչեսջիք, պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք. զզօրութիւնս ազգաց կերիջիք, եւ մեծութեամբ նոցա սքանչելի լինիջիք։ Փոխանակ ամօթոյ ձերոյ կրկին ուրախութիւն, եւ փոխանակ անարգանաց ձերոց՝ ցնծութիւն, եւ ապա զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն, եւ ուրախութիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա։

ԸՆԴԵԼԵՑՈՒԱԾ Է ՊՈՐՁՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ։

Եւ ի կատարել աւուրցն Պենտէկոստէից՝ էին ամենեքեան միաբան ի միասին։ Եւ եղեւ յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հողմոյ, եւ ելից զամենայն տունն յորում նստէին։ Եւ երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ, եւ նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա։ Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով, եւ սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս եւ Հոգին տայր բարբառել նոցա։ Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ Հրեայք՝ արք երկիւղածք, յամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից։ Եւ իբրեւ եղեւ բարբառս այս, եկն միաբան բազմութիւնն եւ խռնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա։ Սքանչանային ամենեքեան եւ զարմանային, եւ ասէին ընդ միմեանս. ոչ աւասիկ ամենեքեան սոքա որ խօսին՝ Գալիլեացիք են, եւ զիարդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք։ Պարթեւք եւ Մարք եւ Իլամայիք, եւ որ բնակեալ են ի Միջագետս, ի Հրէաստանի եւ ի Գամիրս, ի Պոնտոս եւ յԱսիա, ի Փռիւգիա եւ ի Պամփիլիա, յԵգիպտոս եւ ի կողմանս Լիբէացւոց, որք ընդ Կիւրենացիս եւ որ եկք Հռովմայեցիք։ Հրեայք եւ եկք նոցուն, Կրետացիք եւ Արաբացիք, լսեմք խօսիլ նոցա ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ։ Սքանչանային ամենեքեան զարմացեալք եւ ասէին ցմիմեանս. զի՞նչ կամիցի այս լինել։ Եւ կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին, եթէ քաղցուալիցք իցեն։ Ցարուցեալ Պետրոս հանդերձ մեսասանիւքն՝ ամբարձ զձայն իւր եւ խօսեցաւ ընդ նոսա. արք Հրէաստանեայք, եւ որ բնակեալ էք յԵրուսաղէմ ամենեքեան, այս ձեզ յայտնի լիցի եւ ունկն դիք բանից իմոց։ Ոչ որպէս դուք կարծէք՝ թէ սոքա արբեալք իցեն. զի դեռ երեք ժամք են աւուրս։ Այլ այս է որ ասացաւ ի ձեռն մարգարէին Յովելայ. Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս, ասէ Աստուած, հեղից յՈգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ, եւ մարգարէասցին ուստերք ձեր եւ դստերք ձեր, եւ երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն, եւ ծերք ձեր երազովք երազեսցին. եւ ի վերայ ծառայից իմոց եւ ի վերայ աղախնայց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից յՈգւոյ իմմէ, եւ մարգարէասցին։ Եւ տացից նշանս յերկինս ի վեր, եւ նշանս յերկիր ի խոնարհ, արիւն եւ հուր եւ մրրիկ ծխոյ. արեգակն դարձցի ի խաւար եւ լուսին յա-

բիւն, մինչչեւ եկեալ լցէ օր Տեառն մեծն եւ երեւելի։ Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։

Պօղոսի առաքելոյն է Պոլսեցւոց առաջին ընդդէմ ընդդիմադրողացն։

Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս, զիմաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ եւ ոչ իշխանաց աշխարհիս այսորիկ զխափանելեացս, այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ի փառս մեր. զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին։ Այլ որպէս եւ գրեալ է, զոր ակն ոչ եսես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով. զի Հոգին զամենայն քննէ՝ եւ զխորս Աստուծոյ։

Ալէ. ալէ։ Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած. և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս եւ ընդ գիւղս, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա. եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն ախտս եւ զամենայն հիւանդութիւնս ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա, զի էին աշխատեալք եւ ցրուեալք իբրեւ զոչխարս որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտս իւր. հունձք բազում են՝ եւ մշակք սակաւ. արդ աղաչեցէք զՏէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր։ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, եւ բժշկել զամենայն ցաւս եւ զամենայն հիւանդութիւնս։ Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ. առաջին՝ Սիմովն՝ անուանեալն Պետրոս, եւ Անդրէաս եղբայր նորա. Յակովբոս Զեբեդեայ եւ Յովհաննէս եղբայր նորա. Փիլիպպոս եւ Բարթուղիմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր, Յակովբոս Ալփեայ եւ Ղեբէոս՝ որ անուանեցաւն Թադէոս. Սիմովն Կանանացի, եւ Յուդա Իսկարիովտացի՝ որ եւ մատնեացն զնա։ Զնոսա երկոտասանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա եւ ասէ. ի ճանապարհ հեթանոսաց մի երթայցէք, եւ ի քաղաքս Սամարացւոց մի մտանիցէք. այլ երթայք առաւել առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի։ Եւ իբրեւ երթայցէք՝ քարոզեցէք եւ ասացէք, թէ մերձեալ է արքայութիւն երկնից։ Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զդեւս հանէք, ձրի առիք՝ եւ ձրի տուք։ Մի ստանայք ոսկի եւ մի արծաթ եւ մի պղինձ ի գօտիս ձեր, մի պարկ ի ճանապարհ, եւ մի երկուս հանդերձս, մի կօշիկս, մի ցուպ. զի արժանի է մշակն կերակրոյ իւրում։ Յոր քաղաք մտանիցէք կամ ի գեօղ, հարցանիցէք թէ ո՞ է ինմա արժանի. եւ անդ լինիջիք մինչեւ ելանիցէք անտի։ Եւ իբրեւ մտանիցէք ի տունն, ողջոյն տայջիք

նմա եւ ասասջիք. ողջոյն տանս այսմիկ. եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա. ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։ Եւ որ ոչ ընկալցի զձեզ եւ ոչ լուիցէ բանից ձերոց, իբրեւ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց։ Ամէն ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց եւ Գոմորացւոց յաւուրն դատաստանի՝ քան քաղաքին այնմիկ։ Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց. եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս։ Զգոյշ լինիջիք ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս, եւ ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ, եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ, ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց։ Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի հոգայցէք՝ թէ ո՞րպէս կամ զինչ խօսիցիք. զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք. զի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիք, այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի ի ձեզ։

Սարկաւագն ասէ.

Եւ եւս խաղաղու։ Օրհնեա՜ Տէր։

Ն՝ Մեծ Վարդապետն.

Օրհնութիւն և փառք Հօր։

Ն՝ առնու զգաւազանն ի յԵրեսաց սարկաւագին, և դայ յԱպատարանն՝ ասելով.

Ա՛ռ զմաքուր և զսուրբ գաւազանս ի ձեռաց Հոգւոյն սրբոյ, ունելով իշխանութիւն միթարել զվշտացեալս և զտրտմեալս ի պէս պէս փորձութեանց՝ յուսով պսակաց. ըստ այնմ, միթարեցէք միթարեցէք զժողովուրդ իմ՝ ասէ Տէր։ Եւ դու ըստ վաստակոց քոց ընկալցիս զմխիթարութիւն Հոգւոյն սրբոյ ի հոգի և ի մարմին քո. ամէն։

Ապա ասէն Շարականն Դկ.

Այսօր զիմանալի լուսոյն։
Այսօր զանապական։
Այսօր զաստուածային բանին։
Փառք, Սուրբ խաչիս։ Աղօթք, Պահպ։

ԿԱՆՈՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ԾԱՑՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ.

Որ պոլիս լինի ի նոյն պեղոջ. և ասէն Շարականն Դզ.

Յնծայ այսօր Եկեղեցի Աստուծոյ։
Որ զէութիւն։ Որ անմարմնոց։
Որ գերագոյն ընտրելոց առաքելոցն։
Որ յառաջագոյն։ Որ երկոքումբք։
Այսօր ժողովուրդք որք ի հեթա։
Այսօր որդիք։ Այսօր վերին։
Այսօր երկնայնոցն ընդ մեզ տօնա։
Այսօր առաքելոց։ Այսօր քահանայք։
Առաքելոյ աղաւնոյ՝ իջանելով։
Աննիւթական։ Օրհնութիւն ի բարձ։
Թագաւոր փառաց՝ Աստուած Հոգ։
Աղբիւր կենաց։ Լրումն աշխարհի։
Գաւազան զօրութեան զխաչ քո։
Սա է զէն։ Սա է աթոռ։ Փառք. —
Սա է սեղան։ Այժմ. — Սա է կարապետ։

Ալէ· ալէ։ Թեւք աղաւնոյ արծուիթապատ, եւ թիկնամէջ նորա ի գոյն ոսկւոյ։ ՓԽ· Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա· փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։

ԸՆԴԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱԿՍ։

Ամենեցուն ճարտարապետն ուսոյց ինձ իմաստութիւն։ Զի գոյ ի նմա հոգի մտաւոր, սուրբ, միածին, բազմաբաշխ, նուրբ, գիւրաշարժ, պարզ, անարատ, յայտնի, անվրէպ, բարեսէր, երագ, անարգել, բարերար, մարդասէր, հաստատուն, զգուշաւոր, անհոգ, ամենազօր, ամենահայեաց եւ ամենայն իրաց բաւական, մտաւորաց, սրբոց, նրբից։ Քան զամենայն շարժուն շարժնագոյն է իմաստութիւն, դարմանէ եւ ընդմտանէ ընդ ամենայն վասն յըստակութեան։

Քանզի ճառանչ է Աստուծոյ զօրութեանն, եւ ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին, վասն այնորիկ եւ ոչ մի ինչ պղծեալ խառնի ի նա։ Քանզի նշոյլ է մշանջենաւոր լուսոյն, եւ հայելի անարատ Աստուծոյ ազդեցութեանն, եւ պատկեր առատութեան նորա։ Մի է՝ եւ ամենայնի կարող, կայ յինքեան՝ եւ զամենայն նորոգէ, եւ ըստ ազգաց յոգիս սուրբս փոփոխի, բարեկամն Աստուծոյ եւ մարգարէս առնէ։ Ոչ զոք սիրէ Աստուած՝ բայց զայն որ ընդ իմաստութեան բնակիցէ։ Զի գեղեցկագոյն է նա քան զարեգակն եւ քան զամենայն դիրս աստեղայ· ընդ լուսոյ համեմատեալ՝ առաւել գտանի· զի զնա գիշեր փոխանակէ, բայց իմաստութեան ոչ յաղթէ չարութիւն։ Զգալի ի ծագաց մինչեւ ի ծագս օգտակար առողջութեամբ, եւ դարմանէ զամենայն քաղցրութեամբ։ Զնա սիրեցի եւ քննեցի ի մանկութենէ իմմէ, եւ խնդրեցի ածել ինձ հարսնութեան, եւ եղէ ցանկացօղ գեղոյ նորա։

ԸՆԴԵՐՑՈՒԱԾ Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐԳԱՐԷԷ։

Եւ եղիցի յետ այսորիկ հեղից յՈգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ· եւ մարգարէասցին ուստերք ձեր եւ դստերք ձեր, եւ ծերք ձեր երազովք երազեսցին, եւ երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն· եւ ի վերայ ծառայից իմոց եւ ի վերայ աղախնայց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից յՈգւոյ իմմէ, եւ մարգարէասցին։ Եւ տայց նշանս յերկինս ի վեր եւ նշանս յերկիր ի խոնարհ՝ արիւն եւ հուր եւ մրրիկ ծխոյ։ Արեգակն դարձցի ի խաւար եւ լուսին յարիւն, մինչչեւ եկեալ իցէ օր Տեառն մեծն եւ երեւելի։ Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։

ԸՆԴԵՐՑՈՒԱԾ Ի ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ։

Եւ եղեւ՝ մինչդեռ Ապողոն ի Կորընթոս էր, Պօղոսի շրջեալ զվերին կողմամբն՝ եւ իջանել յԵփեսոս, եւ գտանել զոմանս աշակերտս· ասէ ցնոսա· եթէ Հոգի սուրբ ընկալարո՞ւք ի հաւատալն։ Նոքա ասեն ցնա· այլ եւ ոչ թէ Հոգի սուրբ գուցէ՝ լուեալ է մեր։ Եւ ասէ· իսկ յի՞նչ մկրտեցարուք։ Նոքա ասեն· ի Յովհաննու մկրտութիւնն։ Եւ ասէ Պօղոս· Յովհաննէս քարոզեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն, եւ ասէր, զի որ գալոցն է յետ նորա՝ ի նա հաւատաս-

ցեն, այս ինքն է՝ ի Յիսուս Քրիստոս։ Եւ իբրեւ լուան, մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի։ Եւ ի դնել ի վերայ նոցա Պօղոսի զձեռն՝ եկն Հոգին սուրբ ի վերայ նոցա, խօսէին լեզուս եւ մարգարէանային։

Պօղոսի առաքելոյն է Կորնթացւոց երէքորդ նամակն է ընդերցուածս։

Վասն այնորիկ ունիմք զպաշտօնս զայս որպէս եւ գտաք զողորմութիւն, եւ ոչ ձանձրանամք։ Այլ հրաժարեցաք ի գաղտնեաց ամօթոյն, զի մի գնասցուք խորամանկութեամբ, եւ մի նենգեսցուք զբանն Աստուծոյ. այլ յայտնութեամբ ճշմարտութեանն ընծայեցուսցուք զանձինս մեր առ ամենայն միտս մարդկան առաջի Աստուծոյ։ Ապա թէ իցէ եւս ծածկեալ աւետարանն մեր, ի մէջ կորուսելոցն է ծածկեալ. որոց Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս անհաւատիցն, զի մի ծագեսցէ ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փառացն Քրիստոսի՝ որ է պատկեր աներեւութին Աստուծոյ։ Զի ոչ եթէ զանձինս քարոզեմք, այլ զՔրիստոս Յիսուս զՏէր, եւ զմեզ ծառայս ձեզ վասն Քրիստոսի։ Զի Աստուած որ ասաց ի խաւարի լոյս ծագել, որ եւ ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի։

Ուղ. ալ։ Յեկեղեցիս բարեբանեցէք զԱստուած. և զՏէր յաղթերացն Իսրայէլի։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ելանէ ի լեառն՝ եւ կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ, եւ չոքան առ նա։ Եւ արար երկոտասանս՝ զի իցեն զնովաւ, եւ զի առաքեսցէ զնոսա քարոզել, եւ ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս եւ հանելոյ զդեւս։ Եւ եդ անուն Սիմովնի Պետրոս, եւ Յակոբու Զեբեդեայ եւ Յովհաննու եղբօրն Յակոբայ եդ նոցա անուանս Բաներեգէս՝ որ է որդիք որոտման, եւ զԱնդրէաս եւ զՓիլիպպոս եւ զԲարթողոմէոս, զՄատթէոս մաքսաւորն եւ զԹովմաս, եւ զՅակոբոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմովն Կանանացի, եւ զՅուդա զՍկարիովտացի, որ եւ մատնեացն զնա։

Ապա Մարկոսն գրոյէ.

Եւ եւս խաղաղութիւն։ Օրհնեա՜ Տէր։

Ե՜ Մեծ Վարդապետն ասէ.

Օրհնութիւն և փառք Հօր։

Ե՜ առնս զգաստանն և պայ յապաստարս բանին՝ ասելով.

Ա՛ռ քեզ կարողութիւն ի Հոգւոյն սրբոյ՝ ընդունել և զերկրորդ աստիճան ծայրագոյն վարդապետութեան, և լինել միջնորդ Աստուծոյ և մարդկան, զթիւրսն յուղղութիւն ածել, նաւահանգիստ լինել ժողովրդեանն, բարեխօսել առ Աստուած, զպիղծս սրբել, զմեղաւորս արդարացուցանել, զանհաւատս ի հաւատ

ածել, զտգէտս իմաստնացուցանել, զանօրէնս յօրէնս Աստուծոյ կոչել, որդի և ժառանգ առնել Աստուծոյ: Եւ դուլեցիս իբրև զծառ պտղատու և արդիւնաբար ամենեցուն, կալ ըստ կանոնի կամացն Աստուծոյ. զի առնելով և ուսուցանելով մեծ կոչեսցիս յարքայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենայն սուրբս. ամէն:

Աղա ասէն Շարակն Դկ.

Այսօր ցնծան հրեշտակք ի յերկինս:
Այսօր ցնծան հոգիք:
Այսօր ցնծան դասք:
Քարոզ, Սուրբ խաչիւս: Աղօթ, Պահ:

ԿԱՆՈՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ.

Ոչ պարտական լինել ինձն պարտք. Ասէ Շարակն Դկ.

Ով երջանիկ ճառագայթ, առաքելա:
Որ քոյին: Աղօթէիր:
Տանն Աստուծոյ տեսանող բարի ար:
Բաբունեայն: Յանկալի:
Այսօր ցնծայ եկեղեցի՝ ընդ անմար:
Քահանայապետ: Արդ աղաչեմք:
Որ յանապատէ կոչեցար յառաքելա:
Որ արդարու: Որ միացար: Արդ աղաչ:
Որ յանքնին ծոցոյ Հօր խոնարհեալ:
Որ յաթոռս: Որ կուսական:
Այսօր ցնծան դասք առաքելոցն:
Այսօր բղխեաց: Այսօր ցօղով:
Աստուածատուն խնկաբեր ծառ:
Զանապական: Յարփւոյն:
Յաղթօղ եւ զնոր օրհնութիւն միշտ:
Փառք. — Որ եկն: Այժմ. — Այսօր եւ:
Ալէ. ալէ: Օրհնեցէք զնա ի բանս քաղցր. գովեցէք զնա ի բարբառ լսելիս: Փառք. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նորա. օրհնեցէք զնա ի հաստատութեան զօրութեան նորա:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԹՈՒՈՑ:

Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ. Խօսեայ դու ընդ որդիսդ Իսրայէլի, եւ առցես ի նոցանէ գաւազանս ըստ տանց նահապետաց իւրեանց՝ յամենայն իշխանաց իւրեանց, ըստ տանց աղգաց իւրեանց, երկոտասան գաւազան, եւ զիւրաքանչիւր անուն գրեսցես ի վերայ գաւազանի իւրոյ: Եւ զանունն Ահարոնի գրեսցես ի վերայ իւրոյ գաւազանին. եւ իցէ գաւազան մի ըստ ցեղից Իսրայէլի՝ զոր ի տանց նահապետաց իւրեանց տացեն. եւ դիցես զնոսա ի խորանին վկայութեան՝ որովք երեւեցայց քեզ անդ: Եւ եղիցի մարդոյ զոր ընտրեցից՝ գաւազանն իւր ծաղկեսցի, եւ բարձից յինէն զտրտունջ որդւոցն Իսրայէլի զոր տրտնջեն նոքա զձէնջ: Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայէլի, եւ եռուն ցնա ամենայն իշխանքն նոցա զգաւազանս իւրեանց. գաւազան միոյ իշխանի ըստ տանց նահապետաց իւրեանց, երկոտասան գաւազան. եւ գաւազանն Ահարոնի ի մէջ գաւազանացն նոցա: Եւ եդ Մովսէս զգաւազանսն առաջի Տեառն ի խորանին վկայութեան. եւ եղեւ ի վաղիւ անդր մտին Մովսէս եւ Ահարոն ի խորանն

վկայութեան. եւ ահա գալարայաւ գաւազանն Ահարոնի ի տանն Ղեւեայ, եւ արձակեաց շառաւիղ, եւ ծաղկեաց ծաղիկ, եւ երեւեցոյց ընկոյզ։ Եւ եհան Մովսէս զգաւազանն յերեսաց Տեառն առ ամենայն որդիսն Իսրայէլի, եւ տեսին. եւ էառ իւրաքանչիւր ոք զգաւազան իւր։

ԸՆԴԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱՋԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ, եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի։ Եւ հանգիցէ ի վերայ նորա հոգի Աստուծոյ, հոգի իմաստութեան եւ հանճարոյ, հոգի խորհրդոյ եւ զօրութեան, հոգի գիտութեան եւ աստուածպաշտութեան. եւ լցցէ զնա հոգի երկիւղի Աստուծոյ։ Ոչ ի կարծ դատեսցի, եւ ոչ ըստ խօսից յանդիմանեսցէ. այլ արասցէ իրաւունս տընանկին, եւ յանդիմանեսցէ զխոնարհս երկրի. եւ հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ, եւ հոգւով շրթանց իւրոց սատակեսցէ զամբարիշտս։ Եւ եղիցի արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր, եւ ճշմարտութեամբ պատեալ զկողս իւր։

ԸՆԴԵՐՑՈՒԱԾ Է ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԼՈՅ։

Եբաց Պետրոս զբերան իւր եւ ասէ. ճշմարտութեամբ հասեալ եմ, զի ոչ գոյ ակնառութիւն առաջի Աստուծոյ. այլ յամենայն ազգս՝ որ երկնչին ի նմանէ եւ գործեն զարդարութիւն՝ ընդունելի է նմա։ Զբանն առաքեաց որդւոցն Իսրայէլի՝ աւետարանել զիաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. սա է ամենայնի Տէր։ Դուք ինքնին գիտէք զբանն, որ եղեւ ընդ ամենայն Հրէաստան, սկսեալ ի Գալիլէէ յետ մկրտութեանն զոր քարոզեաց Յովհաննէս. զՅիսուս որ ի Նազարեթէ, զոր օծն Աստուած Հոգւով սրբով եւ զօրութեամբ. որ շրջեցաւ բարի առնել՝ եւ բժշկել զամենայն ըմբռնեալսն ի սատանայէ, զի Աստուած էր ընդ նմա։ Եւ մեք վկայեմք ամենայնի զոր արար յերկրին Հրէաստանի եւ յԵրուսաղէմ. զոր եւ սպանին կախեալ զփայտէ։ Զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր, եւ ետ նմա յայտնի լինել՝ ոչ ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս՝ յառաջագոյն ընտրելոցս յԱստուծոյ, որք եւ կերաք եւ արբաք ընդ նմա յետ յարութեան նորա ի մեռելոց։ Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն, եւ վկայութիւն դնել թէ նա է սահմանեալն յԱստուծոյ դատաւոր կենդանեաց եւ մեռելոց. նմա ամենայն մարգարէքն վկայեն՝ թողութիւն մեղայ առնուլ անուամբ նորա ամենայն հաւատացելոց ի նա։ Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանդեաւ Հոգին սուրբ ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն։ Զարմացան որ ի թլփատութենէ անտի հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի, զի եւ ի հեթանոսս պարգեւք Հոգւոյն սրբոյ զեղուին. քանզի լսէին ի նոցանէ խօսել լեզուս եւ մեծացուցանել զԱստուած։ Յայնժամ պատասխանի ետ Պետրոս. միթէ զջուրն ոք արգելուլ կարէ՞ առ ի չմկրտելոյ զսոսա, որք եւ զՀոգին սուրբ ընկալան որպէս եւ մեք։ Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի. յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ։

Պօղոսի առաքելոյն է կորնթացւոց առաջին նամակն է ընթերցուածս։

Եւ զորս եդն Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս բժշկութեանց, օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց։ Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է. եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն է՝ որ յաջողէ զամենայն յամենայնի։ Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն Հոգւոյն առ իւրաքանչիւր օգուտ։ Ումեմն ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ, միւսումն հաւատք նոյին Հոգւովք, այլում շնորհս բժշկութեանց նոյին Հոգւով։ Այլում աջողութիւն զօրութեանց, այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանութիւն լեզուաց։ Այլ զայս ամենայն աջողէ մի եւ նոյն Հոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի։

Ալէ. ալէ։ Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նորա. օրհնեցէք զնա ի հաստատութեան զօրութեան նորա։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն՝ եւ նոցա զօրութիւն եւ իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց, եւ բժշկել զհիւանդութիւնս։ Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ եւ բժշկել զախտաժէտս։ Եւ ասէ ցնոսա. մի ինչ բառնայք ի ճանապարհ, մի գաւազան եւ մի մախաղ, մի հաց եւ մի արծաթ, մի երկուս հանդերձս ունիցիք։ Եւ յորս տուն մտանիցէք՝ անդ ագջիք, եւ անտի գնայցէք։ Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ՝ զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա։ Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, աւետարանէին եւ բժշկէին ընդ ամենայն տեղիս։

Սարկաւագն խրոխտ.

Եւ եւս խաղաղութեան։ Օրհնեա Տէր։

Դ. Ռեծ Վարդապետն պալով զօրհնութիւն՝ առնու զգաւազանն և պայ հրաւիրէլոյն ասելով.

Ա՛ռ և զերրորդ աստիճան վարդապետութեան կարողութեամբ Հոգւոյն սրբոյ, կոչել յապաշխարութիւն զմեղուցեալսն՝ որք գիտութեամբ և անգիտութեամբ անկեալ իցեն ի հաղբսս չարին, դարձուցանել զնոսա յամենայն չարեաց, որպէս զդարձումն անառակ որդւոյն, թողլով զամենայն մեղս նոցա, և տալով զպատմուճանն առաջին։ Եւ դու յերևել Հօտապետին՝ ընկալցիս զանթառամ փառաց պսակն։

Շարական ԳԿ.

Ուրախացան զօրք երկնից։
Բղխմամբ քո սուրբ արտասուաց։
Այլ մեք ձայնիւ ցնծութեամբ։
Յանձն առեր զչարչարանս։
Փրկող, Սուրբ խաչիւս։ Աղօթ, Պահ։

ԿԱՆՈՆ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ.

Երգեան է հարա-ակողն ասելով Շարա-
կան ԳՁ.

Երանելի սուրբ առաքեալք հրաւի։
Որք առիք իշխան։ Խաչակցեալք ընդ։
Զմարգարէ բարձրելոյն եւ զթագաւ։
Զմիածնին կարա։ Զյանապատի բնակ։
Այսօր զուարճացեալ տօնեն երկինք։
Այսօր վերատին։ Այսօր մեծապէս։
Նմանեալ Մովսէսի տէր վարդապետ։
Քանզի նա արժանաւ։ Արդ աղաչեմք։
Հայրապետ սուրբ եւ ամբիծ եւ ընտ։
Հովիւ հոգեւոր քա։ Հաստատ։ Ի տա-
Հոգիդ ճշմարիտ՝ որ զաստուածա։
Որ առաքեցար ի Հօրէ։ Որ կատարե։
Զծնեալն ի սրբոյ կուսէն ընկալցուք։
Օրհնեսցուք զառա։ Ուրախ լեր ա։
Այսօր ուրախացեալ ցնծան երկնից։
Փառք. — Այսօր սիւն։ Այսօր։

Ալէ. ալէ։ Առաքեա զհոգի քո եւ
ստանաս զնոսա՝ եւ նորոգեա զերեսս
երկրի։ Փառք. Օրհնեա անձն իմ զՏէր.
Տէր Աստուած իմ մեծ եղեր յոյժ։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Է ԸՐԲՈՒԹ ԹԱՓԱՌՈՒՆԵԱՆՑ։

Եւ եղեւ ընդ անցանելն նոցա՝ ասէ
Եղիա ցԵղիսէէ. խնդրեա զինչ արա-
րիս քեզ՝ մինչչեւ վերացեալ եմ ի
քէն. եւ ասէ Եղիսէէ. եղիցի կրկին
ոգի քո ի վերայ իմ։ Եւ ասէ Եղիա.
դժուարին խնդրեցեր. բայց եթէ
տեսցես զիս յամբառնալ իմում ի քէն՝
եղիցի այնպէս՝ ապա թէ ոչ՝ մի՛ եղի-
ցի։ Եւ եղեւ մինչդեռ գնային նոքա՝
խօսէին եւ երթային՝ եւ ահա կառք
հրեղէնք եւ երիվարք հրեղէնք՝ եւ
անջրպետեցին ի մէջ երկոցունց. եւ
վերացաւ Եղիա շտրժմամբ յերկինս։
Եւ Եղիսէէ հայէր եւ աղաղակէր.
հայր՝ հայր՝ կառքդ Իսրայէլի եւ հե-
ծեալքդ նորա։ Եւ այլ ոչ ետես զնա.
եւ բուռն եհար զհանդերձից
իւրոց՝ եւ պատառեաց յերկուս ծուէ-
նըս։ Եւ էառ Եղիսէէ զմաշկեակն Ե-
ղիայի՝ զոր ընկէց ի վերայ նորա։ Եւ
դարձաւ Եղիսէէ՝ եւ եկաց առ եզերն
Յորդանանու. եւ էառ զմաշկեակն Ե-
ղիայի զոր ընկէց ի վերայ նորա՝ եւ
եհար զջուրսն եւ ասէ. ո՞ւր ես Տէր
Աստուած Եղիայի ափիով։ Եւ եհար
զջուրսն՝ եւ բաժանեցան յայսկոյս
յայնկոյս՝ եւ անց Եղիսէէ։ Իբրեւ տե-
սին որդիք մարգարէիցն որ յԵրիքովի
ի հանդիպոյն՝ եւ ասեն. հանգեաւ
ոգին Եղիայի ի վերայ Եղիսէի. եւ եկին
ընդ առաջ նորա՝ եւ երկիր պագին
նմա ի վերայ երկրի։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱՋԵԱՅ ՀԱՐԳԱՐԷԷ։

Եւ լուայ զբարբառ Տեառն որ ա-
սէր. զո՞ առաքեցից՝ եւ կամ ո՞ եր-
թիցէ առ այն ժողովուրդ։ Եւ ասեմ.
ահաւասիկ ես՝ առաքեա զիս։ Եւ ասէ.
երթ եւ ասա ցժողովուրդն ցայն. լսե-
լով լուիջիք եւ մի՛ իմասջիք՝ եւ տես-
սանելով տեսջիք՝ եւ մի՛ գիտասջիք՝

Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ, եւ ականջօք իւրեանց ծանունս լուան. եւ զաչս իւրեանց կափուցին՝ զի մի երբէք տեսանիցեն աչօք, եւ լուիցեն ականջօք, եւ իմանայցեն սրտիւք, եւ դառնայցեն՝ եւ բժշկեցից զնոսա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՄՈՂԹԵՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Ասէ Տէր ամենակալ. ուխտն իմ որ ընդ նմա՝ կենաց եւ խաղաղութեան. ես եմ նմա երկիւղ՝ երկրնչել յինէն, եւ յերեսաց անուան իմոյ խորշել։ Օրէնք ճշմարտութեան էին ի բերանն նորա, եւ անիրաւութիւն ոչ գտաւ ի շրթունս նորա. խաղաղութեամբ եւ ուղղութեամբ գնաց ընդ իս, եւ զբազումս դարձոյց յանիրաւութենէ։ Զի շրթունք քահանային զգուշասցին գիտութեան, եւ օրէնս խնդրեսցին ի բերանոյ նորա. զի հրեշտակ Տեառն ամենակալի է։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ։

Արդ պարտ է յարանցս յայսոյանէ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի, յորում մնա եւ ել առ մեզ Տէր Յիսուս, սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչեւ յօրն՝ յորում վերացաւ ի մէնջ, վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում ի սոցանէ։ Եւ կացուցին երկուս. զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւն Յուստոս, եւ զՄատաթիա։ Եւ կացեալ յաղօթս՝ ասեն. դու Տէր, սրտագէտ ամենայնի, յայտնեա զմի ոք զոր ընտրեցեր ի սոցանէ յերկոցունց, առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ եւ զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս գնալ ի տեղի իւր։ Եւ եռուն վիճակս նոցա, եւ ել վիճակն Մատաթեայ, եւ համարեցաւ ընդ մեսասան առաքեալսն։

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ Ի ԿԱՐՈՂԷՍՈՅ ԱՌԱՋԻՆ ԸՂՌՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾ։

Սիրելիք, մի ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք զհոգիսն եթէ յԱստուծոյ իցեն. զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ. եւ մեք այսուիկ ճանաչեմք զՀոգին Աստուծոյ։ Ամենայն հոգի՝ որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, յԱստուծոյ է նա. եւ ամենայն հոգի որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, չէ նա յԱստուծոյ. եւ այս նեռինն է, զորմէ լուարուքն եթէ գալոց է, եւ արդէն իսկ յաշխարհի է։ Դուք յԱստուծոյ էք, որդեակք, եւ յաղթեցէք նոցա. զի մեծ է որ ի ձեզդ է՝ քան զայն որ յաշխարհին է։ Նոքա յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին, եւ աշխարհ լսէ նոցա։ Մեք յԱստուծոյ եմք. որ զԱստուած ճանաչէ՝ լսէ մեզ, եւ որ չէ յԱստուծոյ՝ ոչ լսէ մեզ. այսուիկ ճանաչեմք զՀոգին ճշմարտութեան, եւ զՀոգին խաբէութեան։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԼՈՅՆ Ի ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ ԸՂՌՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾ։

Հաւատարիմ է բանս եւ ամենայն ընդունելութեան արժանի է, զի ի սոյն իսկ վաստակեմք եւ նախատինս յանձն առնումք. զի յուսացեալ եմք յԱստուած կենդանի, որ է փրկիչ ամե-

նայն մարդկան, մանաւանդ հաւատացելոց։ Պատուէր տալիր զայդ եւ ուսուցանիցիր, զի մի ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ։ Այլ օրինակ լինիցիր հաւատացելոց՝ բանիւք, գնացիւք, սիրով, հաւատով, սրբութեամբ, մինչեւ գամ ես. մինչ դիր ընթերցուածոց մխիթարութեան եւ վարդապետութեան։ Մի անփոյթ առներ զշնորհացդ որ ի քեզ են, որք տուան քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան։ Զայդ խորհեաց եւ ի դոյն կանխեսցիր, զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի։ Զգոյշ լինիցիր անձին եւ վարդապետութեանդ եւ ի դմին յամեսցիր. զայդ եթէ առնիցես, եւ զանձն ապրեցուսցես, եւ զայնոսիկ որ քեզն լսիցեն։

Ալէ. ալէ։ Ո արար զհրեշտակս իւր յոգիս, և զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն եւ փախչի, եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ։ Քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հովիւն քաջ. եւ ճանաչեմ զիմն, եւ ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայրն. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց։ Նա եւ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ։

Ապա Սարկաւագն գրոցէ.

Եւ եւս խաղաղու։ Օրհնեա՛ Տէր։

Ե՛ Մեծ Վարդապետն գոլով ըստ հանրակրօնն՝ առնու զգաւազանն և գայ ի յերեսս հրաւիրելոյն ասելով.

Ա՛ռ որդեակ և զչորրորդ աստիճանն վարդապետութեան, և իմա թէ զի՞նչ վերաձայնեաց քեզ մարգարէն Եսայիաս, ձայն բարբառոյ յանապատի ասելով։ Վասն որոյ պարտ է և քեզ մեղաւորաց՝ տգիտաց և անհաւատից քարոզել, համարձակ քարոզել առանց երեսաց և առանց ակնառութեան, պարզ և յստակ քարոզել, իմաստութեամբ և գիտութեամբ քարոզել կշտամբել՝ յանդիմանել՝ խրատել և մխիթարել, յանապատ և յանբոյթ տեղիս քարոզել՝ այս ինքն անապատացելոց և աւերելոցն հոգւով։ Եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս լուսաւորեսցէ զաչս մտաց քոց, լուսաւոր առնել ի քեզ զլոյս գիտութեան և անուանիլ ի Տեառնէ՝ թէ դուք էք լոյս աշխարհի. և դարձեալ՝ թէ ոչ դոյ ի քեզ մասն խաւարի, զի և բոլորն ամենայն լոյս

եղեցի, և իբրև զարեգակն ծագեսցիս յարքայութեան երկնից ընդ ամենայն սուրբս ըստ հրամանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն։

Շաբաթն ԳԶ.

Ժողովեալ սուրբ Հայրապետքն։

Որք զինու հոգ։ Եւ զհաւատս սուրբ։

Քաջող, Սուրբ խաչիւս. Ողորմ, Պահ։

ԿԱՆՈՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ԾԱՑՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ.

Ոչ պոռեալ լինելոյն պեղեալ. Լաւեն Շաբաթն ԲԿ.

Անդադար յերկինս օրհնաբանօղք։

Քաղցրաձայն եր։ Անլռելի։ Երեքսրբ։

Որ զլոյս անճառ շնորհաց աստուա։

Որ ընտրեցեր յորո։ Որ օրինօք ճրշ։

Լցեալ աստուածային շնորհիւ երա։

Ստացար քեզ։ Նոուր զմարմինդ։

Վարդագոյն վառեալ ծաղիկ ի նորա։

Աղաւնի քաղ։ Բաբունեայ։ Դու պար։

Այսօր աղբիւր գիտութեան բղխեալ։

Այսօր իջ։ Այսօր լեն։ Այսօր ի։ Այսօր։

Այսօր ցնծան երկնայինքն եւ պար։

Այսօր վե։ Այսօր աս։ Այսօր ծե։ Այ։

Անպատումն կառք անքննելի խոր։

Փառք.—Անյաղթելի։ Ալել.—Ցառա։

Ալէ. ալէ։ Երեւեցան փայլատակունք քո տիեզերաց. խռովեցաւ եւ դողաց երկիր։ Փառ. Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով առ Աստուած, եւ նայեցաւ առ իս։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԻՆԷՑ։

Պատասխանի ետ Մովսէս եւ ասէ. եթէ ոչ հաւատայցեն ինձ, եւ ոչ լուիցեն ձայնի իմում, քանզի ասիցեն՝ թէ չէք երեւեալ քեզ Աստուծոյ, զի՞նչ ասացից ցնոսա։ Ասէ ցնա Տէր. զի՞նչ է այդ որ ի ձեռին քում է։ Եւ նա ասէ. գաւազան։ Եւ ասէ. ընկեա՛ զդա ի գետին. եւ ընկէց զնա ի գետին, եւ եղեւ օձ, եւ փախեաւ Մովսէս ի նմանէն։ Եւ ասէ Տէր ցՄովսէս. ձգեա՛ զձեռն քո եւ բռուռն հան զտըտանէն. եւ ձգեաց զձեռն իւր եւ բռուռն էհար զտըտանէն, եւ եղեւ գաւազան ի ձեռին նորա։ Զի հաւատասցեն քեզ՝ թէ երեւեալ է քեզ Տէր Աստուած հարցն նոցա, Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբայ։ Ասէ ցնա դարձեալ Տէր. արկ՝ զձեռն քո ի ծոց քո. եւ էարկ զձեռն իւր ի ծոց իւր, եւ եհան զնա ի ծոցոյ իւրմէ, եւ եղեւ ձեռն նորա բորոտ իբրեւ զձիւն։ Եւ ասէ. արկ զձեռն քո ի ծոց քո. եւ էարկ զձեռն իւր ի ծոց իւր, եւ եհան զնա ի ծոցոյ իւրմէ, եւ դարձեալ անդրէն ի նոյն հաստատեցաւ ի գոյն մարմնոյ իւրոյ։ Եթէ ոչ հաւատայցեն քեզ եւ ոչ լուիցեն ձայնի առաջնոյ նշանին, հաւատասցեն քեզ ձայնի երկրորդի նշանիդ։ Եւ եղիցի եթէ ոչ հաւատասցեն երկոցունց նշանացդ այդոցիկ, եւ ոչ լուիցեն ձայնի քում, առցես դու ի ջրոյ գետոյն եւ հեղցես ի ցամաքի, եւ եղիցի ջուրն՝ զոր առնուցուս ի գետոյ անտի՝ արիւն ի ցամաքին։ Եւ ասէ Մովսէս ցՏէր. ազաչեմ զքեզ Տէր. չեմ բաւական, որպէս թէ յերիկէ եւ յեռանդէ, եւ ո՛չ յորմէ հետէ սկսար խօսել ընդ ծառայի

քում. զի Նրբաձայն եւ ծանրալեզու եմ ես։ Եւ ասէ Տէր ցՄովսէս. ո՞վ ետ բերան մարդոյ, կամ ո՞վ արար զխուլն եւ զհամր, զականին եւ զկոյր. ո՞չ ապաքէն ես Աստուած։ Եւ արդ երթ, եւ ես բացիցս զբերան քո եւ խելամուտ արարիցս զքեզ՝ զոր պարտ իցէ խօսել։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՐԵՄԻՈՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Եւ եղեւ բան Տեառն առ իս՝ եւ ասէ. մինչչեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ, եւ մինչչեւ ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի զքեզ, մարգարէ ի հեթանոսս եդի զքեզ։ Եւ ասեմ. որ եսդ Տէր, Տէր, ահաւասիկ եւ խօսել իսկ ո՞չ գիտեմ, զի մանուկ եմ ես։ Եւ ասէ ցիս Տէր. մի ասեր եթէ մանուկ եմ ես. զի առ ամենեսեան՝ առ որս առաքեցիս զքեզ՝ երթիցես, եւ ըստ ամենայնի զոր միանգամ պատուիրեցիս քեզ՝ խօսեսցիս։ Մի երկիցես յերեսաց նոցա, զի ընդ քեզ եմ ի փրկել զքեզ, ասէ Տէր։ Եւ ձգեաց Տէր զձեռն իւր առ իս՝ եւ մերձեցոյց ի բերան իմ, եւ ասէ ցիս. Ահա ետու զբանս իմ ի բերան քո. ահա կացուցի զքեզ այսօր ի վերայ ազգաց եւ թագաւորութեանց, խլել եւ բրել, կորուսանել եւ յատակել, շինել եւ տնկել։ Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ. զի՞նչ տեսանես, Երեմիա։ Եւ ասեմ. գաւազան ընկուզի տեսանեմ ես։ Եւ ասէ ցիս Տէր. բարւոք տեսանես, զի զարթուցեալ եմ ես ի բանս իմ առնել զնոսա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅՈՍԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԷ։

Գոչեա զօրութեամբ եւ մի խնայեար, բարձրացո՛ իբրեւ փողոյ զբարբառ քո, պատմեա՛ ժողովրդեան իմում զմեղս նոցա, եւ տանն Յակովբայ զանօրէնութիւնս նոցա։ Զիս օր ըստ օրէ խնդրեն, եւ ճանաչել զճանապարհս իմ ցանկան, իբրեւ ժողովրդեան որոյ զարդարութիւն գործեալ իցէ, եւ զիրաւունս Աստուծոյ իւրոյ չիցէ թողեալ։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ։

Պատասխանի ետ Անանիա. Տէր, լուայ ի բազմաց վասն առնն այնորիկ՝ որչափ արար չարիս սրբոց քոց յԵրուսաղէմ, եւ ասա ունի զիշխանութիւն ի քահանայապետէն՝ կապել զամենեսեան որ կարդան զանուն քո։ Ասէ ցնա Տէր. երթ դու, զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց եւ թագաւորաց եւ որդւոցն Իսրայէլի. քանզի ես իսկ ցուցից նմա՝ որչափ պարտ իցէ նմա չարչարել վասն անուան իմոյ։ Եւ գնաց Անանիա եւ եմուտ յապարանսն. եւ եդեալ ի վերայ նորա ձեռս, եւ ասէ. Սաւուղ եղբայր, ի վերս հայեաց. Տէր առաքեաց զիս, Յիսուս՝ որ երեւեցաւն քեզ ի ճանապարհին յորում գայիրն, որպէս զի տեսցես եւ լցցիս Հոգւով սրբով։ Եւ վաղվաղակի անկան յաչաց նորա իբրեւ կեղեւանք, ետես, եւ յարեաւ մկրտեցաւ, եւ առեալ կերակուր՝ զօրացաւ։ Եւ եղեւ ի Դամասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ, եւ վաղվաղակի ի ժողովուրդսն քարոզեաց զՅիսուս, թէ սա է Որդին Աստուծոյ։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԵՐԷՍԱՑՈՅ ԸՆԹՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾ։

Այսուհետեւ զօրացարո՛ւք Տերամբ եւ կարողութեամբ զօրութեան նորա,

եւ զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի։ Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս, եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան որ ի ներքոյ երկնից։ Վասն այնորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիցիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան։ Եւ իբրեւ զամենայն ինչ կատարիցէք, հաստատուն կացէք, զտեղի կալջիք, պընդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, եւ զգեցեալ զզրահսն արդարութեան, եւ ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեան։ Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոյ, որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել։ Եւ առէք զսաղաւարտն փրկութեան, եւ զսուսեր Հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ։

Այլ. ալէ։ Երեւեցան փայլատակունք քո տիեզերաց. ետես և սատանեցաւ երկիր։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եղեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ 'Կեսարեային' հարցանէր ցաշակերտսն եւ ասէր. զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ Եւ նոքա ասեն. ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, եւ կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն։ Ասէ ցնոսա Յիսուս. իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի ետ Սիմովն Պետրոս եւ ասէ. դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. երանի քեզ Սիմովն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է։ Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն։ Եւ տացց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։

Ընդ Սրբոյ-ացն խորհէ.

Եւ եւս խաղաղութ։ Օրհնեա՜ Տէր։

Ն՝- Մեծ Վ՝ուրդապետն դալով զբրհնութիւն՝ ասելոյ զգաստանն և դայ էջեան հրաբերելոյն ասելով.

Ա՛ռ զՀինգերորդ աստիճան վարդապետութեան, և լո՛ւր սրբբաբան մարգարէին կրկնաբանութեանն՝ թէ պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, և ուղի՛ղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ։ Վասն որոյ և դու յոժար կամօք պատրաստեա՛ զճանապարհս Տեառն օրինօք և հաւատովք ի Հոգի և ի մարմին հաւատացելոց։ Դու ըստ աշխատութեան և վաստակոց քոց՝ արժանի լեցիս ժառանգել զխոստացեալ տեղին, թէ ուր են եմ՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Ի նոյն սէր վառելով զմիտս քո յամենայն ժամ. ամէն։

Շարական ԲԿ.

Յորժամ հերձեաց Մովսէս։
Իսկ վայտ խաչի։ Իմանալի բանաւոր։
Վարդ, Սուրբ խաչ։ Աղօթք, Պահպան։

ԿԱՆՈՆ ՎԵՑՍԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ.

Որ պոռէաւ լինի էնոյն պէղոջ. Ա ասի Շարական ԲՁ.

Ով երջանիկ տէր սուրբ Գրիգոր սրբ։
Զքեզ ունիմք։ Կանխեա խնդրեա։
Առաջնորդ հաւատոյ եւ լուսաւորիչ։
Մեծ խոստովանողն։ Քահանայապետ։
Ով երանելի եւ բարեպաշտ Թէոդոս։
Որ երկրբպագողդ։ Որ թագաւորաց։
Սքանչելի հուր աստուածութեան։
Յայգեւոյդ անմահու։ Որ զհուրն։
Նոյն եւ նման Հօր եւ Որդւոյ Հոգւոյդ։
Էից ստեղծող։ Բաբուն վեր։
Լոյսդ որ ի Հօրէ առաքեցար յորժամ։
Այսօր յայրին։ Ինմանութիւն։
Անապական սուրբ զխաչն օրհնեա։
Բանալի արքա։ Գաւազանաձեւ երեւ։
Փառք.—Դրոշմ։ Այժմ.—Երեւեալ։

Ալէ. ալէ. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան. եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։ Փառ. Յնծացէք արդարք ի Տէր, ուղղոց վայելէ օրհնութիւն. խոստովան եղերուք Տեառն օրհնութեամբ. տաճնապեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացէք նմա։

ԸՆԴԵՐՁՈՒԱԾ ՅԵՐԷՔՈՒԴ ՕՐԷՆԱՑ։

Եւ պատուիրեաց Մովսէս Յեսուայ որդւոյ Նաւեայ եւ ասէ. քաջ լեր եւ զօրացիր. զի դու տանելոց ես զորդիսն Իսրայէլի յերկիրն զոր խոստացաւ տալ նոցա Տէր, եւ նա եղիցի ընդ քեզ։ Եւ Յեսու որդի Նաւեայ լցաւ հոգւով իմաստութեամբ, զի եդ Մովսէս զձեռն իւր ի վերայ նորա. եւ հնազանդեցան նմա որդիքն Իսրայէլի, եւ արարին որպէս պատուիրեաց Տէր Մովսէսի։ Եւ եղեւ յետ վախճանելոյն Մովսէսի ծառայի Տեառն, խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ որդւոյ Նաւեայ պաշտօնէի Մովսիսի եւ ասէ. Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան դու եւ ամենայն ժողովուրդ քո՝ յերկիրն զոր ես տայ որդւոցն Իսրայէլի։

ԸՆԴԵՐՁՈՒԱԾ ՅԱՐՏԻՒՆԻ ՄԱՐԳԱՐԷԷ։

Եւ ասէ Տէր. որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի. լուիցես յինէն զպատգամս, եւ սպառնասցիս նոցա իբրեւ յինէն։ Յորժամ ասիցեմ ցանօրէնն՝ թէ մահու մեռանիցիս, եւ դու ոչ զգուշացուցանիցես նմա, եւ ոչ խօսեսցիս զգուշանալ անօրինին, եւ դառնալ ի ճանապարհաց իւրոց չարաց եւ կեալ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, եւ զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից։ Իսկ եթէ դու զգուշացուցանիցես անօրինին, եւ նա ոչ դարձցի յանօրէնութենէ իւրմէ եւ ի ճանապարհէ իւրմէ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, եւ դու զանձն քո ազատեցուցես։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Է ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԼՈՅ։

Եւ գնացեալ անտի եմուտ ի տուն ուրուսն, որոյ անուն էր Տիտոս Յուստոս՝ պաշտօնեայ Աստուծոյ, որոյ ապարանք էին մերձ ի ժողովեարանն։ Կրիսպոս ժողովրդապետ հաւատաց ի Տէր ամենայն տամբ իւրով, եւ բազմաց ի Կորնթացւոցն լուեալ՝ հաւատացին եւ մկրտեցան։ Եւ ասէ Տէր ի գիշերի տեսլեամբ ցՊօղոս. մի երկնչիր, այլ խօսեայ եւ մի լռեր. քանզի ես ընդ քեզ եմ, եւ ոչ ոք ընդդէմ դարձցի քո ի չարչարել զքեզ. քանզի ժողովուրդ է իմ բազում ի քաղաքիս յայսմիկ։ Եւ նստաւ անդ տարի մի եւ ամիսս վեց՝ ուսուցանել նոցա զբանն Աստուծոյ։

ՅԱԿՈՎԲՈՍ ԱՌԱՔԵԼՆԻ Է ԿՈՐՈՍԻ ԸՆԹԵՐՑՈՒԱԾ։

Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել, եւ ոչ սանձահարիցէ զլեզու իւր, այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է կրօնաւորութիւն։ Կրօնաւորութիւն սուրբ եւ անարատ առ ի յԱստուծոյ եւ ի Հօրէ այս է, այցելու լինել որբոց եւ այրեաց ի նեղութեան իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ։

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՆԻ Է ԿՈՂՈՍԱՑՈՑ ԸՆԹԵՐՑՈՒԱԾ։

Եւ արդ ուրախ եմ ի չարչարանս իմ վասն ձեր, եւ լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա, որ է Եկեղեցի, որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ՝ ըստ անտեսութեանն Աստուծոյ՝ որ տուեալ է ինձ ի ձեզ, կատարել զբանն Աստուծոյ։ Զխորհուրդն որ ծածկեալ էր ի յաւիտեանցն եւ յազգաց, որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց. որոց կամեցաւ Աստուած ցուցանել, թէ զինչ է մեծութիւն փառաց խորհրդոյն նորա ի հեթանոսս. որ է Քրիստոս ի ձեզ՝ յոյսն փառաց. զոր մեքն քարոզեմք, եւ խրատեմք զամենայն մարդ, եւ ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն հոգեւոր իմաստութեամբ, զի կացուցուք զամենայն մարդ կատարեալ ի Քրիստոս Յիսուս։ Յոր եւ աշխատիմ պատերազմեալ ըստ աջողութեան նորա, որ աջողեալ է յիս զօրութեամբ։

Ակն. պէ։ Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ Նորա ամենայն զօրութիւնք նոցա։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, եւ ուսուցանէր։ Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանսն, եւ սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. եւ տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ինչ բարձցեն ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի պարկ, մի հաց, մի պղինձ ի գօտիս, այլ ագանել հողաթափս. եւ մի զգենուցուք, ասէ, երկուս պարեգօտս։ Եւ ասէր ցնոսա. յոր տուն մտանիցէք, անդէն օթեւանս կալջիք մինչեւ ելանիցէք անտի։ Եւ որ ոչ ընկալցին զձեզ, եւ ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսս-

ջիք զիոշի ոտից ձերոց ի վկայութիւն նոցա։ Եւ եղեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն։ եւ դեւս բազումս հանէին, եւ օծանէին իւղով զբազում հիւանդս, եւ բժշկէին զնոսա։

Աղա Սրբոյ-ացն տարողէ.

Եւ եւս խաղաղու։ Օրհնեա՜ Տէր։

Ե՛ր-ՀԵՆ Վարդապետն պալով զբրհնո-ՐԻՆ՝ առնու զգա-ապանն և պայ ի յեռն հրա-էրելոյն ասելով.

Ա՛ռ զվեցերորդ աստիճան վարդապետութեան, և յիշեա՛ թէ զնարդ օրինադրէ վասն այսր աստիճանի նոյն մարգարէն Եսայիաս յայլում տեղւոջի սոյն ոճ բանի՝ ասելով. Ե՛լ ի վերայ լերինդ բարձու աւետարանիչդ Սիոնի, այս ինքն ի գլուխս և ի կատար ամենայն բարձր և դժուարին առաքինութեանց, և ապա քարոզեա՛ զբանն Աստուծոյ։ Եւ դու զայնոսիկ կատարեալ՝ արժանի լինիցիս անճառ խնդութեան, ժառանգել զկեանս՝ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ բազմապատիկ փոխարինօք ընդ ամենայն սուրբս, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։

Շարական ԲՁ.

Որ լուսով աստուածային։
Որ զհամագոյ։ Որ զփրկական։
Քարող, Սուրբ խաչ։ Աղօթք, Պահպան։

ԿԱՆՈՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ.

Դարձեալ ի հարցոյ կողմանէն և երբեմն ի հիւսիսակողմն ասելով Շարական Ակ.

Սիրոյ անմահ եւ երկնաւոր սուրբ։
Վարդապետին տի։ Տիրական սուրբ։
Որ առաքեցեր նախընթաց քում գա։
Որ խոնարհեցար։ Որ լուծեր։
Որ զարդարեալ գեղապանծ վայել։
Որք զինու։ Որ շնորհեցեր։
Որ թագաւորաց ազգաց եւ ազանց։
Որ խորհրդեամբ։ Որք զծածկեալն։
Որ յօրինակ։ Որ երկոքումբք։
Որ ի հրացայտ սաւառնաթեւիցդ։
Որ ի հրեղէն։ Որ ի հրակերպիցն։
Անսկիզբն Աստուած անճառելի ամբ։
Որ յանէից։ Ի յամուլ երկրէ։
Ի վերայ վիմի հաստատ հիմանն առաք։
Փառք. — Տեղի ապաւ։ Այժմ.—Բանն։

Ալէ. ալէ։ Յուսպ քո եւ գաւազան նոքա մխիթարեսցեն զիս։ Փոխ. Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցի։

ԸՆԴԷՐՑՈՒԱԾ ՅԱՂԹՑ։

Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ Ահարոնի եւ ասէ. եթէ խօսեսցի ընդ ձեզ Փարաւոն եւ ասասցէ, տուք մեզ նշան կամ արուեստ, ասասցես ցԱհարոն եղբայր քո. առ դու զգաւազանդ, եւ ընկեա՛ զգա ի գետին առաջի Փարաւոնի եւ ծառայից նորա, եւ եղիցի վիշապ։ Մտին Մովսէս եւ Ահարոն առաջի Փարաւոնի, եւ արարին այնպէս՝ որպէս պատուիրեաց նոցա Տէր։

Եւ ընկէց Ահարոն զգաւազանն առաջի Փարաւոնի եւ առաջի ծառայից նորա, եւ եղեւ վիշապ։ Եւ կոչեաց Փարաւոն զիմաստունս Եգիպտացւոց եւ զկախարդս։ եւ արարին զէտքն Եգիպտացւոց կախարդութեամբ իւրեանց նոյնպէս։ Եւ ընկէց իւրաքանչիւր զգաւազան իւր եւ եղեն վիշապք։ եւ եկուլ գաւազանն Ահարոնի զգաւազանս նոցա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅՈՎՍԵՓՈՍԻ ՄԱՐԳԱՐԷԻ։

Իբրեւ զի գեղեցիկ են ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւոյն խաղաղութեան, իբրեւ աւետարանչի բարութեանց։ զի լսելի արարիր զփրկութիւն քո, ասել ցՍիոն թէ թագաւորեսցէ քեզ Աստուած։ զի որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, եւ որոց ոչ լսէ լուեալ՝ ի միտ առցեն։ Ցայտնի եղէ այնոցիկ որ զինէն ոչ հարցանէին։ գտայ այնոցիկ որ զիս ոչ խնդրէին։ Ասացի՝ ահաւասիկ եմ, ցաղգն ցայն որ զանուն իմ ոչ կարդացին։ Զօր հանապազ ձգեցի զձեռն իմ առ ժողովուրդ անհաւան եւ հակառակող, որ գնային զճանապարհ որ ոչ էր բարւոք։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ։

Էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք եւ վարդապետք, Բառնաբաս եւ Շմաւոն կոչեցեալն Նիգեր, եւ Ղուկիոս Կիւրենացի, եւ Մանայեն դայեակորդի Հերովդի Զորրորդապետի, եւ Սօղոս։ Մինչդեռ ի պաշտաման Տեառն կային եւ պահէին, ասէ Հոգին սուրբ։ որոշեցէք ինձ զԲառնաբաս եւ զՍօղոս ի գործ՝ յոր կոչեալ է իմ զդոսա։ Յայնժամ պահեալ եւ աղօթս արարեալ, եդին ձեռն ի վերայ նոցա եւ արձակեցին։ Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն սրբոյ՝ իջին ի Սելեւկիա, եւ անտի նաւեցին ի Կիպրոս։ եւ հասեալ ի Սաղամինա՝ պատմէին զբանն Աստուծոյ։

ՅՈՎՀԱՆՆՈՍ ԱՌԱՔԵԼՈՅՆ Է ԿԱՐՈՂԷԷՍՅՑ ԱՌԱՋԻՆ ԸՂԹՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾ։

Որ էրն խսկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց։ Եւ կեանքն յայտնեցան։ եւ տեսաք եւ վկայեմք, եւ պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էրն առ Հօր՝ եւ երեւեցաւ մեզ։ Զոր տեսաքն եւ լուաք՝ պատմեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ։ եւ մեր հաղորդութիւնն լցէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի։ Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ լցէ։ Եւ այս են աւետիքն զոր լուաք առ ի նմանէ եւ պատմեմք ձեզ, զի Աստուած լոյս է, եւ խաւար ինմա չիք եւ ոչ մի։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԼՈՅՆ Է ՏԻՄՈԹԷՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՂԹՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾ։

Այլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան, յօժարութեան, հաւատոյ, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չարչարանաց։ որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ յԻկոնիոն եւ ի Լիւստրոս։ որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր։ Եւ

ամենեքին որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն։ Այլ դու, որդեակ իմ, զօրացիր շնորհօք՝ որ ի Քրիստոս Յիսուս. եւ զոր լուար յինէն բազում վկայիւք՝ զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց, որք բաւական իցեն եւ զայլս ուսուցանել։ Վշտակից լեր իբրեւ զբարւոք զինուոր Քրիստոսի Յիսուսի։ Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ կեանս աշխարհիս պատազի, եթէ զօրավարին հաճոյ լինիցի։ Եւ եթէ մարտիկ ոք իցէ, ոչ պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ։ Եւ հողագործին աշխատելոյ պարտ է նախ ի պտղոյն վայելել։ Իմաց զինչ ասեմ. տացէ քեզ Տէր իմաստութիւն յամենայնի։

Աղէ. աղէ։ Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. և զանձուս ծերոց ժառանգեցուցից նմա։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յետ այսորիկ երեւեցոյց Տէր եւ այլ եւս եօթանասուն եւ երկուս, եւ առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս եւ ի տեղիս՝ ուր ինքն երթալոց էր։ Եւ ասէ ցնոսա. հունձք բազում են եւ մշակք սակաւ. արդ աղաչեցէք զտէր հնձոյ, զի հանցէ մշակս ի հունձս իւր։ Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրեւ զգառինս ի մէջ գայլոց։ Մի բառնայք քսակ, մի մախաղ, մի կօշիկս. եւ ի ճանապարհի ումեք ողջոյն մի տայցէք։ Յոր տուն մտանիցէք, նախ ասասջիք թէ ողջոյն տանս այսմիկ. եթէ իցէ անդ որդի ողջունի՝ հանգիցէ ի վերայ նորա ողջոյնն ձեր, ապա թէ ոչ՝ ի ձեզ դարձցի։ Եւ ի նմին տան ագանիջիք, ուտիջիք եւ ըմպիջիք ի նոցանէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ. մի փոխիցիք տանէ ի տուն։ Յոր քաղաք մտանիցէք եւ ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր, եւ բժշկեսջիք որ ի նմա հիւանդք իցեն. եւ ասասջիք նոցա, մերձեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։

Էջ Սրբոյ-ոգն ասէ.

Եւ եւս խաղաղութիւն։ Օրհնեա՛ Տէր։

Ն՝ Ղեր Վարդապետն գալով զբրենն՝ առնու զգաւազանն և գայ էջերն հրաբերելոյն ասելով.

Ա՛ռ և զեօթներորդ աստիճան վարդապետութեան. որպէս զի կարողասցիս շնորհօք Հոգւոյն սրբոյ կատարել գործով զոր ինչ քարոզեսցես բերանով։ Որպէս զի այնու զօրացեալ՝ արդիւնաւորեսցի բան քարոզութեան քո, ըստ բանի մարգարէին, թէ բարձրացո՛ զօրութեամբ զբարբառ քո։ Եւ յամենայն ժամ առնելով և ուսուցանելով՝ մեծ կոչեսցիս յարքայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն։

Շարական Ակ.

Աւետաւոր Հայոց մեծաց դիմեալ։
Առաքելական զինու։ Գերագոյն պա։
Քարոզ, Սուրբ խաչ։ Էջմի։, Պահպան։

ԿԱՆՈՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ.

Ոչ պոռ-էալ լինի ինոյն պէպ-ոջ. Լ ասի Շարական ԱՁ.

Տէր որ զգթութիւնդ քո զառատ։
Որ ի ձեռն սոցա։ Որ սոքօք լուսա։
Երկնաքաղաքացին Յովհաննէս մեծն։
Ճշմարիտ մարգա։ Յանօրէն գինարբ։
Որ զծածկեալ խորհուրդ կենաց։
Որք ուսուցին։ Որք տաճարի նմանու։
Երեւի երբեմն աշակերտացն հրաշա։
Եւ զեր։ Հանդիպեալ։ Արաս։ Որ լը։
Ժողովեալ ընտրելոց մեռասանիցն։
Սուրբ Հոգին երեւ։ Որք արբին զհու։
Անսկիզբն Աստուած բանդ որ ի հօրէ։
Անեղանելիդ Աստ։ Զորեքկերպեան։
Երանելի աստուածասէր սուրբ դըշ։
Փոռ.—Եւ խոշ։ Ա.ՅԺՄ.—Եւ համբ։

Ալէ. ալէ։ Բղխեսցէ սիրտ իմ զբան բարի, եւ ասացից զգործս իմ թագաւորի։ Փոխ. Վասն այսորիկ էօծ զքեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան՝ առաւել քան զընկերս քո։

ԸՆԴԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱԿՍՈՅ։

Զի սուրբ Հոգին իմաստութեան փախիցէ ի նենգութենէ, եւ մերժեսցի ի խորհրդոց անմտաց, եւ յանդիմանեսցէ ի հասանել ի վերայ անիրաւութեանց։ Զի մարդասէր Հոգին իմաստութեան՝ ոչ արդարացուցանէ զհայհոյիչն ի շրբթանց իւրոց· զի երիկամանց նորա է վկայ Աստուած, եւ սրտի նորա ոստիկան ճշմարիտ, եւ լեզուի նորա ունկընդիր։ Զի Հոգի Տեառն ելից զտիեզերս, եւ որ ունի զամենայն՝ ունի զգիտութիւն բարբառոյ։

ԸՆԴԵՐՑՈՒԱԾ ԻՑՈՎՔՍՈՅ։

Իսկ իմաստութիւն ուստի՞ գտաւ, կամ զի՞նչ տեղի իցէ հանճարոյ։ Ոչ գիտէ մարդ զճանապարհս նորա, եւ ոչ գտաւ ի մէջ մարդկան։ Անդունդք ասացին թէ չէ առ իս, եւ ծով ասաց թէ չէ ընդ ինեւ։ Ոչ տացի գրաւական ընդ նորա, եւ ոչ կշռեսցի արծաթ ընդ գնոց նորա. եւ ոչ բարձցի ընդ ոսկւոյն Սովփերայ, ընդ եղնդանն պատուականի եւ ընդ շափիղայի։ Ոչ զուգեսցի ընդ նմա ոսկի եւ ապակի, եւ ի գինս նորա անօթք ոսկեղէնք։ Բարձրութիւնք եւ խորութիւնք ոչ յիշեսցին. եւ ձգեաց զիմաստութիւն քան զներքնագոյնս։ Ոչ հաւասարեսցէ նմա տպազիոնն Եթովպացւոց, ընդ ոսկւոյ սրբոյ ոչ բարձցի։ Իսկ իմաստութիւն ուստի՞ գտաւ, եւ զի՞նչ իցէ տեղի հանճարոյ։ Ղօղեալ է ի մարդկանէ, եւ ի թռչնոց երկնից ծածկեցաւ։ Կորուստ եւ մահ ասացին. լուաք զփառաւորութենէ նորա։ Եւ Տէր գիւրաւ ընծայեցոյց զճանապարհ նորա։ Քանզի ինքն գիտէ զտեղի նորա, եւ ինքն տեսանէ զամենայն առ ի ներքոյ երկնից։ Քանզի ինքն գիտէ զամենայն. զոր արար յերկրի՝ զկշիռ հողմոյ եւ չափ ջրոց զոր արար։ Ինքն եռեռ եւ համարեցաւ, եւ զճանապարհ նորա արձակմամբ բարբառոյ։ Յայնժամ եռեռ զնա՝ եւ պատմեաց զնմանէ։ Պատրաստեալ քննեաց, եւ ասէ ցմարդ. ահա աստուածպաշտութիւն է իմաստու-

թիւն, եւ մեկնել ի չարեաց է հանճար։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՂԻՆԵԼԻՆ ՄԱՐԳԱՐԷԷ։

Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ. Որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ հովուացդ Իսրայէլի, մարգարեաց եւ ասասցես ցհովիւսդ. այսպէս ասէ Տէր Տէր. ո՞ հովիւք Իսրայէլի. միթէ հովիւք զանձի՞նս արածեն. ոչ հովիւք զխաշինս արածեն։ Արդ աւասիկ զկաթնոդ ուտէք, եւ զասրդ ագանիք, զպարարսան զենուք, եւ զխաշինս իմ ոչ արածէք։ Զտկարացեալն ոչ զօրացուցէք, եւ զհիւանդացեալն ոչ բժշկեցէք, զչարչարեալն ոչ յանձանձեցէք, եւ զբեկեալն ոչ պատեցէք. զմոլորեալն ոչ դարձուցէք, եւ զկորուսեալն ոչ խնդրեցէք. զհաստահարուստն աշխատ արարէք։ Եւ ցրուեցան խաշինք իմ, քանզի ոչ գոյին նոցա հովիւք. եւ եղեն կերակուր գազանաց անապատի, եւ ցրուեցան, եւ մոլորեցան խաշինքն իմ ընդ ամենայն լերինս եւ ընդ ամենայն բլուրս բարձունս, եւ ընդ ամենայն երկիրս ցրուեցան խաշինքն իմ. եւ ոչ ոք էր որ խնդրէր, եւ ոչ այն որ դարձուցանէր։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Է ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ։

Զգոյշ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զԺողովուրդ Տեառնն, զոր ապրեցոյց արեամբ իւրով։ Քանզի գիտեմ ես, եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք ի ձեզ՝ որ ոչ խնայեսցեն հօտիդ, եւ ի ձէնջ յարիցեն արք որ խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց։ Վասն այսորիկ արթուն կացէք, եւ յիշեցէք՝ զի զերկեամ մի զցայգ եւ զցերեկ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր։ Եւ արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի շնորհացն նորա, որ կարօղն է շինել եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան։

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ Է ԿԱՆՈՆԻԿԵԱՅՑ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ։

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ զերիցակից եւ վկայ չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացըն յայտնելոյ հաղորդ։ Արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ։ Մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին։ Զի յերեւել Հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն։

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ Է ՏԻՄՈԹԷՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ։

Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին, մանաւանդ որ աշխատիցին բանիւ եւ վարդապետութեամբ։ Քանզի ասէ գիր. մի՛ կապեսցես զցռուկ եղին կալաւոյ. եւ արժանի է մշակն վարձուն իւրոյ։ Զերիցուէ չարախօսութիւն մի՛ ընդունիցիս, բայց եթէ երկուք եւ երիք վկայիւք. իսկ որ մեղանչեն՝ առաջի ամենեցուն յանդիմանեա՝ զի եւ այլքն երկիցեն։ Վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի

եւ ընտրելոց հրեշտակաց՝ զի զայդ պահեսցես առանց մտահաճութեան. մի՛ ինչ առնել աչառանօք։ Զեռս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ դնիցես՝ եւ մի՛ կցորդ լինիցիս մեղայ օտարաց. զանձն քո սուրբ պահեսջիր։

Ել. ալէ։ Որպէս իւղ զի իջանէ ի գլուխ և ի մօրուսն Ահարոնի. և ի մօրուացն իջանէ ի գըրպանս զգեստու նորա։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ էր երեկոյ ի միաշաբաթոջ աւուրն՝ եւ դրօքն փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին Հրէից՝ եկն Յիսուս եւ եկաց ի միջի նոցա՝ եւ ասէ ցնոսա. ողջոյն ընդ ձեզ։ Իբրեւ զայս ասաց՝ ետոյց նոցա զձեռս եւ զկողն իւր. եւ խնդացին աշակերտքն իբրեւ տեսին զՏէր։ Ասէ ցնոսա դարձեալ. ողջոյն ընդ ձեզ. որպէս առաքեաց զիս Հայր իմ՝ եւ ես առաքեմ զձեզ։ Եւ զայս իբրեւ ասաց՝ փչեաց ի նոսա եւ ասէ. առէք Հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա. եւ եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։

Ապա Սարկաւագն փարողէ.

Եւ եւս խաղաղու։ Օրհնեա՜ Տէր։

Ե՛ւ դեռ Վարդապետն պալով ղօրհնո՛ւն՝ ասո՛ւս զգա՛ւազանն և պայ է յեռն հրա՛էրելոյն ասելով.

Ա՛ռ և զուլթերորդ աստիճան վարդապետութեան. քանզի առեր զօրութիւն ի Քրիստոսէ լնել իբրև զվէմ անշարժելի ի դրանց դժոխոց՝ համարձակ քարոզել և մի՛ երկնչել ի մահուանէ. մի՛ որսալ փառս ի մարդկանէ. մի՛ առնուլ կաշառս. մի՛ երեսս, մի՛ աչառութիւնս և մի՛ ծուլութիւն. յուսադրեալ ի մարգարէին հրամանէ՝ բարձրացուցէ՛ք և մի՛ երկնչիք։ Եւ վասն այսորիկ խոստումն աստուածային հրամանացն կատարեսցի ի վերայ քո ըստ անշուշտ բանին որ ասէ՝ թէ զոր ձեզ ասեմ՝ ամենեցուն ասեմ՝ գրելով զանուն քո ի դպրութիւն կենաց ընդ երջանիկ դասս առաքելոցն՝ ամէն։

Շարական ԳՁ.

Որ շնորհօք սուրբ Հոգւոյն բարձեր։
Այսօր եւ մանկունք։ Զառաստապարգ։
Քարոզ Սուրբ խաչ։ Աղօթք, Պահպան։

ԿԱՆՈՆ ԻՆՆԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ.

Ոչ պա՜ռ լինի էնոյն պէ՛ղ՝ ոչ. և ասէ Շարական ԳՁ.

Որ արարեր զօրութեամբ զիմանալ։
Որ տիրա։ Որ շինեցեր։ Անտանելոյն։
Որ յաթոռ փառաց նստիս բանդ։
Որ կանգնեցեր։ Եւ զօրութեամբ։
Ազբիւր լուսոյ եւ ճառագայթ ան։
Որ մարմնով։ Որ քաւիչ զայս։
Որ համանման մեծին Եղիայի եւ։
Որ յերկնային։ Որ աստուածա։

Եկայք լուսաւորեալք մանկունք։
Գոհութեամբ փառատրեսցուք։
Որ համագոյդ ես Հօր եւ Որդւոյ։
Որ արարչակից։ Որ փառակից։
Սուրբ զԱստուածածինն օրհնու։
Աւետաւոր հրեշ։ Ասէ ուրախ։
Փայտ կենաց որ փոխանակ մահա։
Փառ.—Թեւ բա։ Ընթերց.—Թեւ աղա։

Ալէ. ալէ։ Ցանկալի է նա քան զոսկի եւ քան զականս պատուականս բազումս. քաղցր է նա քան զմեղու խորիսխ։ Փոխ. Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՕՓՓՈՒԹԻՆ ՄՈՒՐՔՈՒԷԷ։

Յաւուր յայնմիկ եդից զՀազարապետսն Յուդայ իբրեւ զխանձողս հրոյ ի մէջ փայտից, եւ իբրեւ զդամբարս հրոյ ի մէջ եղեգան, եւ կերիցեն յաջմէ եւ յահեկէ զամենայն ժողովուրդս շուրջանակի. եւ դարձեալ բնակեսցէ Երուսաղէմ առանձինն յԵրուսաղէմ։ Եւ ապրեցուսցէ Տէր զյարկսն Յուդայ որպէս ի սկզբանէն. զի մի մեծաբանեսցին պարծանք տանն Դաւթի, եւ հպարտութիւն բնակչաց Երուսաղեմի ի վերայ տանն Յուդայ։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ պաշտպանեսցէ Տէր ամենայն բնակչաց Երուսաղեմի. եւ եղիցի որ տկարն ի նոսա յաւուր յայնմիկ՝ իբրեւ զԴաւիթ, եւ տունն Դաւթի՝ իբրեւ զտունն Աստուծոյ, իբրեւ զՀրեշտակ Տեառն առաջի նոցա։ Եւ եղիցի յաւուր յայնմիկ խընդրեցից բառնալ զամենայն ազգս եկեալս ի վերայ Երուսաղեմի. եւ հեղից ի վերայ տանն Դաւթի եւ ի վերայ բնակչաց Երուսաղեմի Հոգի շնորհաց եւ գթութեան։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅՈՒՍԻԷՍ ՄՈՒՐՔՈՒԷԷ։

Այսպէս ասէ Տէր Աստուած ցօճեալն իմ Կիւրոս, զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա՝ հնազանդեցուցանել առաջի նորա զազգս, եւ զզօրութիւն թագաւորաց խորտակեցից, եւ բացից առաջի նորա զդրունս, եւ քաղաքք մի փակեսցին։ Ես երթայց առաջի քո, զլերինս հարթեցից, զդրունս պղնձիս խորտակեցից եւ զնիգս երկաթիս փշրեցից։ Եւ տայց քեզ զգանձս խաւարինս, եւ զաւանդս աներեւոյթս բացից քեզ. զի ծանիցես թէ ես եմ Տէր Աստուած, որ կոչեցի զանուն քո՝ Աստուած Իսրայէլի։ Վասն Յակոբայ ծառայի իմոյ, եւ Իսրայէլի ընտրելոյ իմոյ, ես կոչեցից քեզ զանուն քո՝ եւ ընկալայց զքեզ։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ։

Եւ անմիաբանք լիեալ ի միմեանս՝ արձակէին, յասելն Պօղոսի բան մի, թէ բարւոք խօսեցաւ Հոգին սուրբ ի ձեռն Եսայեայ մարգարէի առ Հարսն մեր, եւ ասէ. Ե՛րթ առ ժողովուրդն այն եւ ասասցես. լսելով լուիջիք՝ եւ մի իմասջիք, եւ տեսանելով տեսջիք՝ եւ մի տեսջիք։ Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ, եւ ականջք իւրեանց ծանր լուան, եւ զաչս իւրեանց կափուցին, զի մի երբէք տեսցեն աչօք, եւ ականջք լուիցեն, եւ սրտիւքն իմասցին, եւ դարձցին եւ բժշկեցից զնոսա։ Եւ արդ յայտնի լիցի ձեզ, զի

հեթանոսաց առաքեցաւ փրկութիւնս Աստուծոյ. նոքին եւ լուիցեն։ Եւ իբրեւ զայս ասաց՝ արտաքս գնացին ի նմանէ Հրեայքն, որ ունէին ի մէջ իւրեանց զբազում խնդիրս։ Եւ եղեւ զերկեամ մի բովանդակ իւրով վարձու. եւ ընդունէր զամենեսեան որ մտանէին առ նա. քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ, եւ ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի անխափան՝ ամենայն համարձակութեամբ։

Պէտքոսի առաքելոյն է Պօղոս-ղէկէայց առաջին ընդդէմ է ընդդիմադրողաց։

Եւ ո՞ւր լցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն նախանձաւորք լինիցիք։ Այլ թէ եւ չարչարիցիք եւս վասն արդարութեան, երանելի էք. բայց յերկիւղէ նոցա մի երկնչիցիք, եւ մի խռովեսջիք. այլ զՏէր զնոյն զՔրիստոս սուրբ առնիջիք ի սիրտս ձեր։ Պատրաստաք լցէք տալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զբանն՝ որ է վասն յուսոյն ձերոյ. այլ հեզութեամբ եւ երկիւղիւ ունիցիք բարս քաղցունս. զի որով չարախօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին որք բամբասեն զձեր բարւոք գնացս ի Քրիստոս։ Զի լաւ է բարեգործաց՝ եթէ կամիցին, ըստ Աստուծոյ կամացն չարչարել՝ քան չարագործացն։ Զի եւ Քրիստոս միանգամ վասն մեղաց ի վերայ մեր մեռաւ, արդարն ի վերայ անարդարոց, զի զմեզ մերձեցուսցէ առ Աստուած. զի թէպէտ եւ մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով։ Որով եւ ոգւոցն որ էին ի բանտին՝ երթեալ քարոզեաց, երբեմն ապստամբելոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի յորս տապանն կազմէր. յորս նուազունք՝ այս ինքն ոգիք իբրեւ ութ ապրեցան ի ջրոյն։

Պօղոսի առաքելոյն է Տիմոթէոսի երիտասարդ ընդդէմ է ընդդիմադրողաց։

Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ։ Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան, այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան։ Մի այսուհետեւ ամօթ համարիցիս զվկայութիւնն Տեառն մերոյ, եւ մի զիս զկապեալս նորա. այլ կցորդ լեր չարչարանաց աւետարանին՝ ըստ զօրութեանն Աստուծոյ, որ փրկեացն զմեզ, եւ կոչեաց ի կոչումն սուրբ. ոչ ըստ գործոց մերոց, այլ ըստ իւրում յառաջադրութեանն, եւ շնորհացն որ տուաւ մեզ ի Քրիստոս Յիսուս՝ յառաջ քան զժամանակսն յաւիտենից։ Բայց յայտնեցաւ այժմիկ՝ յերեւել Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ, եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ի ձեռն Աւետարանին, որոյ եդայ ես քարոզ եւ առաքեալ եւ վարդապետ հեթանոսաց։ Վասն որոյ եւ զայս չարչարանս կրեմ, այլ ոչ լինչ ամօթ համարիմ. քանզի գիտեմ յո՞ հաւատացեալն եմ, եւ հաստատեալ եմ՝ թէ կարօղ է զաւանդն իմ պահել յօրն յայն։ Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն զորս յինէն լուար, հաւատովք եւ սիրով ի Քրիստոս Յիսուս. զբարւոք աւանդն պահեսջիր ի ձեռն Հոգւոյն սրբոյ ի մեզ բնակելոյ։

Ակէ ալէ։ Ամբարձան գնաք Տէր, և ամբարձին գնաք զձայնս իւրեանց. և յարիցեն գնաք ի զն։ցս իւրեանց։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի՝ ի՞նչ յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ եւ կոխան լինել ի մարդկանէ։ Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին կայցէ։ Եւ ոչ լուցանեն ճրագ՝ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի, եւ լոյս տայ ամենեցուն՝ որ ի տանն լցեն. այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։

Սարկաւագն խորոյզ.

Եւ եւս խաղաղու։ Օրհնեա՛ Տէր։

Ն՛ռեղ Վարդապետն պալով զերկնորինն՝ առնու զգաւազանն և պայ ի յեռն հրա-էջելոյն ասելով.

Ա՛ռ և զիններորդ աստիճան վարդապետութեան. քանզի առեր հրաման ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ երթալ և քարոզել ընդ ամենայն ոլորտս տիեզերաց, և աւետարանել զառաջին և զվերջին գալուստն նորա։ Ըստ բանի մարգարէին՝ թէ ասա՛ցքաղաքսդ Յուդայ, ահաւասիկ Տէր Տէր գայ զօրութեամբ, և բազուկն տէրութեամբ իւրով։ Վասն որոյ և մեք ամենեքեան հայցեմք յամենաբարի և քաջ Հովուապետէն մերմէ, զի տացէ քեզ ընդարձակութիւն սրտի և ուժգնութիւն յամենայնի առ ի պահպանութիւն հօտի իւրոյ ի քեզ յանձնեցելոյ, ըստ հաճոյից Տեառն կառավարել և ի չափ հասակի կատարելութեանն Քրիստոսի հասուցանել, և առաջի նորին գտանիլ քեզ մշակ առանց ամօթոյ և ծառայ ազնուական, յորմէ և զտասն քաղաքին ունել զիշխանութիւն, և վարձատրեսցիս ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. ամէն։

Հաբեկան Դշ.

Որք արժանաւորեցայք կոչիլ։
Որք անհրաժեշտ։
Որք անպարտելի մնացիք։
Քարոզ, Սուրբ խաչ։ Աղօթ, Պահպան։

ԿԱՆՈՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ

ԾԱՑՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ.

Ն՛ռ գան ի հիւսիսոյ կողմանէն ի գաւառն Լեռնանէն զհաստաբակոյ կարգ ժամուն և ասեն՝ Լցաք առաւօտու, մինչև ի Նորաստեղծեալն։

Ապա նստի Ն՛ռեղ Վարդապետն յաթոռ աստաջի բէմին, և սկսանի գաւառնէրորդ աստիճան Ծայրագոյն Վարդապետութեան։

Ն՛ռ ասէն շարական Դկ.

Որ էն յեռութեան որդի միշտ յէէն։
Բանն անբսկիզբն։ Իսկապէս բանն։

Այսօր երկնայնոցն վայր իջեալ տօն։
Այսօր պարակից։ Այսօր քահանայք։
Արմատ ճշմարիտ աստուածային։
Ընտրեալ յԱստուծոյ։ Պատկ վայելչու։
Աստուածային հաւատոյ հարցն սրբ։
Բանաւոր հօտին։ Դաւիթայդ ի վկայս։
Որ յարմատոց հարցն սրբոց մեզ։
Որ զխաւարն։ Որ զհանդերձեալ։
Ի համբառնալ բանին յերկինս եւ։
Համահաւաքեալ։ Յանկարծահաս։
Այսօր զուարճացան հրեշտակք ի։
Այսօր ցնծան։ Այսօր եւ մանկունք։
Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց։
Փառք.—Տեսեալ։ Այժմ.—Եկայք շի։

Ալէ. ալէ։ Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ. եւ սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն։ Փառք. Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն. օգնական ի վերայ նեղութեանց, որք գտին զմեզ յոյժ։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԱՑՈՒՆՔԱՆՑ։

Եւ սրբեաց զՅեսսէ եւ զորդիս նորա, եւ կոչեաց զնոսա ի զոհն։ Եւ եղեւ ի մտանելն նոցա՝ եառեալ զԵղիաբ եւ ասէ. այլ եւ առաջի իսկ Տեառն օծեալ իւր։ Եւ ասէ Տէր ցՍամուէլ. մի հայիր ընդ տեսիլ դորա, եւ մի ի մեծութիւն հասակի դորա. զի անարգեցի զդա. զի ոչ եթէ որպէս տեսանիցէ մարդ՝ տեսանէ Աստուած.՝ զի մարդ հայի յերեսս, եւ Աստուած հայի ի սիրտս։ Եւ կոչեաց Յեսսէ զԱմինադաբ, եւ անց առաջի Սամուէլի, եւ ասէ. եւ ոչ զդա ընտրեաց Տէր։ Եւ անցոյց Յեսսէ զՍամմա. եւ ասէ. եւ ոչ զդա ընտրեաց Տէր։ Եւ անցոյց Յեսսէ զեօթանեսին զորդիսն իւր առաջի Սամուէլի, եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ. ոչ ընտրեաց ի դոցանէ Տէր։ Եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ. ա՞ղջամ են մանկտիդ։ Եւ ասէ. կայ միւս եւս փոքրիկ եւ արածէ խաշն. եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ. առաքեա՛ եւ ա՛ծ զնա. զի ոչ բազմեսցուք մինչեւ ի գալ նորա այսր։ Եւ առաքեաց եւ ած զնա. եւ նա էր կարմիր եւ աչօք գեղեցիկ եւ բարւոք տեսլեամբ Տեառն. եւ ասէ Տէր ցՍամուէլ. արի՛ օ՛ծ զԴաւիթ, զի դա է բարի։ Եւ էառ Սամուէլ զեղջիւրն իւղոյ, եւ օծ զնա ի մէջ եղբարց իւրոց։ Եւ խաղաց Հոգի Տեառն ի վերայ Դաւթի յօրէ յայնմանէ եւ առ յապա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹԱՑՈՒՆՔԱՆՑ։

Եւ էջ Սադովկ քահանայ եւ Նաթան մարգարէ եւ Բանեա որդի Յոսիդայեայ, եւ քերեթին եւ ոփելեթին. եւ հեծուցին զՍողոմոն ի ջորւոջն արքայի Դաւթի, եւ տարան զնա ի Գեհոն։ Եւ էառ Սադովկ զեղջիւրն իւղոյ ի խորանէն եւ օծ զՍողոմոն, եւ եհար զփողն եղջերեայ, եւ ասէ ամենայն ժողովուրդն. կեցցէ՛ արքայ Սողոմոն։ Եւ ել ամենայն ժողովուրդն զհետ նորա, եւ պար առեալ պարուք ուրախ լինէին մեծաւ ուրախութեամբ. եւ հնչեաց երկիրն ի բարբառոյ նոցա։ Եւ նստաւ Սողոմոն յաթոռն արքայութեան. եւ երկիր եպագ արքայ յանկողնէ իւրմէ, եւ այսպէս ասաց արքայ. օրհնեալ է Տէր Աստուած Իսրայէլի՝ որ ետ ինձ այսօր ի զաւակէ իմմէ նստել յաթոռ իմ, եւ աչք իմ տեսանեն։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՐԳՈՅ ԵՐԳՈՅՆ ՍՈՂՈՄՈՆԻ։

Եկ, եղբօրորդի իմ, ելցուք յագարակս, ագցուք ի շէնս եւ ի պարտէզս, կանխեսցուք յայգիս։ Տեսցուք թէ ծաղկեաղ լցէ որթ, թէ ծաղկեալ լցէ նոճ, թէ ծաղկեալ լցէ նռնենի, անդ տայց զսրտինս իմ քեզ։ Մանրագորք ետուն զՀոտ իւրեանց, առ դուրս մեր ամենայն մրգաբերք։ Զնոր առ Հրնով՝ զոր ետ ինձ մայր իմ, պահեցի քեզ, եղբօրորդի իմ։ Ո՞վ տայ քեզ, եղբօրորդի իմ, դիել զսրտինս մօր իմոյ։ Գտեալ զքեզ արտաքոյ՝ համբուրեցից զքեզ, եւ ոչ անգոսնեսցես զիս։ Առեալ ածից զքեզ ի տուն մօր իմոյ եւ ի սենեակ յղացելոյն զիս։ արբուցից քեզ ի գինւոյ իւղագործաց, յօշարակէ նռնենեաց իմոց։ Ձախ նորա ընդ գլխով իմով, եւ աջ նորա պատեսցի զինեւ։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՐՍԱՅԷԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Սխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ, ասէ Աստուած։ քահանայքդ խօսեցարուք ի սիրտ Երուսաղեմի՝ եւ մխիթարեցէք զդա, զի լի եղեւ տառապանօք։ Թողեալ լիցին դմա մեղք իւր, զի ընկալաւ ի ձեռանէ Տեառըն կրկին զՀատուցումն մեղաց իւրոց։ Ձայն բարբառոյ յանապատի։ պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, եւ ուղիղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ։ Ամենայն ձորք լցցին, եւ ամենայն լերինք եւ բլուրք խոնարհեսցին։ եւ եղիցին ամենայն դժուարինքն ի դիւրինս, եւ առապարքն ի դաշտս։ Եւ երեւեսցին փառքն Տեառըն։ եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ։ զի Տէր խօսեցաւ։ Ձայն որ ասէ։ գոչեա։ եւ ասեմ, զի՞նչ գոչեցից։ գոգջիր, ամենայն մարմին խոտ է, եւ ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ։ Ցամաքեցաւ խոտն, եւ թօթափեցաւ ծաղիկ նորա, զի ոգի Տեառն շնչեաց ինա։ արդարեւ խոտ է ժողովուրդս այս։ ցամաքեցաւ խոտն, եւ թօթափեցաւ ծաղիկն։ եւ բան Տեառն մնայ յաւիտեան։ Ելի ի վերայ լերինդ բարձու՝ աւետարանիչդ Սիոնի։ բարձրացո զօրութեամբ զբարբառ քո՝ աւետարանիչդ Երուսաղեմի։ բարձրացուցէք, մի երկնչիք։ ասա ցքաղաքսդ Յուդայ։ Ահաւասիկ Աստուած ձեր, ահաւասիկ Տէր Տէր գայ զօրութեամբ, եւ բազուկն տէրութեամբ իւրով։

ՅԱԿՈՎԲՈՍ ԱՌԱՔԵԼՈՅՆ Ի ԿՊՈՍԼԻՍԵՅՍ ԸՂԼՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՍ։

Խոստովան եղերուք միմեանց զմեղս ձեր, եւ աղօթս արարէք ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեսջիք։ քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն։ Եղիա մարդ էր իբրեւ զմեզ չարչարելի։ եւ յաղօթս եկաց, եւ ոչ տեղեաց յերկիր զերիս ամս եւ զվեց ամիս։ եւ դարձեալ եկաց յաղօթս, եւ ետուն երկինք զանձրեւ եւ բուսոյց երկիր զպտուղ իւր։ Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեսցի ի ճանապարհէ ճշմարտութեան եւ դարձուսցէ ոք զնա, գիտասցէ՝ զի որ դարձուսցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ի մահուանէ, եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին ընդդէմ է ընթերցուածս։

Գոհանամ զԱստուծոյ, վասն ամենեցուն ձեր՝ առաւել լեզուաւ խօսիմ. այլ ի մէջ եկեղեցւոյն կամիմ բանս հինգ՝ մտօք խօսել, զի եւ զայլս խրատիցեմ՝ քան զբազում բանս լեզուաւ։ Եւ արդ զի՞նչ իցէ, եղբարք. յորժամ ի մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ՝ եթէ սաղմոս ունիցի, եթէ վարդապետութիւն ունիցի, եթէ յայտնութիւն ունիցի, եթէ լեզուս ունիցի, եթէ թարգմանութիւն ունիցի, ամենայն ի շինած լիցի։

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ ընդդէմ է ընթերցուածս։

Զայս վկայութիւն գնեմ առաջի Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս ի յայտնութեան իւրում եւ յարքայութեան։ Եւ դու քարոզեա զբանն, հա՛ս ի վերայ ժամու եւ տարաժամու, յանդիմանեա՛, սաստեա՛, մխիթարեա՛, ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապետութեամբ։ Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վարդապետութեանն ոչ անսայցեն, այլ ըստ իւրաքանչիւրոց ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս ըստ մարմնջելոյ լսելեաց իւրեանց. եւ ի ճըշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս եւ յառասպելս կործանեսցին։ Այլ դու զուարթ կաց, յամենայնի ճգնեա՛ց, զգործս աւետարանչի գործեա՛, զպաշտօնդ քո կատարեալ կա՛ց։ Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ. զբարւոք պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի։ Այսուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր. ոչ միայն ինձ, այլ եւ ամենեցուն որ սիրեցին զյայտնութիւն նորա։

Ալէ՛լուիա։ Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ եկեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն եւ ասէր. զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ Եւ նոքա ասեն. ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, եւ կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէից։ Ասէ ցնոսա Յիսուս. իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի ետ Սիմոն Պետրոս եւ ասէ. դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. երանի՛ քեզ Սիմո՛ն՝ որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է։ Եւ ես քեզ ասեմ՝ զի դու ես վէմ՝ եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ՝ եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն։ Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս՝ եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։

Եպս Սարկաւագն տարողէ.

Եւ եւս խաղաղութիւն Օրհնեա՜ Տէր։

Եւ՝ Դեռ Վարդապետն պաղով ղբրհնու-
թիւն՝ առնու գգաւազանն և պայ է յեռն
հրա-էրելոյն սուելով.

Զոր և զայս աստիճան կա-
տարեալ թուոյ տասներորդին,
որ ընդ զթիւ չորեքտասանե-
րորդին։ Զանգի առեր զշնորհս
Հոգւոյն սրբոյ՝ կատարել զհրն-
դեսին մեծաւոր բանն ի մէջ Եւ-
կեղեցւոյ՝ զոր առաքեալն կար-
գաւորէ, այս ինքն՝ սաղմոսել,
վարդապետել, և յայտնել զբա-
նըս աստուածային, ի լեզուս
խօսել, և թարգմանութիւնս
առնել առ ի շինութիւն եղ-
բարց և ի կատարումն Եկեղեց-
ւոյն Աստուծոյ։ Եւ ինքն Տէր
Յիսուս Աստուած՝ որ կարօղն
է զօրացուցանել զքեզ և հաս-
տատել ի դոյն, պահեսցէ քաղց-
րութեամբ, և ամրացուսցէ օրհ-
նութեամբ. և ծաղկազարդեսցէ
շնորհափայլութեամբ զմիտս և
զզգայարանս քո, զսիրտս և զխոր-
հուրդս քո, զբանս և զգործս
քո, զմուտս և զելս քո ընդ
ամրածածուկ աջովն։ Եւ հզօր
ձեռամբ և բարձր բազկաւ հեղ-
լով ի վերայ քո զշնորհս ճա-
ռագայթից Հոգւոյն Եօթնազան
պայծառութեամբ, որպէս ի դա-
սըս առաքելոցն հրաբորբոք ծա-
ւալմամբ, հրազինել զքեզ ըստ
հրեղինացն շնորհաբաշխութեան,
զմայլել, հրճուիլ, զուարճանալ,
ցնծալ խայտալից բերկրանօք
յանսպառ ուրախութիւնս, ըմ-
պել զուղիս փափկութեանցն
Աստուծոյ՝ օրհնութեան շնոր-
հիւս՝ անուամբ Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ. որում փառք
յաւիտեանս. ամէն։

Շարական Դկ.

Մարգարէից գերազոյն։

Յորովայնէ յորս։ Կատարումն օրի։

Սարկաւագն տարողէ. Օրթի, Եւ Դեռ
Վարդապետն ինքն կարդայ զաւետարանն։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիս-
տոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Ի յարութեան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի։

Իսկ մետասան աշակերտքն գնացին
ի Գալիլեա ի լեառնն՝ ուր ժամադիր
եղեւ նոցա Յիսուս։ Իբրեւ տեսին զնա՝
երկիրպագին նմա, եւ ոմանք յերկուա-
ցան։ Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ
ընդ նոսա եւ ասէ. տուաւ ինձ ամե-
նայն իշխանութիւն յերկինս եւ յերկ-
րի. որպէս առաքեաց զիս Հայր, եւ
ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսու-
հետեւ՝ աշակերտեցէք զամենայն հե-
թանոսս, մկրտեցէք զնոսա յանուն
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ։ Ու-
սուցէք նոցա պահել զամենայն՝ որ
ինչ պատուիրեցի ձեզ։ Եւ ահաւասիկ
ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝
մինչեւ ի կատարած աշխարհի։

Եւ կարդայ զեր Աստուածաշունչն զաղօթս և զօրհնութիւն է վերայ նոցին, զոր սուրբ է Դրիգորի Տաղնապոյ՝

Հայր սուրբ, Աստուած ճշմարիտ, որ հանգուցեալ ես յաթոռ բարձրութեան սրբարանից, և լցուցանես միջնորդութեամբ նոցին զտէրութիւնս և զպետութիւնս, և նոքօք զմարդարէսն, որպէս ասաց մեծ պատգամաւորն Ստեփաննոս՝ որք ընկալայք զօրէնս ի հրամանս հրեշտակաց՝ և առաքեցեր զմարգարէսն ի կարգէ վարդապետաց՝ քարոզել ապստամբ ժողովրդեանն զբանս օրինաց՝ որք եկեալ սերմանեցին յազգս մարդկան զբան փրկութեան, և զգալուստ Որդւոյն Աստուծոյ խոնարհութեամբ յազգս մարդկան՝ որք լուեալ սպասէին և ակն ունէին գալստեան կենարարին՝ որպէս ասէր ոմն ի դասէ տեսանողացն՝ յիշեա՛ զբան ծառայից քոց մարգարէից յոր յուսացուցեր զմեզ։ Եւ ինքն Տէրն ասէր՝ պարտ է մեզ երթալ յԵրուսաղէմ՝ զի լցցին գրեալքն ի մարգարէիցն որ վասն իմ։ Օրհնեա զվարդապետս զայս և լի՛ց Հոգւովդ սրբով՝ օծանելով զմասունս հոգւոյ սորա Հոգւոյդ պարգևօք՝ որպէս օծեր զմարգարէսն շնորհօք Հոգւոյդ՝ և ոչ իւղովն նիւթական՝ որպէս զթագաւորսն և զքահանայսն՝ զի քարոզեսցէ զառաջին և զերկրորդ գալուստս սիրեցելոյդ ի քէն Որդւոյդ Միածնի՝ և զդատաստանն՝ և զհատուցումն ըստ իւրաքանչիւր գործոց։

Որդի՛ Աստուծոյ՝ Բան Հօր և նկարագիր էութեան նորա՝ Աստուած ճշմարիտ՝ որ հանգուցեալդ ես ի քերովբէս՝ ի զօրութիւնս և ի պետս հրեշտակաց։ Որ ընտրեցեր զդասս առաքելոցն և օծեր զնոսա Հոգւովդ քո սրբով՝ և լցուցեր եօթամբ պարգևօք՝ և արարեր քարոզ տիեզերաց՝ որսալով զազգս մարդկան ի ծովու մեղաց և անհաւատութեան՝ և ետուր զօրութիւն բժշկել զցաւս և զհիւանդութիւնս ի մարդկանէ՝ ածել և ժողովել նոքօք զարտաքսեալսն ի գաւթէ քումմէ՝ ի հաղորդութիւն Հօտի քո՝ և ի ժառանգութիւն Ընթայութեանդ երկնից։ Օրհնեա՛ զվարդապետս զայս քոյին օրհնութեամբդ՝ որպէս յետ յարութեանն եդեր զձեռն քո ի վերայ առաքելոցն՝ և արարեր զնոսա վարդապետս ասելով՝ Ահա ետու ձեզ իշխանութիւն՝ գնացէ՛ք աշակերտեցէ՛ք զամենայն

հեթանոսս։ և ապա քահանայապետ և քահանայ՝ թէ մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ և կատարեալ գործեցեր դարձեալ վարդապետութեամբն՝ թէ Ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ, սկիզբն և կատարումն լինել քահանայագործական շնորհաց զաշակերտող և զուսուցիչ վարդապետս։ և լցո՛ օծմամբ Հոգւոյդ Ճշմարտի՝ որպէս զդասս ընտրելոց առաքելոցն, և առաքեա՛ քարոզ յամենայն ազգս՝ որսալով զմարդիկ ի ծովու մեղաց, և ի խաւարէ տգիտութեան, լուսաւորել գիտութեամբ և բարի գործով և պատուիրանացն ճառագայթիւք։ Եւ եղիցի սա զօրութեամբ քո ի կանգնումն գբլորելոց և ի գիւտ մոլորելոց, ի դարձումն մեղուցելոց և յուրախութիւն տրտմեցելոց, մխիթարիչ կենդանեաց և յիշատակ ննջեցելոց, բացող բանալի արքայութեանն երկնից, և առաջնորդ կենաց առ Հովիւն քաջ՝ ասելով, Հաւասիկ ես և մանկունք իմ՝ զոր ետուր ցիս։

Հոգիդ սուրբ՝ Ճշմարիտ, որ հրեղէն լեզուաւ հանգեալ յառաքեալսն, և առ բանն ընտրութեան եղեր զդոյլ կենդանարար բաժակին ի ձեռս նոցա, զի արբուսցեն զուրախարար բաժակն արժանաւորաց։ Օրհնեա՛ զվարդապետս զայս, և պարգևեա՛ սմա բերան հրեղէն և առաքելական, հեղլով զշնորհս քո ի սա եօթնեկի պարգևօք։ և շարժեա՛ զլեզու սորա հրաշեկական ազդու զօրութեամբ՝ լինել դպիր երագագիր՝ մելանաւրդ աստուածերանդ ի սիրտս և յոգիս սրբութեամբ դաւանողացն զքեզ Աստուած, լինելով սմա տաճար Աստուածութեանդ։ Բղխեցո՛ ի բերանոյ սորա յորդառատ իբրև զականակիտ աղբիւր ի յարբուցումն անդաստանաց սուրբ Եկեղեցւոյ, զի ճարակ դոցէ հօտն բանաւոր։ Եւ եղիցի սա ջահ եօթնաստեղեան անշիջանելի՝ փարատիչ եօթնից մթութեանց մոլութեանց ի Հայաստանեայցս Եկեղեցւոյ։ և արա՛ զսա հաղարապետ աստուածային խորհրդոց հոգեշունչ մատենից՝ ի լոյս և ի յայտ ածել յօժարամիտ խնդրողաց, ոչ մնալով խաւար ինչ իմաստից ի միտս սորա ծագելոյ, լինելով սորա անուշահոտութեամբ Հոգւոյդ աղ համեմիչ և լոյս լուսաւորիչ անդամոցս երջանիկ գլխոյն՝ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։ Եւ

եղեցի շնորհաք քո իշխող կանոնաց Եկեղեցւոյ՝ ի դնել և ի բառնալ՝ ըստ պիտոյից ժամանակի և տեղւոյ և ըստ դիմաց. կապել և արձակել յերկինս և յերկրի, ժողովել և հաւաքել զսերմանեալս և զհնձեալս ի նախնեացն սրբոց ի ժառանգութիւն Երբայութեանդ, և ի դասակցութիւն հրեշտակաց՝ Յիսուսիւ Քրիստոսիւ Տերամբ մերով. ընդ որում Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Երրորդութիւն սուրբ և փառաւորեալ յամենայն բանականաց՝ յերկնաւորաց և յերկրաւորաց, ի սրովբէական դասուց և ի ստորին երկրածնացս, որ ամենայնի ես լցուցիչ։ Տո՛ւր սմա քոյին ամենառատ կամաքդ զբարենուէր կամս Երէլի արդարոյ, և զբարեյոյս երկայնմտութիւնն Ենովսայ, և զպարկեշտաբար զբնպումն զգայարանաց երանելւոյն Ենովքայ. և պարգևեա՛ սմա զատեցումն խառնակութեան ըստ նահապետին Նոյի, և զհրաժարումն ի բազմազբաղ կենցաղոյս ըստ նախնւոյն Մելքիսեդեկի։ Շնորհեա՛ սմա զբարոյական առաքինութիւն և զանվեհեր հաւատ հօրն հաւատոց Երբահամու, և զբանաւոր պտուղս աղօթից մատուցումն՝ հանդոյն Իսահակայ, զտեսողութիւնն Աստուծոյ՝ Իսրայելի, և զողջախոհութիւնն Յովսեփայ։ Եւ պարգևեա՛ սմա զժուժկալութիւնն Յոբայ, և զկարողաբար իշխելն ի վերայ տերանց՝ ծառային Աստուծոյ՝ հեզոյն Մովսիսի, և զխոհական և զհանճարեղ սաղմոսերգութիւնն Դաւթի, զիմաստութիւնն Սողոմոնի, և զվրէժխնդրութիւնն Եղիայի։ Տո՛ւր սմա զմատենանորոգ հոգին Եզրի, և զհամարձակախօսութիւնն Եսայեայ, և զբազմաժուժկալ քարոզութիւնն մեծին Պօղոսի և այլոց վարդապետաց քոց սրբոց։ Պարգևեա՛ սմա՝ Տէր՝ զհոգի հանճարոյ և խորհրդոյ, զհոգի հեզութեան և զօրութեան, զհոգի իմաստութեան և գիտութեան, և զհոգի երկիւղի աստուածպաշտութեան։ Շնորհեա՛ Տէր Աստուած՝ սմա զբազմառատ շնորհս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս և զայլն ամենայն՝ զպարգևեալս ի Հոգւոյն յազգս մարդկան։ Երա՛՝ Տէր Աստուած՝ զբանս սորա արդիւնաւոր և

Պաշտօն Ծայրագոյն Վարդապետաց է՝ ունելով զանազան վարդապետութեան և զգեստութեան հին և նոր Աստուածային Պատկերանաց, և զգաւառութեան խոստովանութեան ուղղափառ հաւատոյ է սրբի Երրորդութեան և է մարդեղութեան Արքայորդի Աստուծոյ ձերոյ՝ առնել զքեմբասոյութեան և ծագէ է ծագ անխափան փարոյել։ Եւ պատիւ սոյա ձեռագրոյն է ման զԱրքեպիսկոպոսն՝ որ զանազի զծայրագոյն վարդապետութեան գաւառան։

Պարտ է՝ զի երկրին երբեմն զվերմ անշարժելի է դրանց դժոխոց, և մի՛ ընդունի ինչ է հաւատս՝ է կարգս և է կրօնս ի-բեանց ունկնդիր. այլ և լինել հեղ և խոնարհ, և անյանձիր ասասցանօղ, և պալ զանձն օրինակ ուղնայն աստուածնութեանց. զի զոր փարոքեսցեն՝ զնոյն պարտին ընդունել դեպ, զոր դէր-նական բանին, Երբ զայս գիտէր, ասէ, երանելի է՝ եթէ արանցէ զայս։ Եւ դարձեալ ասէ. Որ արասցէ և ասասցէ՝ նա ձեզ կոչեսցի յարքայութեան երկնից։ Այս ընդ՝ մի՛ գոյցէ յամօր արասցեն գոյշ ի-բեանց զգրնութեան, զի մի՛ է խօսելն՝ ասասցեն ժողովուրդն ցնոսա, ընդէ՞ զոր ասէր՝ ՝Լսանէ։

Քաղցր առ ամենեսեան։ Հեղ Տէր Յիսուս՝ զճառագայթս շնորհաց Հոգւոյդ ի Հոգի և ի միտս սորա՝ իմաստնանալ որպէս զերանելի առաքեալն։ Բայց Տէր՝ զիմաստս քոյին աստուածային մատենից առաջի մտաց սորա. զի դու հրամայեցեր՝ թէ Որ խնդրէ՝ առնու. խնդրեմք և մեք ամենայն բազմութեամբ հրեշտակագումար ատենիս և բարեխօսութեամբ տեառն տօնիս. մի՛ դարձուցաներ զերեսս քո յանարժանէս, և մի՛ արգելցես զշնորհս քո ի սմանէ. այլ ըստ անսուտ խոստմանն քո պարգևեա՛ յուսով խնդրողիս ի քէն զծագումն աստուածային գիտութեանց քոց, և լցո՛ զսա որպէս հրեղէն լեզուօք զընտրեալսն քո իսկզբանէ. զի ի մի նուագ բանից հանուրց և բազումք լուիցեն բանից սորա, և եկեսցեն ի գիտութիւն ճշմարտութեան, լինել փառաբանիչ ամենասուրբ Երրորդութեանդ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

ՅԱՆԿ ԵՆՈՒԱՆՑ

ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՄԵԾԱՑ,

ՈՐՔ ԵՏՈՒՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԻՒՐԵԱՆՑ ԿԱՐԳ ԸՍՏ ԿԱՐԳԻ ԵՒ ՅԱՋՈՐԴԱԲԱՐ ԶԾԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՒԱԶԱՆԻ ԻՍԿԶԲԱՆԷ ՄԻՆՉԵՒ ՅԱՒՈՒՐՍ ՄԵՐ.

Յ Աստուածպետական էութենէն ընկալեալ իններկի դասուց հրեղինացն քահանայապետութեանց զշնորհս իմաստութեան եւ զլոյս գիտութեան՝ ըստ բանից մեծին Դիոնեսեայ, սփռեն յընտրեալսն Աստուծոյ, որպէս երբեմն ի նահապետսն եւ ի մարգարէս, որ քարոզք եւ ուսուցիչք Աստուածայնոցն առաքէին պատգամաց առ որդիսն Իսրայելի: Եւ ի նորումս Հոգին սուրբ, զորմէ ասացն էակից նորին եւ փառակից Որդի առ աշակերտսն՝ թէ «Նա ուսուցանէ ձեզ զամենայն», էջ եւ հանդեաւ ի դասս առաքելոցն սրբոց. յորոց զնոյն ընկալեալ շնորհս վարդապետութեան եւ քարոզութեան բանին Աստուծոյ առաքելական Հարքն սուրբք եւ Հայրապետք եւ Վարդապետք ծաւալեցին յընդհանուր Եկեղեցիս Քրիստոսի, կատարողք լինելով հրամանի նորին Տեառն՝ թէ «Ուսուցէք նոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի»:

Ըստ սմին եւ Հայաստանեայցս առաքելական սուրբ Եկեղեցի անդստին յառաջնոց անտի Լուսաւորչացն մերոց ի Թադէոսէ եւ ի Բարթուղիմէոսէ առեալ զշնորհս քարոզութեան աւետարանին սրբոյ, աւանդեցին երանելւոյն Թէոփիլեայ որ ի Կեսարիա Կապադովկացւոց, եւ նորին աթոռակալ երանելին Ղեւոնդիոս աւանդեաց սրբոյ Հօրն մերում Գրիգորի Լուսաւորչի, եւ նա իւրումն աստուածընտիր յաջորդի սրբոյն Արիստակեայ. յորմէ եւ նորին օրինաւոր յաջորդացն ընկալեալ զնոյն իշխանութիւն հասուցին մինչեւ ի քաջ բարունապետն ազգիս ի մեծն Մեսրովպ, որ եւ ի Յունացն պատուեցաւ պատրիարքաց Եկեղեսիաստիկոս անուամբ, իբրու ծողովող բարձր քարոզութեամբ Բանին Աստուծոյ ի փարախ Քրիստոսական հօտին զցրուեալս ի միմեանց զորդիս Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Նորին աշակերտքն, էին որ համախումբ միաբանութեամբ, եւ էին եւս որք առանձինն եւ որիշ յիրերաց ընկալեալ զվարդապետութեանն աստիճան, փոխադրեցին զայն իւրեանցն աշակերտաց, եւ նորա այլոց ուղղափառ վարդապետաց ազգիս Հայոց մինչեւ ցմեր իսկ աւուրս: Եւ թէպէտ հաւաստեաւ անմարթ իցէ ստուգել՝ թէ ո արդեօք երիցագոյն յաշակերտս իցէ միոյ միոյ ի նոցունց, եւ կամ քանի՛ք ոմանք ի միոջէ անտի վարդապետէ մեծէ ընկալեալ զվարդապետութեանն գաւազան, եւ որո՛ց կամ որքանեա՛ց տուեալ իցեն զնոյն իշխանութիւն, մանաւանդ ի ժամանակս տեղափոխութեան Արարատեան Մայր Աթոռոյս ի զանազան կողմանս մերոյ աշխարհիս, եւս եւ յետ վերադարձի սորին ի բնիկս իւր սրբավայր ի սուրբ Էջմիածին, սակայն հայեցեալ ի զրչագիր ցուցակս անուանց վարդապետացն՝ որ գտանին ի Մաշտոցս ձեռնադրութեան, եւս եւ ի տպագրեալսն ի Կոստանդնուպոլիս, զորոց ակնարկեցարքն ի յառաջաբանի գրոցս, հարազատագոյն մեզ թուեցաւ կարգ ցուցակին տպագրելոյ ի մայրաքաղաքի անդ ի սկիզբն այսր դարու, ուստի եւ ըստ այնմ դասակարգեալ իջուցաք աստանօր մինչեւ ցայժմու վեհափառ Հայրապետս մեր Գէորգ Դ: Միայն թէ զաշակերտդ անուն ոչ ի դէպ համարեցաք կրկնել առ միում միում յանուանցն, զի մի կարծիս ընթերցողացն տայցեմք, որպէս եւ բազումք կարծեցին, որպէս թէ աշակերտս զնոսին անուանելով՝ զայն կամիցիմք ցուցանել՝ թէ արդարեւ անուանեալքն աշակերտք այսմ կամ այնմ մեծի վարդապետի՝ առ ոտս նորին աշակերտեալ ի մանկութենէ, եւ ի նմանէ առեալ իցեն համօրէն զամենայն ուսումն իւրեանց. նա զի յայտ իսկ է՝ զի աշակերտդ անուն ապաքէն զայս եւեթ ցուցանէ աստանօր, զի զվարդապետականն իշխանութիւն ընկալեալ է այս որ յիւրմէ մեծ վար-

դապետէն, եւ նորին աշակերտեալ է ուղղափառ վարդապետութեան: Եւ ահա ըստ այսոցիկ խորհրդածութեանց կարգեցաւ աստէն անուանականդ այդ ցուցակ Վարդապետաց, ոչ մի ինչ զոգցես առնելով փոփոխութիւն յանուանս նոցին եւ ի շարադասութիւնն:

Դարձեալ եւ զայս ինչ ի դէպ համարիմք յիշատակել աստանօր, զի հաստատուն իմն եւ իբրու կանոնական սովորութիւն էր երբեմն ի մերումս Եկեղեցւոջ, զի որ որ զԽայրապետն ունէր զաւազան վարդապետական, կարող էր եւ ունէր իշխանութիւն քարոզելոյ զբանն Աստուծոյ յամենայն ի վիճակս եւ յեկեղեցիս ազգիս մերոյ անխտիր ամենայն համարձակութեամբ. իսկ որ զՄասնաւորն եւեթ առեալ էր զիշխանութիւն՝ քարոզել կարող էր եւ նա, բայց հրամանաւ Եպիսկոպոսի կամ Առաջնորդի տեղեացն յորս պատահէր:

Տէր սուրբ Թադէոս առաքեալ.
,, Թէոփիլէ Եպիսկոպոս Կեսարիոյ Կապադովկացւոց.
,, Ղեւոնդիոս պատրիարք Կեսարիոյ.
,, Սուրբ Հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչ.
,, Արիստակէս.
,, Վրթանէս.
,, Յուսիկ.
,, Փառներսէհ.
,, Մեծն Ներսէս.
,, Խսահակ Պարթեւ.
,, Մեսրովպ Վարդապետ.
,, Մովսէս Քերթողահայր.
,, Դաւիթ անյաղթ փիլիսոփայ.
,, Եղնակ Կողբացի.
,, Մամբրէ Վերծանող.
,, Ղազար Փարպեցի.
,, Պօղոս.
,, Աբրահամ.
,, Յովհան.
,, Ներսէս Մեծոբեցի.
,, Յովհան Օձնեցի.
,, Վահրամ.
,, Ներսէս Կլայեցի.
,, Գրիգոր Տղայ.
,, Մխիթար Գօշ Գանձակեցի.
,, Յովհաննէս Վանական.
,, Վարդան Բարձրբերդցի.
Տէր Ներսէս.
,, Եսայի Նչեցի.
,, Յովհան Որոտնեցի.
,, Գրիգոր Տաթեւացի.
,, Յովհաննէս Արճիշեցի.
,, Դանիէլ Ձգնաւոր.
,, Յովհաննէս Համամաշէնցի.
,, Գրիգոր Մեռելայարոյց.
,, Թորոս.
,, Գրիգոր Տարոնացի.
,, Յովհաննէս Շիրակ.
,, Ղուկաս Կեղեցի.
,, Սրապիոն Ուռհայեցի, որ եղեւ Կաթուղիկոս ի սուրբ Էջմիածին.
,, Գրիգոր Կեսարացի.
,, Մովսէս Սիւնեցի, Կաթուղիկոս ի Ս. Էջմիածին.
,, Փիլիպպոս » » »
,, Յակոբ Ջուղայեցի » » »
,, Եղիազար Հռոմկլայեցի » » »
,, Նահապետ Ուռհայեցի » » »
,, Աղեքսանդր Ջուղայեցի » » »
,, Աստուածատուր Համատանցի » »
,, Կարապետ Ուլնեցի » » »
,, Աբրահամ Մշեցի » » »
,, Աբրահամ Կրետացի » » »
,, Ղազար Ջահկեցի » » »
,, Մինաս Ակնեցի » » »
,, Աղեքսանդր Կոստանդնուպոլսեցի » »
,, Յակոբ Շամախեցի » » »
,, Սիմէոն Երեւանցի » » »

Նորին աշակերտ Զաքարիա Արքեպիսկոպոս Կաղզուանցի, պատրիարք Կոստանդնուպոլսոյ.

Ի նորին երկոտասան ծեռնասուն աշակերտաց՝ Պօղոս Արքեպիսկոպոս Առաջնորդ Պրուսայի.

Նորին աշակերտ Ստեփանոս Արքեպիսկոպոս՝ Պրուսացի, Առաջնորդ Նիկոմիդեայ, ապա պատրիարք Կոստանդնուպոլսոյ.

Նորին ծեռնասուն աշակերտ Գէորգ Արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի, Առաջնորդ Պրուսայի, եւ Պատրիարք Կոստանդնուպոլսոյ, յամի Տեառնէն 1866 ընտրեալ ի համօրէն Հայաստանեայց եւ ամբարձեալ ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին. որ եւ կայ բազմեալ յաթոռ իշխանութեան իւրոյ. զոր շնորհեսցէ Տէր Աստուծ մերում ընդ երկայն աւուրս: